## Արձանագրություն հոտ. 1

## 2019-2020 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 27-Ի ՆԻՍՏԻ

Նիստը վարում էր ՀՊՄՀ Ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտոր Մ. Մելիք-Բախշյանը: Նիստին մասնակցում էին 22 հոգի՝ մ.գ.դ., պրոֆեսոր Ա. Թոփուզյանը, մ.գ.դ., պրոֆեսոր Լ. Ասատրյանը, մ.գ.դ., պրոֆեսոր Մ. Մանուկյանը, մ.գ.թ., դոցենտ Լ. Պողոսյանը, մ.գ.թ., դոցենտ Հ. Թադևոսյանը, մ.գ.թ., դոցենտ Ի. Բաբայանը, մ.գ.թ., դոցենտ Ս. Սիսյանը, մ.գ.թ., դոցենտ Գ. Աղուզումցյանը, մ.գ.թ., դոցենտ Լ. Նազարյանը, մ.գ.թ., դոցենտ Գ. Հարությունյանը, մ.գ.թ., դոցենտ Մ. Ասատրյանը, մ.գ.թ., դոցենտ Զ. Ասատրյանը, մ.գ.թ., դոցենտ Ա. Բաղդասարյանը, մ.գ.թ., դոցենտ Ա. Մանուկյանը, մ.գ.թ., դոցենտ Ա. Հակոբյանը, մ.գ.թ., դոցենտ Ն. Կարապետյանը, մ.գ.թ., դոցենտ Ս. Ջանիկյանը, մ.գ.թ., դոցենտ Մ. Գևորգյանը, մ.գ.թ., ասիստենտ Ն. Մարտիրոսյանը, մ.գ.թ., դասախոս Ն. Մարկոսյանը, մ.գ.թ., դասախոս Գ. Եգանյանը, մ.գ.թ., դասախոս Ա. Դալլաքյանը:

**ԼՍԵՑԻՆ** – Մանկավարժության ամբիոնի վարիչի թեկնածուի երաշխավորման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Լ. Ասատրյանը, Ն. Մարտիրոսյանը, Գ. Եգանյանը, Լ. Նազարյանը, Լ. Պողոսյանը, որոնք առաջարկեցին երաշխավորել և քվեարկության դնել Ա. Թոփուզյանի թեկնածությունը ամբիոնի վարիչի պաշտոնի համար:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Երաշխավորել Ա. Թոփուզյանի թեկնածությունը ՀՊՄՀ մանկավարժության ամբիոնի վարիչի համար և այն ներկայացնել գիտ. խորհուրդ:

Քվեարկության արդյունքները - Կողմ՝ 22, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԵԼԻՔ-ԲԱԽՇՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ

27.08.2019թ.

**Արձանագրություն թիվ 2**

**2019-2020 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 18-Ի ՆԻՍՏԻ**

**Օրակարգ**

1. 2019-2020 ուս. տարվա 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների փաթեթների հաստատման մասին:
2. 2019-2020 ուս.տարվա 1-ին կիսամյակի ամբիոնի աշխատանքային պլանի հաստատման մասին:
3. Մանկավարժական պրակտիկայի կազմակերպման ընթացքի մասին:

1. **ԼՍԵՑԻՆ** - 2019-2020 ուս. տարվա 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների փաթեթների հաստատման մասին:

**Ս. Ջանիկյան** – Զ. Ասատրյանի կազմած «Մանկավարժություն» առարկայի փաթեթը նախատեսված է «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության բակալավր 1-ին կուրսի համար: Դասընթացի նկարագիրը, թեմատիկ տրոհումը և դասախոսությունների փաթեթը համապատասխանում են ներկայացվող պահանջներին, թեմաները տրամաբանորեն փոխկապակցված են: Գործնական և սեմինար պարապմունքներում ձևավորվող կարողությունները համապատասխանում են ՄԿԾ վերջնարդյունքներին: Սակայն ունենք մի քանի նկատառում.

1. Թեմատիկ տրոհման և առարկայական նկարագրի մեջ օգտագործված գրականության ցանկը կարելի է վերանայել և ավելացնել վերջին տարիների գրականություն:
2. Դասընթացին համապատասխան ՄԿԾ վերջնարդյունքները նկարագրի մեջ ներկայացված չեն:
3. Առկա են տեխնիկական թերություններ:

Վերոնշյալ նկատառումները հեղինակն արդեն հաշվի է առել և շտկել, ուստի առաջարկում եմ փաթեթը հաստատել:

**Ա. Մանուկյան** – Ն. Կարապետյանի ներկայացրած «Մանկավարժություն» առարկայի փաթեթը նախատեսված է Կուլտուրայի ֆակուլտետի «Պարարվեստ» մասնագիտության բակալավր 1-ին կուրսի համար: Ծանոթանալով առարկայական փաթեթի բովանդակությանը, որը ներառում է՝ առարկայական նկարագիր, թեմատիկ տրոհում և դասախոսություններ, գտնում ենք, որ այն կազմված է պահանջված ձևաչափով, թեմաները բաշխված են համապատասխան ժամաքանակով, դասախոսությունների բովանդակությունն ու դասավանդման մեթոդների ընտրությունն ապահովում է ուսանողներին անհրաժեշտ գիտելիքների փոխանցման արդյունավետությունը, ինչը իր հերթին նպաստում է պահանջվող ելքային արդյունքների ձեռք բերմանը: Սակայն, հատկապես դասախոսությունների շարադրանքում նկատվել են բազմաթիվ քերականական և շարահյուսական սխալներ, բացթողումներ և տեխնիկական վրիպակներ, որոնք հեղինակն արդեն ուղղել է և ես առաջարկում եմ փաթեթը հաստատել:

**Լ. Ասատրյան** – Ս. Ջանիկյանի կազմած «Մանկավարժություն» առարկայի փաթեթը նախատեսված է «ՆԴ մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության բակալվր 1-ին կուրսի համար: Առարկայական նկարագիրը հիմնականում գրված է ըստ նկարագրի ձևակերպմանը ներկայացվող պահանջների, թեմատիկ տրոհումը համապատասխանում է առաջադրված պահանջներին: Սակայն կան որոշ առաջարկություններ՝

- Դասընթացի ուսուցման մեթոդները դարձնել առավել թիրախային,
- հիմնական և լրացուցիչ գրականության ցանկը վերանայել և ընտրել ավելի ժամանակակից աշխատություններ /թողնել 5-6 աղբյուր/:
- ցանկալի է դասախոսություններին կից ներկայացվող տեղեկատվական նյութերում սկզբնաղբյուրները վերանայել:

Առաջարկում եմ հաստատել փաթեթը:

**Գ. Հարությունյան** – Գ. Աղուզումցյանի մշակած «Մանկավարժություն» առարկայի փաթեթը նախատեսված է «Սոցիալական մանկավարժություն, սոցիալական աշխատանք, սոցիոլոգիա» մասնագիտությունների բակալավր 1-ին կուրսի համար:

Փաթեթը, ընդհանուր առմամբ, համապատասխանում է անհրաժեշտ բոլոր չափանիշներին: Դասախոսությունների և գործնական պարապմունքների քանակը համապատասխանում է ուսումնական պլանով առարկայի համար նախատեսված լսարանային ժամերին: Դասընթացի կրթական ելքային վերջնարդյունքները՝ բխում են դասընթացի նպատակից, գործնական աշխատանքները՝ ելքային վերջնարդյունքներից: Առարկայական նկարագիրը կազմված է նոր ձևաչափին համապատասխան: Առարկայական նկարագրում կրթական ելքային արդյունքների Մանկագիտական գիտելիք և իմացություն բաժնում շահեկան կլինի ավելացնել դաստիարակության թեմային առնչվող ևս մեկ կետ: Առարկայական նկարագրում նշված գրականության աղբյուրների մեծ մասը ժամանակակից գրականություն է: Գործնական աշխատանքների համար առանձնացված մեթոդները՝ սեմինար, բանավեճ, կլոր սեղան, աշխատանք խմբերով, հետազոտական աշխատանք, նախագիծ և այլն, նպաստում են առարկայի վերջնարդյունքներով նախատեսված հմտություններին և կարողություններին: Դասախոսությունների փաթեթում առկա են տեխնիկական վրիպակներ: Գ. Աղուզումցյանը կատարել է բոլոր անհրաժեշտ ուղղումները, ուստի առաջարկում եմ հաստատել «Մանկավարժություն» առարկայի փաթեթը:

**Ս. Միսյան** – Ա. Հովհաննիսյանի «Կրթության և մանկավարժական մտքի պատմություն» դասընթացի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության բակալավր 1-ին կուրսի համար: Դասընթացի լսարանային ընդհանուր ծավալը կազմում է 45 ժամ, որից 30 ժամը տեսական է, 15-ը՝ գործնական: Դասընթացի նպատակը, խնդիրները բխում են դասընթացի բովանդակությունից: Առարկայական նկարագիրը, թեմատիկ տրոհումը, 15 դասախոսություններն ու 7 գործնականներն իրենց բովանդակությամբ և կառուցվածքով համապատասխանում են ԱՈՒՄՓ ձևաչափի չափանիշներին, դասընթացի նպատակը, խնդիրները և վերջնարդյունքները բխում են միմյանցից, գրականությունը համապատասխանում է դասընթացի թեմատիկային, առարկայական թեմատիկ տրոհման մեջ ներկայացված դասավանդման և ուսումնառության մեթոդների կիրառումը և գործնական առաջադրանքների կատարումը ամբողջությամբ փակում են

նկարագրում ներկայացված դասընթացի կրթական վերջնարդյունքերը և տվյալ մասնագիտական ծրագրի կրթական ելքային արդյունքները: Գործնական աշխատանքները բազմաբնույթ են, ներառում են փոխներգործուն զրույց, խմբային աշխատանք, վեննի դիագրամ, աղյուսյակի, գծապատկերի կազմում, դերային խաղ, հնգյակի մեթոդ և այլ ինտերակտիվ մեթոդներ: Առաջարկվող տեղեկատվական նյութերը հրատարակված են 2012-2015թթ-ին: Առաջարկում եմ հաստատել «Կրթության և մանկավարժական մտքի պատմություն» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը:

**Ա. Հակոբյան** – Մ. Ասատրյանի «Մանկավարժություն» առարկայի փաթեթը նախատեսված է ֆիզիկա, տեխնոլոգիա և ձեռնարկչություն, մաթեմատիկա, ինֆորմատիկա բաժնի բակալավր 2-րդ կուրսի համար: Առարկայի ուսումնամեթոդական փաթեթը բաղկացած է ԱՈՒՄՓ-ի բովանդակությունը կազմող բոլոր բաղադրիչներից: Նկարագրում ներկայացված ժամաքանակը համապատասխանում է բակալավրիատի կրթական ծրագրին և արտացոլված է առարկայի թեմատիկ տրոհման մեջ: Առարկայական նկարագրում տեղ գտած կրթական վերջնարդյունքները համապատասխանում են վերոբերյալ մասնագիտության ծրագրի կրթական ելքային արդյունքներին, որոնք լուծվում են թեմատիկ տրոհման մեջ ներկայացված գործնական պարապմունքների ընթացքում: Գնահատման բաղադրիչները համապատասխանում են բակալավրիատի ոչ քննական առարկաների 2-րդ կուրսի համար նախատեսված գնահատման բաղադրիչներին: Թեմատիկ տրոհման մեջ ըստ շաբաթական ծանրաբեռնվածության ներկայացված է դասի տեսակը, դասավանդման մեթոդները, ուսումնառության առաջադրանքներն ու գնահատումը: Գործնական պարապմունքների ժամանակ ընտրված մեթոդներն ու առաջադրանքները ուղղված են լուծելու կրթական ելքային արդյունքները: Դասախոսության յուրաքանչյուր թեմայից հետո առկա են հետադարձ կապ ապահովող առաջադրանքներ, ինքնաստուգման հարցեր, հիմնական ու լրացուցիչ գրականություն: Առարկայի ուսումնամեթոդական փաթեթում ներկայացված է ուսանողների անհատական/ինքնուրույն աշխատանքի բովանդակությունը:

Ներկայացված ուսումնամեթոդական փաթեթը համապատասխանում է բակալավրիատի կրթական ծրագրի պահանջներին:

**Ա. Բաղդասարյան** – Լ. Ասատրյանի «Մանկավարժության պատմություն» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է Սկզբնական կրթության ֆակուլտետի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» բաժնի բակալավր 2-րդ կուրսի համար:

Առարկայի ուսումնամեթոդական փաթեթը բաղկացած է առարկայական նկարագրից, թեմատիկ տրոհումից, դասախոսություններից, գործնական/սեմինար պարապմունքների բաժնից, ուսանողների անհատական/ինքնուրույն աշխատանքի աղյուսակից: Առարկայական նկարագրում տեղ գտած կրթական վերջնարդյունքները համապատասխանում են ծրագրի կրթական ելքային արդյունքներին: Առարկայական նկարագրում ներկայացված է հիմնական և լրացուցիչ գրականություն, որը համապատասխանում է ԱՈՒՄՓ-ին ներկայացվող պահանջներին:

Գործնական պարապմունքների համար ընտրված առաջադրանքները ապահովում են կրթական ելքային արդյունքները:

Իր կառուցվածքով դասախոսությունների բաժինը համապատասխանում է ԱՈՒՄՓ-ին ներկայացվող պահանջներին: Այն կազմված է մոդուլներից և թեմաներից, որոնք լիովին համապատասխանում են թեմատիկ տրոհմանը: Մինչև դասախոսության տեքստը նշված են հիմնական հասկացություններն ու դասավանդման և ուսումնառության մեթոդները: «Մանկավարժության պատմություն» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը ամբողջական է և համապատասխանում է բակալավրիատի կրթական ծրագրի պահանջներին:

**Գ. Հակոբյան** – Ա. Բաղդասարյանի ներկայացրած «Մանկավարժություն» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է Գեղարվեստական կրթության ֆակուլտետի «Երաժշտական կրթություն, կերպարվեստ» բաժինների բակալավր 2-րդ կուրսի համար: Դասընթացի ուսումնամեթոդական փաթեթի բովանդակային բոլոր բաղադրիչներն ու նկարագրիչներն առկա են: Առարկայական նկարագիրը հիմնականում գրված է ըստ նկարագրի ձևակերպմանը ներկայացվող պահանջների: Սակայն դասընթացի նպատակի երկրորդ կետն առավել հստակ ձևակերպման կարիք

ունի, իսկ հիմնական և լրացուցիչ գրականության ցանկում առկա է կրկնվող ձեռնարկ։ Դասընթացի թեմատիկ տրոհումը ընդհանուր առմամբ համապատասխանում է առաջադրված պահանջներին։ Սակայն ցանկալի է դասախոսության թեմային կից ներկայացվող տեղեկատվական նյութերում սկզբնաղբյուրները վերանայել, սեմինար և գործնական պարապմունքներում թեմատիկ առաջադրանքներն ու մեթոդական հանձնարարականները թարմացնել։ Առաջարկում եմ նաև դասախոսությունների որոշ թեմաներ լրամշակել, հանձնարավող հիմնական և լրացուցիչ գրականությունը համապատասխանեցնել թեմատիկ տրոհմանը։ Ա. Բաղդասարյանը կատարել է բոլոր ներկայացված շտկումները, ուստի առաջարկում եմ հաստատել փաթեթը։

**Մ. Ասատրյան** – Մ. Գևորգյանի ներկայացրած «Մանկավարժություն» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է ՕԼ ֆակուլտետի «Ռուսաց լեզու և գրականություն» բաժնի բակալավր 2-րդ կուրսի համար։ Փաթեթը բաղկացած է ԱՌԻՄՓ-ի բովանդակությունը կազմող բոլոր բաղադրիչներից՝ առարկայական նկարագրից, թեմատիկ տրոհումից, դասախոսության նյութերից, պահանջվող գրականության ցանկից, գործնական և սեմինար պարապմունքների անցկացման մեթոդներից, ուսանողների անհատական ինքնուրույն աշխատանքի աղյուսակից։ Առարկայի դասախոսությունների թեմատիկայում հեղինակը հանգամանորեն ներկայացրել է մանկավարժի մասնագիտության ձևավորման պատմական նախադրյալները, մանկավարժի մասնագիտական գործառույթները և կոմպետենցիաները, մանկավարժության տեսական-մեթոդաբանական հիմունքները, ուսուցման գործընթացի էությունն ու կառուցվացքը, սկզբունքներն ու օրինաչափությունները, ուսուցման տեխնոլոգիաները, ուսուցման ավանդական և ժամանակակից մեթոդները, ուսուցման կազմակերպման ձևերը, սովորողների ուսումնական գործունեության արդյունքների վերահսկողությունն ու գնահատումը։ Առարկայական նկարագրում սահմանված կրթական վերջնարդյունքները համապատասխանում են ՄԿԾ-ի ելքային արդյունքներին, որոնք լուծվում են թեմատիկ տրոհման մեջ՝ գործնական պարապմունքների ընթացքում։ Թեմատիկ տրոհման մեջ ըստ շաբաթական ծանրաբեռնվածության ներկայացված է դասի տեսակը, դասավանդման մեթոդները,

առաջադրանքներն ու գնահատումը: Գործնական պարապմունքների համար ընտրված մեթոդներն ու առաջադրանքներն ուղղված են լուծելու կրթական ելքային արդյունքները և այդ բաժիններում ներկայացված է տվյալ մասնագիտության ծրագրի վերջնարդյունքների համապատասխան կետը: Դասախոսության յուրաքանչյուր թեմայից հետո առկա են հետադարձ կապն ապահովող առաջադրանքներ, ինքնաստուգման հարցեր, հիմնական ու լրացուցիչ գրականություն: Գրականության ցանկն արդիական է, դասախոսությունների նյութերը համապատասխանում են առաջադրված թեմաներին: Ուսումնամեթոդական փաթեթում կան համակարգչային վրիպակներ: Հեղինակի կողմից կազմած «Մանկավարժություն» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը համապատասխանում է բակալավրիատի կրթական ծրագրի պահանջներին:

**Գ. Հակոբյան** – Ն. Կարապետյանի մշակած «Մանկավարժություն» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է ԿՔԱ ֆակուլտետի բակալավր 2-րդ կուրսի համար: Առարկայական նկարագիրը գրված է ըստ նկարագրի ձևակերպմանը ներկայացվող պահանջների: Թեմատիկ տրոհումը համապատասխանում է առաջադրված պահանջներին: Սակայն կան որոշ նկատառումներ՝

- դասընթացի նպատակն առավել նպատակաուղղված ձևակերպման կարիք ունի,
- հիմնական և լրացուցիչ գրականության ցանկում պետք է ներառել 5-6-ական աղբյուր:
- Առաջարկվում է դասախոսությունների որոշ թեմաներ լրամշակել, առաջադրանքները վերանայել, հիմնական և լրացուցիչ գրականությունը համապատասխանեցնել թեմատիկ տրոհմանը:

Ն. Կարապետյանը կատարել է բոլոր անհրաժեշտ փոփոխությունները և առաջարկում եմ հաստատել «Մանկավարժություն» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը:

**Զ. Ասատրյան** – Գ. Հակոբյանի ներկայացրած «Մանկավարժություն» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է ԲՍ ֆակուլտետի բակալավր 2-րդ կուրսի համար: Դասախոսությունների նյութերը համապատասխանում են առաջադրված թեմաներին և թեմատիկ տրոհմանը: Ուսումնամեթոդական փաթեթում

նշված է դասախոսության տեքստի հիմնական հասկացությունները, դասավանդման և ուսումնառության մեթոդները: Յուրաքանչյուր թեմայից հետո առկա են հետադարձ կապ ապահովող առաջադրանքներ, ինքնաստուգման հարցեր, հիմնական և լրացուցիչ գրականություն:

Առարկայական նկարագրում տեղ գտած կրթական վերջնարդյունքները համապատասխանում են «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության կրթական ծրագրի ելքային արդյունքներին, որոնք լուծվում են թեմատիկ տրոհման մեջ ներկայացված գործնական պարապմունքների ընթացքում: Դասընթացի նպատակն է ապագա մանկավարժի մասնագիտություն ընտրած ուսանողների մոտ ձևավորել մանկավարժական գիտելիքների ամբողջական համակարգը, զարգացնել մանկավարժական մտածողությունը և մշակույթը, մասնագիտական կոմպետենցիաները և այլն: Հեղինակի կողմից կազմած առարկայի ուսումնամեթոդական փաթեթը համապատասխանում է բակալավրիատի կրթական ծրագրի պահանջներին:

**Ն. Կարապետյան** – Ա. Մանուկյանի մշակած «Մեդիակրթություն» առարկայի նկարագիրը, դասախոսությունների փաթեթը համապատասխանում են կրթական պահանջներին, թեմաները ներկայացված են հաջորդաբար և տրամաբանորեն փոխկապակցված: Մշակված են կրթական ելքային արդյունքները, նշված են ՄԿԾ վերջնարդյունքները: Սակայն դասընթացի նկարագրում անհրաժեշտ է տեղադրել գնահատման նոր բաղադրիչները: Գրականության ցանկը վերանայել ըստ պահանջների: Առաջարկում եմ հաստատել փաթեթը:

**Գ. Հակոբյան** – Ս. Ջանիկյան ներկայացրած «Մանկավարժություն» առարկայի փաթեթը նախատեսված է «Պատմություն» և «Հասարակագիտություն» մասնագիտությունների բակալավր 2-րդ կուրսի համար: Առարկայի ուսումնամեթոդական փաթեթի բովանդակային բոլոր բաղադրիչներն ու նկարագրիչներն առկա են: Առարկայական նկարագիրը հիմնականում գրված է ըստ նկարագրի ձևակերպմանը ներկայացվող պահանջների: Սակայն դասընթացի նպատակն առավել հստակ, նպատակաուղղված ձևակերպման կարիք ունի: Առաջարկում եմ նաև վերանայել հիմնական և լրացուցիչ գրականության ցանկը /թողնել 5-6 աղբյուր/:

Դասընթացի թեմատիկ տրոհումը համապատասխանում է առաջադրված պահանջներին։ Սակայն ցանկալի է դասախոսություններին կից ներկայացվող տեղեկատվական նյութերում սկզբնաղբյուրները վերանայել։
Ս. Ջանիկյանը կատարել է համապատասխան փոփոխությունները, ուստի առաջարկում եմ հաստատել փաթեթը։

**Հ. Թադևոսյան** – Գ. Եգանյանի ներկայացրած «Սոցիալական մանկավարժություն» առարկայի փաթեթը դասավանդվում է ԿՀՍ ֆակուլտետի «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության բակալավր 2-րդ կուրսում։ Փաթեթում ներառված թեմաները, դասախոսությունների և գործնական պարապմունքների բովանդակությունը համապատասխանում են դասընթացի նպատակին և ապահովում են վերջնարդյունքները։ Գրականության ցանկը ներառում է 2000թ.-ից հետո հրատարակված գրքեր, հրատարակված նոր հոդվածները ևս ընդգրկված են ցանկում։ Փաթեթն ամբողջական է և համապատասխանում է տրված ձևաչափին։

**Գ. Հարությունյան** – Ա. Հովհաննիսյանի մշակած «Մանկավարժական հաղորդակցում» առարկայի փաթեթը նախատեսված է «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության բակալավր 2-րդ կուրսի համար։ Փաթեթը, ընդհանուր առմամբ, համապատասխանում է անհրաժեշտ բոլոր չափանիշներին։ Դասախոսությունների և գործնական պարապմունքների քանակը համապատասխանում է ուսումնական պլանով առարկայի համար նախատեսված լսարանային ժամերին։ Դասընթացի կրթական ելքային վերջնարդյունքները բխում են դասընթացի նպատակից, գործնական աշխատանքները՝ ելքային վերջնարդյունքներից։ Առարկայական նկարագիրը կազմված է նոր ձևաչափին համապատասխան։ Նկարագրում կրթական ծրագրի /մասնագիտության մասնագրի/ վերջարդյունքները նշելիս ցանկալի է նշել նաև վերջնարդյունքների կոնկրետ թիվը /օրինակ՝ Ա1, Բ1, Գ1 և այլն/։ Առարկայական նկարագրում նշված գրականության աղբյուրների մեծ մասը ժամանակակից գրականություն է։ Դասավանդման մեթոդների մեջ առկա է դերային խաղ մեթոդի հաճախակի կրկնություն։ Առավել նպատակահարմար կլինի այն փոխարինել դասավանդման այլ մեթոդներով։ Առաջարկում եմ հաստատել փաթեթը։

**Ն. Կարապետյան –** Ա. Հակոբյանի մշակած «Էթնոմանկավարժություն» առարկայի փաթեթը նախատեսված է «Երաժշտական կրթություն, կերպարվեստ» մասնագիտությունների բակալավր 3-րդ կուրսի համար՝ որպես ընտրովի դասընթաց: Ներկայացվող դասընթացի նկարագիրը, թեմատիկ տրոհումը և դասախոսությունների փաթեթը համապատասխանում են կրթական պահանջներին, թեմաները ներկայացված են հաջորդաբար և տրամաբանորեն փոխկապակցված: Սակայն մեր կարծիքով անհրաժեշտ է վերանայել դասընթացի նկարագրում ներկայացված կրթական ելքային արդյունքները: Դրանք շատ ընդհանրական են և չեն բնութագրում էթնոմանկավարժություն դասընթացի առանցքային գաղափարները: Այդ պատճառով առկա է անհամապատասխանություն գործնական և սեմինար պարապմունքներում ձևավորվող կարողությունների, կրթական ելքային արդյունքների և ՄԿԾ վերջնարդյունքների հետ: Թեմատիկ տրոհման մեջ կարելի է վերանայել գրականության ցանկը: Առաջարկում եմ վերանայել փաթեթը:

**Ի. Բաբայան** - «Մասնագիտական կողմնորոշման հիմունքներ» առարկան, որը մշակել է Ա. Դալլաքյանը, դասավանդվում է ԿՀՍ ֆակուլտետի «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության բակալավր 3-րդ կուրսում: Ըստ ուսումնական պլանի նախատեսված է 3 գործնական աշխատանք, որոնցից 1-ինը swot վերլուծություն, 2-րդը՝ թրեյնինգ «Մասնագիտական մոտիվացիայի և ինքնորոշման ապահովում» թեմայով և 3-րդ՝ դերային խաղ, նախագիծ: ԱՈՒՄՓ-ը բովանդակային և կառուցվածքային առումով համապատասխանում է ներկայացված պահանջներին:

**Գ. Եգանյան** – Հ. Թադևոսյանի մշակած «Սոցիալական մանկավարժություն» դասընթացի փաթեթը նախատեսված է ԿՀՍ ֆակուլտետի «Սոցիալական մանկավարժություն» բաժնի բակալավր 3-րդ կուրսի համար: Դասընթացի կրթական ելքային արդյունքները, որոնք բխում են մասնագիտության մասնագրից ձևավորվում են գործնական և տեսական դասաժամերի ընթացքում:

Ուսումնամեթոդական փաթեթը ներկայացված է պահանջվող ձևաչափին համապատասխան: Այն բովանդակում է առարկայական նկարագիրը, թեմատիկ տրոհումը, դասախոսության թեմաները յուրաքանչյուրը հիմնական գրականության

ցանկով, դասավանդման ու ուսումնառության մեթոդներով, ինքնաստուգման հարցերով, ինչպես նաև գործնական պարապմունքներ:

Գրականության ցանկն արդիական է, դասախոսությունների բովանդակությունը համապատասխանում է առաջադրված թեմաներին:

Դասախոսության թեմատիկայում հատկանշական է հատկապես «Մանկատներում երեխաների խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները» խորագրով թեման իր դիպուկ և ուղորդիչ բովանդակությամբ: Անհրաժեշտ և ուսանողների համար տեղին է նաև Հ. Թադևոսյանի հեղինակությամբ մշակված ռեֆերատի, թղթապանակի և ընթացիկ՝ գործնական հանձնարարականների գնահատման չափանիշները: Սակայն ցանկանում եմ նշել, որ Հ. Թադևոսյանը դասախոսության թեմաներից հետո ներկայացրել է միայն ինքնաստուգման հարցեր, սակայն համաձայն դասընթացին ներկայացվող պահանջների պետք է առանձին լինեն նաև առաջադրանքներ, չնայած որ ինքնաստուգման հարցերը ունեն գործնական բնույթ, առաջարկում եմ պարզապես տարբերակել: Թեմատիկ տրոհման մեջ գործնական աշխատանքների (2 բանավեճ, 2 սեմինար, նախագծային աշխատանք, պլանի կազմում) գնահատման բաղադրիչները ներկայացված չեն, կարելի է ավելացնել համաձայն ներկայացված պահանջների:

«Սոցիալական մանկավարժություն» դասընթացը համապատասխանում է ՀՊՄՀ-ի դասընթացի կառուցման ներկայացվող պահանջներին:

**Ա. Հովհաննիսյան** – Գ. Հարությունյանի մշակած «Ընտանիքի սոցիալ-մանկավարժական աջակցություն» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության բակալավր 3-րդ կուրսի համար: Փաթեթը համապատասխանում է անհրաժեշտ բոլոր չափանիշներին: Դասընթացի համար հատկացված է 26 դասախոսության և 13 գործնական ժամեր: Դասախոսությունների և գործնական պարապմունքների քանակը համապատասխանում է ուսումնական պլանով առարկայի համար նախատեսված լսարանային ժամերին: Առարկայական նկարագրում ներկայացված դասընթացի նպատակները, կրթական ելքային արդյունքները և կրթական ծրագրի

վերջնարդյունքները փոխկապակցված են։ Դասընթացի կրթական ելքային վերջնարդյունքները՝ բխում են դասընթացի նպատակից, իսկ գործնական աշխատանքները բխում են ելքային վերջնարդյունքներից։ Առարկայական նկարագրում նշված գրականության աղբյուրների մեծ մասը ժամանակակից գրականություն է։ Դասընթացն աչքի է ընկնում գործնական աշխատանքների համար նախատեսված մեթոդների բազմազանությամբ՝ սեմինար, սոցիալ-մանկավարժական հարցում /հարցաթերթ/, ինքնավերլուծություն, դերային խաղ, կլոր սեղան, բանավեճ, ֆիլմի/տեսանյութի դիտում և քննարկում և այլն։ Դասախոսությունների փաթեթում յուրաքանչյուր դասախոսությունից հետո առաջադրանքները և ինքնաստուգման հարցերը տրված են միասին՝ «Առաջադրանքներ և ինքնաստուգման հարցեր» վերնագրի ներքո, շահեկան կլիներ առանձնացնել՝ սկզբում նշելով առաջադրանքները, այնուհետև՝ ինքնաստուգման հարցերը։ Դասախոսությունների փաթեթում առկա են տեխնիկական վրիպակներ։ Առաջարկում եմ հաստատել փաթեթը։

**Գ. Հարությունյան** – Ա. Հովհաննիսյանի մշակած «Սոցիալական մանկավարժության պատմություն» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության բակալավր 3-րդ կուրսի համար։ Փաթեթը համապատասխանում է անհրաժեշտ բոլոր չափանիշներին։ Դասընթացի կրթական ելքային վերջնարդյունքները բխում են դասընթացի նպատակից, գործնական աշխատանքները՝ ելքային վերջնարդյունքներից։ Առարկայական նկարագրի գնահատման բաղադրիչներ բաժնում բացակայում է բաղադրիչ 5-ը՝ քննությունը, սակայն գնահատման չափանիշների մեջ նշված են նաև քննության գնահատման բաղադրիչները։ Այս հատվածը հստակեցման կարիք ունի։ Առարկայական նկարագրում նշված գրականության աղբյուրների մեծ մասը ժամանակակից գրականություն է։ Առաջարկում եմ հաստատել փաթեթը։

**Հ. Թադևոսյան** – Ն. Մարկոսյանի ներկայացրած «Սոցիալական մանկավարժի աշխատանքի մեթոդիկա և տեխնոլոգիա» առարկայի փաթեթը նախատեսված է ԿՀՍ ֆակուլտետի «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության բակալավր 2-րդ կուրսի համար։ Դասախոսությունների և գործնական պարապմունքների քանակը

համապատասխանում է ուսումնական պլանով առարկայի համար նախատեսված լսարանային ժամերին: Գնահատման յուրաքանչյուր բաղադրիչի համար հստակ տրված են չափանիշներ, որոնք հեշտացնում են գնահատումը: Գրականության ցանկը ամբողջական է: Տրված գործնական աշխատանքները և դասախոսությունների վերջում ներկայացված առաջադրանքներն ապահովում են ակնկալվող վերջնարդյունքները: Փաթեթն ամբողջական է, ուստի առաջարկում եմ հաստատել:

**Գ. Եգանյան** – Ն. Մարտիրոսյանի մշակած «Արտադասարանական դաստիարակչական տեխնոլոգիաներ» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է ԿՀՍ ֆակուլտետի բակալավր 3-րդ կուրսի համար՝ որպես ընտրովի դասընթաց: Դասընթացի կրթական ելքային արդյունքները, որոնք բխում են մասնագիտության մասնագրից ձևավորվում են ինչպես գործնական (նախագծային աշխատանք, սեմինար, խմբային աշխատանք), այնպես էլ տեսական դասաժամերի ընթացքում՝ դասախոսի կողմից ճիշտ ընտրված փոխներգործուն մեթոդների կիրառմամբ:

Ուսումնամեթոդական փաթեթը ներկայացված է պահանջվող ձևաչափին համապատասխան: Այն բովանդակում է առարկայական նկարագիրը, թեմատիկ տրոհումը, դասախոսության 10 թեմա՝ յուրաքանչյուրը հիմնական գրականության ցանկով, դասավանդման ու ուսումնառության մեթոդներով, առաջադրանքներով և ինքնաստուգման հարցերով, ինչպես նաև գործնական պարապմունքներ:

Գրականության ցանկն արդիական է, դասախոսությունների բովանդակությունը համապատասխանում է առաջադրված թեմաներին:

Ն. Մարտիրոսյանը դասընթացի շրջանակում ներկայացրել է արտադասարանական դաստիարակության նպատակը, խնդիրները, սկզբունքները, սոցիալական մանկավարժի գործառույթները՝ դպրոցականների արտադասարանական դաստիարակության գործընթացում, արտադասարանական դաստիարակության պլանավորումը կրտսեր դպրոցում, սոցիալ-կողմնորոշիչ, բարոյադաստիարակչական, գեղագիտական, բնապահպանական, մարմնամարզական դաստիարակչական միջոցառումները որպես արտադասարանական դաստիարակության տեխնոլոգիաներ:

Դասախոսության թեմատիկայում հատկանշական են հատկապես «Ուսուցչի օգնականը դպրոցում» և «Ներառական կրթության նոր մոտեցումները ՀՀ-ում» խորագրերով թեմաները իրենց բովանդակությամբ՝ օրեսդրական նորմատիվների վերլուծության համտեքստում:

Յուրաքանչյուր դասախոսության վերջում Մարտիրոսյանը ներկայացրել է առանձին քննարկման հարցեր, ինքնաստուգման հարցեր և առաջադրանքներ, ի դեպ դրանք բավականին մեծաթիվ են, յուրաքանչյուրը 8-ից 10: Առաջարկում եմ դրանք կրճատել. թողնել միայն առաջադրանքները՝ դրանք ներկայացնել գործնական բովանդակությամբ և ինքնաստուգման հարցերը՝ տեսական-վերարտադրողական: Ուսումնամեթոդական փաթեթում կան տեխնիկական վրիպակներ, բացթողումներ:

«Արտադասարանական դաստիարակչական տեխնոլոգիաներ» ընտրովի դասընթացը համապատասխանում է ՀՊՄՀ-ի դաընթացի կառուցման ներկայացվող պահանջներին:

**Լ. Ասատրյան** – Ս. Մինասյանի ներկայացրած «Գործնական մանկավարժություն» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա, ռուսաց լեզու» մասնագիտության բակալավր 4-րդ կուրսի համար: Առարկայական նկարագիրը չի համապատասխանում նկարագրի ձևակերպմանը ներկայացվող պահանջներին: Մեր նկատառումները հետևյալն են՝

- Դասընթացում շեշտել ժամանակակից ուսուցման մեթոդները և տեխնոլոգիաները՝ դրանք դարձնելով առավել թիրախային, քանի որ ներկայացված նկարագրում օգտագործված է միայն հարց ու պատասխանի մեթոդը:
- Առաջադրանքները ձևակերպել ըստ թեմայի բովանդակության, այլ ոչ թե նույն թեմային չհամապատասխանող ինչ որ մեջբերում, օրինակ՝ Ուշինսկու կամ Պոդլասիի խոսքերը բոլոր թեմաների դիմաց դնել:
- Ցանկալի է դասախոսություններին կից ներկայացվող տեղեկատվական նյութերում սկզբնաղբյուրները վերանայել:

Առաջարկում եմ վերանայել փաթեթը:

**Լ. Նազարյան –** Ն. Մարկոսյանի մշակած «Ժամանակակից սոցիալ-մանկավարժական տեսություններ» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է «Սոցիալական մանկավարժություն» բակալավր 4-րդ կուրսի համար:

Դասընթացի նպատակը բխում է սոցիալական մանկավարժի մասնագիտական պատրաստման տրամաբանությունից և համարժեք է անհրաժեշտ որակավորմամբ մասնագետի թողարկման տեսանկյունից:

Դասընթացի կրթական ելքային արդյունքները իրական են, գործնականում ձևավորելի, բխում են դասընթացի նպատակից, բովանդակությունից: Տվյալ ելքային արդյունքները ծածկում են ՄԿԾ-ի և մասնագիտական վերջնարդյունքների իրենց բաժինները:

**Առաջարկություններ.**

Գործնական աշխատանքներում ցանկալի կլիներ նշել դրանց տեսակը: Առկա են գործնական դասերի խորագրերը, մեթոդները, առաջադրանքները, ցանկալի կլիներ դրանք ամբողջացնել նշելով դրանց կազմակերպման ձևը:

Առաջարկում եմ հաստատել փաթեթը:

**Լ. Պողոսյան –** Լ. Նազարյանի մշակած «Ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաներ» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության բակալավր 4-րդ կուրսի համար:

Առարկայական նկարագիրը կազմված է նոր պահանջներին համապատասխան:

Առարկայի բովանդակությունը համապատասխանում է ինչպես մասնագիտության պահանջներին, այնպես էլ ներկայացված կրթական վերջնարդյունքներին:

Դասախոսությունները որպես կանոն ինտերակտիվ բնույթի են, ներկայացված են նաև հետաքրքիր առաջադրանքներ, որոնք միտված են վերջնարդյունքների ձևավորմանը:

Գրականության ցանկը նոր է:

**Առաջարկություն.**

Նկարագրում որոշ տեղերում տառերի տեսակը յունիկոդ չի, ինչը ընթերնելի չի լինի և խնդիր կառաջացնի էլեկտրոնային հարթակում:

Առաջարկում եմ հաստատել փաթեթը:

**Ա. Դալլաքյան** – Գ. Աղուզումցյանի մշակած «Ազատ ժամանցի կազմակերպման մեթոդիկա» առարկան նախատեսված է «Սոցիալական մանկավարժություն» և «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության ՄԿԾ-ի առաջին կուրսի համար: Առարկայի ուսումնամեթոդական փաթեթը կառուցվածքային առումով համապատասխանում է ՀՊՄՀ-ի Կրթության որակի վարչության կողմից տրված ԱՈՒՄՓ ձևաչափին:

Ուսումնամեթոդական փաթեթում համապատասխան ներկայացված ձևաչափի հերթական հաջորդականությամբ տեղադրված են առարկայական նկարագիրը, դասախոսությունները և գործնական աշխատանքներն իրենց առաջադրանքներով, քննարկման և ինքնաստուգման հարցերով և գրականության ցանկով:

Ուզում եմ ընդգծել այն հանգամանքը, որ հեղինակը փաթեթը ստեղծելիս ,հաշվի է առել «Սոցիալական մանկավարժություն» և «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտությունների առանձնահատկությունները՝ առաջադրանքների բովանդակությունը դարձնելով թիրախային, որոնք հիմնականում միտված են ձևավորելու համապատասխան մասնագիտական կոմպետենցիաներ:

«Ազատ ժամանցի կազմակերպման մեթոդիկա» առարկայի ուսումնամեթոդական փաթեթն կատարելագործելու առումով ունեմ մի քանի առաջարկություններ՝

- կարելի է դասախոսություններում կամ գործնական աշխատանքի միջոցով ուսումնասիրել մեծահասակների ոչ ֆորմալ կրթությունը ՀՀ-ում՝ մասնավորապես անդրադառնալ թանգարանային կրթության մոդելին, գիտական տուրիզմի կազմակերպման և իրականացման ձևերին՝ որպես մեծահասակների ազատ ժամանցի կազմակերպման յուրօրինակ մոդելի:

«Ազատ ժամանցի կազմակերպման մեթոդիկա» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը կարելի է ներկայացնել երաշխավորության էլեկտրոնային հարթակում տեղադրելու համար:

**Լ. Պողոսյան** - «Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է գրեթե բոլոր

ֆակուլտետներում դասավանդվելու համար: Փաթեթը մշակել են Լ. Պողոսյանը, Ս. Սիսյանը, Ի. Բաբայանը միասին:

Դասընթացի առարկայական նկարագիրը կազմված է նոր պահանջներին համապատասխան: Բովանդակությունը համապատասխանում է ինչպես մասնագիտությունների պահանջներին, այնպես էլ ներկայացված կրթական վերջնարդյունքներին:

Դասախոսությունները որպես կանոն ինտերակտիվ բնույթի են, ներկայացված են նաև հետաքրքիր առաջադրանքներ, որոնք միտված են վերջնարդյունքների ձևավորմանը:

Գրականության ցանկը նոր է:

**Առաջարկություն**.

Առաջադրանքներում ավելացնել այն հետազոտական մեթոդների հետ տարվող աշխատանքները, որոնք համապատասխանում են տվյալ ոլորտին:

Առաջարկում եմ հաստատել փաթեթը:

**Ի. Բաբայան** - «Մանկավարժական դիագնոստիկա» առարկան դասավանդվում է ՍԿ ֆակուլտետի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության մագիստրատուրա 1-ին կուրսում որպես ընտրովի դասընթաց: Հեղինակը՝ Գ. Եգանյանը, կարողացել է նախագծել և մշակել բավականին գրագետ առարկայական նկարագիր:

Կարծում եմ էսսե գրել հանձնարարությունը լուրջ դժվարություն է ներկայացնում ուսուցման տարբեր փուլերում: Դժվար է նաև «Մշակեք անձի սոցիալական զարգացման մակարդակի դիագնոստիկ մեթոդների և մեթոդիկաների արդյունավետության պայմաններ» առաջադրանքը:

Գրականության ցանկը կարելի է կրճատել:

Կարելի է ինտեգրված դաս նախագծել մանկավարժական կանխատեսում դասավանդող դասախոսների հետ:

Առաջարկում եմ հաստատել առարկայական նկարագիրը և փաթեթը:

**Ն. Մարկոսյան** - Հ. Թադևոսյանի «Ծերերի խնամքի կազմակերպման սոցիալ-մանկավարժական ապահովում» առարկայի փաթեթը նախատեսված է «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության մագիստրատուրա 1-ին կուրսի համար:

Փաթեթը, ընդհանուր առմամբ, համապատասխանում է անհրաժեշտ բոլոր չափանիշներին: Դասախոսությունների և գործնական պարապմունքների քանակը համապատասխանում է ուսումնական պլանով առարկայի համար նախատեսված լսարանային ժամերին: Դասընթացի խնդիրները համապատասխանում և բխում են դասընթացի նպատակից, կրթական ելքային վերջնարդյունքները՝ դասընթացի խնդիրներից, իսկ գործնական աշխատանքները՝ ելքային վերջնարդյունքներից:

Գնահատման յուրաքանչյուր բաղադրիչի համար հստակ տրված են չափանիշներ, որոնք հիմք ընդունելով գնահատումը կարելի է իրականացնել ավելի հեշտ ու օբյեկտիվ:

Ութ գործնական ժամերից յուրաքանչյուրի համար հեղինակը նախատեսել է հետևյալ աշխատանքները՝ սեմինար, տեսանյութերի դիտում և քննարկում, նախագծի կառուցում և խմբային աշխատանք: Կարծում ենք մեկ դասի ժամանակ հնարավոր չէ և՛ անցկացնել սեմինար, և՛ մոդելավորել, և՛ նախագիծ կառուցել, և՛ տեսանյութ դիտել ու քննարկել: Կարելի է ընտրել դրանցից մեկը կամ երկուսը: Առաջարկում եմ հաստատել փաթեթը:

**Լ. Պողոսյան** - «Մանկավարժական մարդաբանություն» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է գրեթե բոլոր ֆակուլտետներում դասավանդվելու համար: Առարկայական նկարագիրը կազմված է նոր պահանջներին համապատասխան: Առարկայի բովանդակությունը համապատասխանում է ինչպես մասնագիտությունների պահանջներին, այնպես էլ ներկայացված կրթական վերջնարդյունքներին: Գրականության ցանկը նոր է:

**Առաջարկություն.**

Գործնական աշխատանքները համապատասխանեցնել մասնագիտության առանձնահատկություններին:

Առաջարկում եմ հաստատել փաթեթը:

**Ս. Միսյան** - «Բարձրագույն և մասնագիտական դպրոցի մանկավարժություն» դասընթացը նախատեսված է Օտար լեզուների ֆակուլտետի մագիստրատուրա 2-րդ կուրսի 1-ին կիսամյակում դասավանդելու համար: Դասընթացի լսարանային ընդհանուր ծավալը կազմում է 24 ժամ, որից 18 ժամը տեսական է, 6-ը՝ գործնական: Դասընթացն ավարտվում է ստուգարքով:

Դասընթացի նպատակը, խնդիրները բխում են դասընթացի բովանդակությունից: Առարկայական թեմատիկ տրոհման մեջ ներկայացված դասավանդման և ուսումնառության մեթոդների կիրառումը և գործնական առաջադրանքների կատարումը ամբողջությամբ փակում է նկարագրում ներկայացված դասընթացի կրթական վերջնարդյունքերը և տվյալ մասնագիտական ծրագրի կրթական ելքային արդյունքները: Գրականության ցանկն ընդգրկում է 2012-2018թթ. արդիական գրականություն, ինտերնետային աղբյուրներ և տեսանյութերի հասցեներ՝ հայկական boon.am կրթական պորտալից բարձրագույն կրթության հիմնախնդիրների շուրջ:

Դասախոսության ժամանակ ստացված գիտելիքները ամրապնդվում են գործնականների դասերին և ապահովում են կրթական ելքային վերջնարդյունքները: Առաջադրանքները ստեղծագործական բնույթի են, դրդում են ուսանողին մտածել, վերլուծել, համադրել և ինքնուրույն սեփական կարծիք ձևակերպել ու ձևավորել:

Առանձնացված են արտալսարանային ինքնուրույն 5 թեմատիկ աշխատանքներ, որոնք լսարանային դասախոսության կամ գործնականների շարունակությունն են և հստակ նշված են և՛ առարկայական տրոհման մեջ, և՛ դասախոսությունների փաթեթում:

Առաջարկում եմ հաստատել փաթեթը:

**Ա. Հովհաննիսյան** – Ի. Բաբայանի ներկայացրած «Մանկավարժական մշակութաբանություն» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության մագիստրատուրա 2-րդ կուրսի համար: Ընդհանուր առմամբ բավականաչափ աշխատանք է կատարված: Դասախոսությունների բովանդակային հատվածում ներկայացված են հարուստ նյութեր, որոնք համապատասխանում են ՄԿԾ-ի պահանջներին: Ներկայացված է ժամանակային և բովանդակային առումով նորագույն հարուստ գրականություն. նույնիսկ շատ է պահանջվածից և կարելի է կրճատել:

Չնսեմացնելով կատարված հսկայական աշխատանքը, այնուամենայնիվ ուզում եմ նշել որոշ բացթողումներ, որոնց շտկման դեպքում ԱՈՒՄՓ-ը ավելի ամբողջական կդառնա:

1. Փաթեթում՝ դասախոսություններից հետո ներկայացված հարցերը վերաձևակերպման կարիք ունեն: /օրինակ՝ Ինչպիսի՞ իմաստ եք դնում մշակույթ հասկացության մեջ/

2. Դասախոսությունները բավականին երկար են, կարելի է կրճատել:

Առաջարկում եմ հաստատել փաթեթը:

**Ն. Մարտիրոսյան** – Ա. Դալլաքյանի «Տարրական դպրոցի ուսուցչի մասնագիտական զարգացման հիմունքներ» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը կազմված է ըստ սահմանված ձևանմուշի և չափանիշների: Փաթեթը կազմված է բովանդակությունից, առարկայական նկարագրից, դասախոսության նյութերից, պահանջվող գրականության ցանկից, գործնական, սեմինար պարապմունքների անցկացման մեթոդներից, առաջադրանքներից, ինքնաստուգման հարցերից: Գրականության ցանկն արդիական է, դասախոսությունների նյութերը համապատասխանում են առաջադրված թեմաներին: Հեղինակը հանգամանորեն ներկայացրել է տարրական դպրոցի ուսուցչին ներկայացվող մասնագիտական և անձնային պահանջները, նրա մասնագիտական զարգացման առանձնահատկությունները, «Աքմեոլոգիան»՝ որպես գիտություն ուսուցչի զարգացման մասին, ապագա ուսուցիչների մասնագիտական կոմպետենտության ձևավորման մանկավարժական պայմանները բուհում, ուսուցիչների մասնագիտական զարգացման անդրագոգիկական մոտեցումները: Ա. Դալլաքյանն ուսումնամեթոդական փաթեթում անդրադարձել է նաև տարրական դպրոցի ուսուցչի մասնագիտական զարգացմանը՝ շարունակական կրթության միջոցով:

Ուսումնամեթոդական փաթեթում կան վրիպակներ, բացթողումներ:

Փաթեթն ամբողջական է, ուստի առաջարկում եմ հաստատել:

**Գ. Աղուզումցյան** – Լ. Պողոսյանի և Ա. Դալլաքյանի ներկայացրած «Անդրագոգիկա» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է «Սոցիալական մանկավարժություն» և «Երաժշտական կրթություն, կերպարվեստ» մասնագիտությունների մագիստրատուրա 2-րդ կուրսի համար: Առարկայական նկարագիրը ներկայացված է պահանջվող ձևաչափով: Դասընթացի առարկայական

նկարագրի թեմաները, դասախոսությունները և գործնականների քանակը համապատասխանում են ուսումնական պլանով նախատեսված ժամաքանակներին: Շաբաթական ժամերով ներկայացված են բոլոր թեմաները: Դասընթացի նպատակը, խնդիրները ու վերջնարդյունքները բխում են միմյանցից և համապատասխանում բովանդակությանը:

Ներկայացված 3 գործնական աշխատանքների մեթոդներն են՝ նախագծային աշխատանք, PP, մոդելավորում, թրեյնինգ:

Փաթեթի վերաբերյալ ունենք որոշ դիտարկումներ.

1. Դասընթացի նպատակը հստակեցման կարիք ունի,
2. Որոշ դասախոսությունների սկզբում կան հիմնական հասկացությունները, սակայն չկան առանցքային հարցերը (դաս. №3, №8, №9, №10):
3. Դասախոսությունների վերջում տրված չեն հաջորդ դասախոսության համար տրվելիք առաջադրանքները:

Ուսումնամեթոդական փաթեթը համապատասխանում է վերջինիս ներկայացվող պահանջներին, ուստի, երաշխավորում ենք տեղադրել հարթակում:

**Լ. Նազարյան** – Գ. Եգանյանի ներկայացրած «Մանկավարժական կոնֆլիկտաբանություն» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության մագիստրատուրա 2-րդ կուսի համար: Դասընթացի նպատակը բխում է սոցիալական մանկավարժի մասնագիտական պատրաստման տրամաբանությունից և համարժեք է անհրաժեշտ որակավորմամբ մասնագետի թողարկման տեսանկյունից:

Դասընթացի կրթական ելքային արդյունքները իրական են, գործնականում ձևավորելի, բխում են դասընթացի նպատակից, բովանդակությունից: Տվյալ ելքային արդյունքները ծածկում են ՄԿԾ-ի և մասնագիտական վերջնարդյունքների իրենց բաժինները:

Ներկայացված դասընթացի գնահատումը բավարար է վերջնարդյունքային մոտեցման ապահովման տեսանկյունից: Տարբերակված է տեսական և գործնական դասերի գնահատման գործիքակազմը: Առաջարկում եմ հաստատել փաթեթը:

**Լ. Նազարյան** – Հ. Թադևոսյանի մշակած «Սոցիալ-մանկավարժական խորհրդատվության կազմակերպում» ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության մագիստրատուրա 2-րդ կուրսի համար:

Դասընթացի կրթական ելքային արդյունքները իրական են, գործնականում ձևավորելի, բխում են դասընթացի նպատակից, բովանդակությունից:

Ներկայացված է դասընթացի վերջնարդյունքների և ընթացիկ ձեռք բերումների գնահատման հստակ համակարգ:

**Առաջարկություններ.**

Գործնական աշխատանքներից երկուսը նշված է որպես սեմինար, սակայն մեթոդներ են ընտրված ինտերակտիվ քննարկումը, դերային խաղը, նախագծումը: Կարծում եմ անհրաժեշտ է վերանայել «սեմինարը» որպես գործնական աշխատանքի կազմակերպման ձև: Առաջարկում եմ հաստատել, սակայն վերանայել գործնական աշխատանքները՝ էլ. հարթակում տեղադրելուց առաջ:

**Ն. Մարկոսյան** - Հ. Թադևոսյանի մշակած «Սոցիալ-մանկավարժական գործունեության առանձնահատկությունները հատուկ և առողջապահական հիմնարկներում» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության մագիստրատուրա 2-րդ կուրսի համար: Փաթեթը, ընդհանուր առմամբ, համապատասխանում է անհրաժեշտ բոլոր չափանիշներին: Դասընթացի խնդիրները համապատասխանում և բխում են դասընթացի նպատակից, կրթական ելքային վերջնարդյունքները՝ դասընթացի խնդիրներից, իսկ գործնական աշխատանքները՝ ելքային վերջնարդյունքներից:

Գնահատման յուրաքանչյուր բաղադրիչի համար հստակ տրված են չափանիշներ, որոնք հիմք ընդունելով գնահատումը կարելի է իրականացնել ավելի հեշտ ու օբյեկտիվ:

Դասընթացի համար հատկացված է 24 դասախոսության և 12 գործնական ժամեր: Գործնական ժամերից յուրաքանչյուրի համար հեղինակը նախատեսել է հետևյալ աշխատանքները՝ սեմինար, տեսանյութերի դիտում և քննարկում, մոդելավորում, նախագծի կառուցում և խմբային աշխատանք: Կարծում ենք մեկ դասի ժամանակ

հնարավոր չէ և՛ անցկացնել սեմինար, և՛ մոդելավորել, և՛ նախագիծ կառուցել, և՛ տեսանյութ դիտել ու քննարկել: Կարելի է ընտրել դրանցից մեկը կամ երկուսը:

Առարկայական նկարագրի ուսումնառության առաջադրանքների բաժինը պարունակում է միևնույն առաջադրանքը: Այն է՝ կարդալ դասախոսությունների փաթեթի հաջորդ թեման և հանձնարարված գրականության ցանկից մշակել թեմայի վերաբերյալ լրացուցիչ ուսումնական նյութ: Մենք կարծում ենք առավել նպատակահարմար կլիներ այդ բաժնում տեղադրել յուրաքանչյուր թեմային համապատասխան կոնկրետ առաջադրանքներ և հանձնարարականներ:

Առաջարկում եմ հաստատել փաթեթը:

**Գ. Եգանյան** – Լ. Նազարյանի ներկայացրած «Մանկավարժական կոնֆլիկտաբանություն» առարկայի փաթեթը նախատեսված է Կուլտուրայի ֆակուլտետի Պարարվեստ բաժնի մագիստրատուրա 2-րդ կուրսի համար: Դասընթացի կրթական ելքային արդյունքները, որոնք բխում են մասնագիտության մասնագրից ձևավորվում են ինչպես գործնական (Case Study, իրավիճակային խնդիրների լուծում, խմբային աշխատանք՝ քարտեզագրում, պաստառագրում, դիագնոստիկ ուսումնասիրություն), այնպես էլ տեսական դասաժամերի ընթացքում փոխներգործուն մեթոդների կիրառմամբ:

Ուսումնամեթոդական փաթեթը ներկայացված է պահանջվող ձևաչափին համապատասխան: Այն բովանդակում է առարկայական նկարագիրը, թեմատիկ տրոհումը, դասախոսության թեմաներ, ինչպես նաև գործնական պարապմունքներ:

Գրականության ցանկն արդիական է:

Սակայն ցանկանում եմ նշել, որ կան դասախոսություններ, որոնց վերջում, ինչպես նաև թեմատիկ տրոհման մեջ (թեմա 3, 4, 8, 9), Լ. Նազարյանը ներկայացրել է միայն ինքնաստուգման հարցեր, սակայն, համաձայն դասընթացին ներկայացվող պահանջների, պետք է առանձին ներկայացվեն նաև առաջադրանքներ, առաջարկում եմ տարբերակել և առաջադրանքները լրացնել մասնագիտության հետ զուգադրելով:

Պահանջվում էր, թեմատիկ տրոհման մեջ յուրաքանչյուր գործնական աշխատանքին կից ներկայացնել կրթական ելքային արդյունքները, դրանք ներկայացված չեն:

«Մանկավարժական կոնֆլիկտաբանություն» դասընթացը համապատասխանում է ՀՊՄՀ-ի դասընթացի կառուցման ներկայացվող պահանջներին:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – 1. Հաստատել 2019-2020 ուս. տարվա 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների փաթեթները՝ հաշվի առնելով ներկայացված առաջարկությունները դրանց բարելավման ուղղությամբ:

2. Շարունակել փաթեթների կատարելագործման գործընթացը.
    - Հստակ ձևակերպել տվյալ առարկայի դասավանդման նպատակը և նրա դերը տվյալ մասնագիտության պատրաստման գործում:
    - Յուրաքանչյուր թեմայի դասավանդման ժամանակ պլանավորել թեման ամրապնդող գործնական խմբային կամ անհատական աշխատանք:
    - Պլանավորել ուսանողի ինքնուրույն աշխատանքին հատկացվող ժամաքանակը:
    - Մշտապես նորացնել գործնական աշխատանքների անցկացման ժամանակ օգտագործվող մեթոդներն ու մանկավարժական տեխնոլոգիաները՝ դրանք համապատասխանեցնելով տվյալ մասնագիտությանը և ՄԿԾ-ի վերջնարդյունքներին:
    - Մշտապես արդիականացնել դասավանդվող առարկայի գրականության ցանկը:

3. Փորձագետներին հանձնարարել ավելի սկզբունքային և անաչառ լինել, փաթեթների բովանդակությունը ներկայացնել վերլուծա-քննադատական եղանակով, գնահատել փաթեթները տվյալ մասնագիտությանը նպաստելու տեսանկյունից:

4.Վերանայել «Գործնական մանկավարժություն» և «Էթնոմանկավարժություն» առարկաների ուսումնամեթոդական փաթեթները:

**2. ԼՄԵՑԻՆ** - 2019-2020 ուս.տարվա 1-ին կիսամյակի ամբիոնի աշխատանքային պլանի հաստատման մասին:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հաստատել Մանկավարժության ամբիոնի 2019-2020 ուս. տարվա 1-ին կիսամյակի աշխատանքային պլանը:

**3.ԼՍԵՑԻՆ** - Մանկավարժական պրակտիկայի կազմակերպման ընթացքի մասին: /զեկուցող՝ Գ. Հարությունյան/

**Գ. Հարությունյան** - Բոլոր ֆակուլտետների առկա ուսուցման բակալավրիատի 2019-2020 ուստարվա 1-ին կիսամյակի 3-րդ կուրսի ուսանողների մանկավարժական պրակտիկան կազմակերպվում է 16.09.2019թ. մինչև 16.12.2019թ. /շաբաթական մեկ օր/: Բոլոր ֆակուլտետներում մեր ամբիոնի դասախոսները ընդգրկված են որպես մանկավարժներ, իսկ ԿՀՍ ֆակուլտետի սոցիալական մանկավարժություն մասնագիտության ուսանողների պրակտիկայում նաև որպես մեթոդիստ և ղեկավար: Սոցիալական մանկավարժություն մասնագիտության պրակտիկայի բազաներ են ընտրվել Երևանի թիվ 104 հիմնական դպրոցը /մեթոդիստ՝ Ն. Մարտիրոսյան, մանկավարժ՝Ա. Հովհաննիսյան, հաստատությունում ընդգրկված է 13 ուսանող/, «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոնը /մեթոդիստ՝ Ա.Դալլաքյան, մանկավարժ՝ Ի.Բաբայան, հաստատությունում ընդգրկված է 13 ուսանող/: Պրակտիկայի ղեկավար Գ. Հարությունյան:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հանձնարարել Գ. Հարությունյանին կիսամյակի ողջ ընթացքում խստորեն վերահսկել ուսանողների, մեթոդիստների, մանկավարժների աշխատանքը և դեկտեմբերին ներկայացնել հաշվետվություն 2019-2020 ուս. տարվա 1-ին կիասմյակի մանկավարժական պրակտիկայի արդյունքների մասին:

**ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝** **Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ**

**ՔԱՐՏՈՒՂԱՐ՝** **Է. ՅԱՐԱՋՅԱՆ**

**18.09.2019թ.**

# Արձանագրություն հոդ. 3

## 2019-2020 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի ՆԻՍՏԻ

**Օրակարգ**

1. «Էթնոմանկավարժություն», «Գործնական մանկավարժություն», «Մանկավարժական վալեոլոգիա», «Մանկավարժական հերմենևտիկա» առարկաների ուսումնամեթոդական փաթեթների հաստատման մասին:
2. Պրակտիկայի բարելավման առաջարկություններ ներկայացնելու մասին: /զեկուցողներ՝ բոլոր նրանք, ովքեր մասնակցում են պրակտիկային/:
3. 2019-2020 ուս. տարվա 1-ին կիսամյակի դասալսումների գրաֆիկի հաստատման մասին: /կցվում է/
4. Ամբիոնում գործող մշտական սեմինարի 2019-2020 ուս.տարվա 1-ին կիսամյակի գրաֆիկի հաստատման մասին: /կցվում է/
5. «ՀՊՄՀ բակալավրի ավարտական աշխատանքների կազմակերպման, իրականացման և գնահատման կարգի» և «ՀՊՄՀ մագիստրոսական թեզերի պատրաստման և գնահատման կարգի» վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու մասին:
6. 2019-2020 ուս. տարվա ԿՀՍ և ՍԿ ֆակուլտետների «Սոցիալական մանկավարժություն» և «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտությունների մանկավարժության ամբիոնի գծով ավարտական աշխատանք և մագիստրոսական ատենախոսություն գրող ուսանողների, թեմաների և գիտական ղեկավարների հաստատման մասին:
7. «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծի աշխատանքային տարբերակի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու մասին:
8. 2019-2020 ուս. տարվա 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների միջանկյալ ստուգումների հարցաշարերի հաստատման մասին:

**1. ԼՍԵՑԻՆ** - «Էթնոմանկավարժություն», «Գործնական մանկավարժություն», «Մանկավարժական վալեոլոգիա», «Մանկավարժական հերմենևտիկա» առարկաների ուսումնամեթոդական փաթեթների հաստատման մասին:

**Ա. Թոփուզյան –** Ուսումնասիրել եմ Լ. Պողոսյանի ներկայացրած «Մանկավարժական վալեոլոգիա» և «Մանկավարժական հերմենևտիկա» առարկաների ուսումնամեթոդական փաթեթները:

«Մանկավարժական վալեոլոգիա» առարկան դասավանդվում է ԿՀՍ ֆակուլտետի սոցիալական մանկավարժություն մասնագիտության մագիստրատուրա 2-րդ կուրսում: Փաթեթը լրացված է գրագետ՝ ըստ ներկայացված ձևաչափի: Կրթական ելքային արդյունքները շարադրված են ըստ հմտությունների: Թեմատիկ տրոհումը համապատասխանում է ՄԿԾ-ին, օգտագործվել են բազմաթիվ մեթոդներ, մասնավորապես, նախագծային մեթոդ, բանավեճ, քարոզ-կոչ, հոդվածի քննարկում, մոդելավորում, տեսաներկայացում, սակայն կան որոշ մեթոդներ, որոնք առկա են առաջադրանքներում, բայց ներկայացված չեն որպես մեթոդ: Ե՛վ դասախոսության, և՛ գործնական աշխատանքի յուրաքանչյուր առաջադրանքի կողքին գրված է, թե այդ առաջադրանքը որ վերջնարդյունքն է ապահովում: Գրականության ցանկը անհրաժեշտ է թարմացնել: Փաթեթն ամբողջական է, ուստի առաջարկում եմ հաստատել:

«Մանկավարժական հերմենևտիկա» առարկան դասավանդվում է ՍԿ ֆակուլտետի տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության մագիստրատուրա 2-րդ կուրսում որպես ընտրովի դասընթաց: Առարկան նոր է: Գործնական աշխատանքներն են բանավեճ, քեյս ստադի, մոդելավորում, դերային խաղ: Սակայն առաջարկում եմ բանավեճի թեման փոխել, «Ժամանակակից մանկավարժության տերմինաբանական ապարատը» թեմայի փոխարեն տալ «Մեթոդ, մեթոդաբանություն, տեխնոլոգիա» թեման, այսինքն, կոնկրետացնել բանավեճի թեման: Առաջարկում եմ հաստատել փաթեթը՝ հետագայում անընդհատ կատարելագործելու պայմանով:

**Ա. Հակոբյան** – Հաշվի առնելով նախորդ ամբիոնի նիստում հնչած առաջարկությունները և դիտողությունները «Էթնոմանկավարժություն» առարկայի ուսումնամեթոդական փաթեթի վերաբերյալ՝ կատարել եմ համապատասխան փոփոխություններ:

Մասնավորապես, ներկայացրել եմ այնպիսի գործնական աշխատանքներ, որոնք կապահովեն դասընթացի կրթական ելքային արդյունքները և կհամապատասխանեն ՄԿԾ-ի վերջնարդյունքներին: Վերանայել եմ գրականության ցանկը և համալրել ժամանակակից գրականությամբ:

**Ս. Մինասյան –** «Գործնական մանկավարժություն» առարկայի փաթեթում կատարել եմ փոփոխություններ՝ հաշվի առնելով ներկայացված դիտողությունները և առաջարկությունները: Հստակեցրել եմ գործնական աշխատանքի մեթոդները, յուրաքանչյուր թեմայի վերջում տեղադրել եմ տվյալ թեմայից բխող և վերջնարդյունքներն ապահովող առաջադրանքներ: Վերանայել եմ գրականության ցանկը:

**ՈՐՈՇԵՑԻՆ –** Հաստատել «Էթնոմանկավարժություն», «Գործնական մանկավարժություն», «Մանկավարժական վալեոլոգիա», «Մանկավարժական հերմենևտիկա» առարկաների ուսումնամեթոդական փաթեթները՝ հետագայում անընդհատ կատարելագործելու պայմանով:

**2. ԼՍԵՑԻՆ** - Պրակտիկայի բարելավման առաջարկություններ ներկայացնելու մասին:

**Ա.Դալլաքյան –** Ցանկալի է.

- ավելացնել մանկավարժին հատկացված ժամաքանակը ՀՊՄՀ-ի պրակտիկայի չափակարգում:
- Մանկավարժի, մեթոդիստի և հոգեբանի կողմից ներկայացված առաջադրանքների պահանջների ընդհանրացում՝ մինչև պրակտիկայի մեկնարկը:
- Ուսանողներին կուրսային աշխատանքի թեմաներ հանձնարարելիս հաշվի առնել պրակտիկայի տվյալ հաստատությունում առկա հետազոտական հիմնախնդիրները, ինչը կնպաստի ուսանողների մոտ հետազոտական կարողությունների զարգացմանը:
- Ուսումնական պլանում նախատեսված և դասավանդվող մասնագիտական դասընթացների շրջանակներում ուսանողներին հանձնարարել այնպիսի

առաջադրանքներ, որոնք կիրականացվեն պրակտիկայի ընթացքում, իսկ դրա համար հետադարձ կապով կգնահատվեն դասընթացի վերջնարդյունքում, ինչը կապահովի տեսականի և գործնականի կապը:

**Ա. Հովհաննիսիյան** – Կարևորելով ուսումնաճանաչողական պրակտիկայի ճանաչողական, դաստիարակչական, ուսումնամեթոդական դերն ու նշանակությունը՝ առավել կարևորում ենք մանկավարժական պրակտիկայից ակնկալվող ելքային վերջնարդյունքները, այսինքն, մանկավարժական պրակտիկայի ավարտին ուսանողը ինչ կիմանա, ինչին կտիրապետի և ինչ կկարողանա, այս համատեքստում առաջարկում ենք պրակտիկայի թղթապանակներում սահմանել պրակտիկայի վերջնարդյունքները և ուսանողներին գնահատել այդ վերջնարդյունքների տիրապետմանը համապատասխան:

**Ի. Բաբայան** – Կարծում եմ.

1. պրակտիկայի բազաները վերանայման կարիք ունեն, պայմանագրում կարելի է նշել, որ ուսանողների համար հատկացվեն աշխատասենյակներ,
2. սոցիալական մանկավարժներին նախընտրելի է ուղարկել համապատասխան կենտրոններ, ինչու չէ, նաև նախարարություններ,
3. աջակցության կենտրոններում մեր ուսանողներին թույլ են տալիս միայն դասապատրաստմամբ զբաղվել, այնինչ նրանք պետք է հանդիպեն նաև ծնողների, հատուկ մասնագետների հետ, ծանոթանան երեխաների անձնական փաստաթղթերին՝ վերլուծություններ անելու համար և այլն: Ուստի առաջարկում ենք այս ամենը ամրագրել պայմանագրերում և պրակտիկայից առաջ համապատասխան վայրերում կազմակերպել խորհրդակցություններ՝ պրակտիկայի վարման և հաստատությանը ներկայացվող պահանջների վերաբերյալ,
4. պահանջել ՀՊՄՀ պրակտիկայի վարչությունից մանկավարժական պրակտիկայի գրաֆիկը կազմել այնպես, որ միաժամանակ մեր կամ այլ համալսարաններից 15 խումբ չայցելի նույն դպրոցը:

**Ա. Բաղդասարյան** - Պրակտիկան ավելի արդյունավետ կլիներ, եթե

- մանկավարժները նույնպես մասնակցեին կիրառական փուլին,

- պրակտիկային տրամադրվեր ավելի շատ ժամաքանակ:

**Ա. Մանուկյան** - Կրկնությունները բացառելու նպատակով պրակտիկայի մեթոդիստների և հոգեբանների հետ քննարկել պրակտիկայի շրջանակներում ուսանողներին տրամադրվող թեմատիկան:

**Գ. Աղուզումցյան –** Անհրաժեշտ է պրակտիկայի վարչությանը հանձնարարել.

1. պրակտիկայի անցկացման համար ընտրել այնպիսի հաստատություններ, որտեղ առկա են պրակտիկ գործունեություն ծավալող համապատասխան մասնագետներ /սոցիալական մանկավարժ, հոգեբան/,
2. պրակտիկայի գործողությունների ծրագրի նախագիծը քննարկել գործընկեր կազմակերպության հետ,
3. պրակտիկայի անցկացման մասին պայմանագիրը կնքել տվյալ հաստատության մասին նախնական տեղեկագրական փաթեթի հավաքագրումից հետո միայն:

**Գ. Եգանյան –** Առաջարկում եմ

- ստեղծել պրակտիկայի գնահատման հստակ չափանիշների սանդղակ,
- պրակտիկայի գնահատման գործընթացը նույն կուրսում կազմակերպել բոլոր մեթոդիստների միասնական քննարկման համատեքստում,
- պրակտիկայի բազաները ընտրել տվյալ մասնագիտության մասնագետի առկայության պարտադիր պայմանով,
- մագիստրոսական և բակալավրիական պրակտիկաները կազմակերպել տարբեր ժամկետներում. այլապես հետազոտական պրակտիկայի ժամանակ բուհում բակալավրիական բազան քչաթիվ է:

**Գ. Հակոբյան** - Առաջարկում եմ բակալավրիատի կրթական աստիճանում բացի ուսումնաճանաչողական շրջափուլից պրակտիկայի մյուս՝ կիրառական և ամփոփիչ-գնահատողական փուլերում ևս ներառել մանկավարժության բաղադրիչը:

**Զ. Ասատրյան** - Մանկավարժական պրակտիկան արդյունավետ անցկացնելու, նախատեսված աշխատանքները ժամանակին և մեթոդապես ճիշտ կատարելու համար դասախոսի ծանրաբեռնվածության մեջ սահմանափակել դպրոցների քանակը:

**Լ. Ասատրյան –** Կարծում եմ անհրաժեշտ է՝

- ընտրել նորամուծություններ իրականացնող դպրոցներ, որոնցում ուսանողը սովորելու բան կունենա,
- փոխել պրակտիկայի թղթապանակի բովանդակությանը ներկայացվող պահանջները:

**Ն. Կարապետյան –** Առաջարկում եմ

1. դպրոցների ընտրության չափանիշների, սկզբունքների վերանայում,
2. բակալավրական պրակտիկայի 3-րդ կուրս 2-րդ կիսամյակում և 4-րդ կուրս 1-ին կիսամյակում ապահովել մանկավարժի մասնակցություն, ինչը այսօր բացակայում է:

**Մ. Գևորգյան -** Պրակտիկայի կազմակերպման գործընթացում հաշվի առնել անձնակենտրոն մոտեցում դասախոսի հանդեպ: Մասնավորապես, խմբերի և դպրոցների ընտրության գործընթացը ավելի ճկուն և դինամիկ դարձնել, թույլ տալով դասախոսին ընտրել համապատասխան դպրոցը, որից հետո նոր մասնագիտությունը և խումբը: Այս դեպքում դասախոսի աշխատանքի արդյունավետությունը ավելի կբարձրանա: Դասախոսը, ի վերջո, կարող է մեկ օրվա ընթացքում աշխատել մեկ դպրոցում՝ 10.00-14.00, 2-3 խմբերի հետ, այլ ոչ թե մեկ օրվա ընթացքում վազի 2-3 դպրոց: Կամ մեկ օրվա ընթացքում համատեղի լսարանային ժամերը և պրակտիկան դպրոցում:

**Մ. Ասատրյան –** Առաջարկում եմ

- վերանայել պրակտիկայի դպրոցների ցանկը,
- բարելավել պրակտիկայի պայմանները դպրոցներում,
- սահմանափակել պրակտիկայի խմբերի քանակը,
- ամրապնդել մեթոդիստ, մանկավարժ, հոգեբան կապն ու համագործակցությունը,
- աշխատանքներ իրականացնել՝ դպրոցներում պրակտիկայի գծով պատասխանատուների հետ՝ պրակտիկայի նպատակի, խնդիրների, ընթացքի վերաբերյալ իրազեկվածության բարձրացման և գործառույթների հստակցման ուղղությամբ:

**Ս. Սիսյան -** Առաջարկում ենք, որ պրակտիկան իրականացնող ուսումնական հաստատությունը ուսանողների համար հնարավորություն ստեղծի ծնողների շրջանում կատարել սոցիալ-մանկավարժական բնույթի և ճանաչողական-ինֆորմացիոն բնույթի

աշխատանքներ, թույլ տա կատարել տնայցեր ու ծնողների հետ անցկացնել քննարկումներ՝ նրանց երեխաների մեջ նկատված առանձնակի վարքագծային խնդիրների շուրջ, ապա կիրառելով CASE STUDY մեթոդը՝ դիտարկված վերլուծությունների արդյունքների հիման վրա կազմել քեյսեր, կատարել եզրակացություններ և դասղեկին, սոցիալական մանկավարժին, դպրոցի տնօրինությանը ներկայացնել համապատասխան առաջարկություններ:

**Լ. Պողոսյան –** Առաջարկում եմ

1. ուսանողների համար նշանակել խորհրդատվության օր,

2. պրակտիկայի ընթացքում ուժեղացնել հետազոտական բաղադրիչը:

**Գ. Հարությունյան –** Առաջարկում եմ

- պրակտիկայի նկարագրերի վերանայում /վերջնարդյունքների համապատասխանեցում մասնագիտության կրթական ծրագրի՝ մասնագիտության մասնագրի վերջնարդյունքներին/,
- պրակտիկայի թղթապանակների վերանայում,
- պրակտիկայի գնահատման ընդհանուր սանդղակի ստեղծում,
- բակալավրի կրթական ծրագրի 3-րդ և 4-րդ կուրսերում մանկավարժի ժամերի ավելացում,
- պրակտիկային հատկացվող ժամաքանակի ավելացում և պրակտիկայի իրականացման ժամանակահատվածի ավելացում,
- պրակտիկայի վարչության կողմից պրակտիկայի բազաների անընդհատ վերանայում՝ հաշվի առնելով կրթության ոլորտի առկա փոփոխությունները, համապատասխան մասնագետների առկայությունը.
    - ✓ համապատասխան մասնագետների առկայությամբ պրակտիկաների բազաների սակավություն /համընդհանուր ներառականության պայմաններում հանրակրթական դպրոցներում սոցիալական մանկավարժություն մասնագիտությամբ ուսանողների պրակտիկայի կազմակերպման դժվարությունների առկայություն/

- պրակտիկայի հաստատությունների համապատասխան մասնագետների հետ զրույց-քննարկումների իրականացում, սեմինար-վերապատրաստումների կազմակերպում պրակտիկայի վարչության կողմից,
- կուրսային, ավարտական և մագիստրոսական աշխատանքների թեմաների և պրակտիկայի ընթացքում կատարված աշխատանքների փոխադարձ կապի ապահովում:
- մագիստրոսների մանկավարժահետազոտական պրակտիկաների բազաների հստակեցում /պրակտիկայի կազմակերպում հաստատությունների աշխատակիցների վարձատրությամբ կամ պրակտիկայի անվճար բազաների տրամադրում/,
- մագիստրոսների մանկավարժահետազոտական պրակտիկաների իրականացման ժամանակացույցի կարգավորում.
  - ✓ կիսամյակում տարբեր մասնագիտությունների համար /առկա և հեռակա/ մագիստրոսների մանկավարժահետազոտական պրակտիկաները կազմակերպել տարբեր ժամանակահատվածներում,
  - ✓ կիսամյակում մագիստրատուրայի մանկավարժահետազոտական պրակտիկաների և բակալավրի կրթական ծրագրի մանկավարժական /ակտիվ/ պրակտիկաները կազմակերպել տարբեր ժամանակահատվածներում,
  - ✓ կիսամյակում մագիստրոսների մանկավարժահետազոտական պրակտիկաներին հատկացված ժամանակահատվածը հիմնականում համընկնում է բակալավրի կրթական ծրագրի ակտիվ պրակտիկաների /կիրառական, ամփոփիչ/ ժամանակահատվածի հետ, որը հնարավորություն չի տալիս լիարժեք ընդգրկել բակալավրի հենքի բոլոր կուրսերը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Ներկայացված առաջարկությունները ամբողջացնել և ներկայացնել պրակտիկայի վարչություն: /պատասխանատու՝ Գ. Հարությունյան և Ս. Ջանիկյան/

3. **ԼՍԵՑԻՆ** - 2019-2020 ուս. տարվա 1-ին կիսամյակի դասալսումների գրաֆիկի հաստատման մասին:

**Մ. Մանուկյան –** Կազմվել է 2019-2020 ուս. տարվա 1-ին կիսամյակի դասալսումների գրաֆիկը և այն պետք է հաստատենք: Յուրաքանչյուր դասալսման արդյունքները պետք է գրանցենք դասի դիտարկման թերթիկում և քննարկենք ամբիոնի նիստում:

**ՈՐՈՇԵՑԻՆ –1.** Հաստատել 2019-2020 ուս.տարվա 1-ին կիսամյակի փոխադարձ դասալսումների գրաֆիկը: Յուրաքանչյուր դասախոս պարտավոր է կիսամյակում լսել առնվազն 2 դաս:

**2.** Հանձնարարել պարոն Մանուկյանին՝ հետևել դասալսումների գրաֆիկի կատարմանը և 1-ին կիսամյակի վերջին ամբիոնի նիստում զեկուցել դրա կատարման արդյունքների մասին՝ քննարկմանը մասնակից դարձնելով տվյալ դասը ունկնդրած դասախոսներին:

4. **ԼՍԵՑԻՆ** – Ամբիոնում գործող մշտական սեմինարի 2019-2020 ուս.տարվա 1-ին կիսամյակի գրաֆիկի հաստատման մասին:

**Ա. Թոփուզյան** - Ամբիոնում կազմվել է 2019-2020 ուս. տարվա մշտական գործող սեմինարի գրաֆիկը՝ ձեր ներկայացրած թեմաների հիման վրա: Խնդրում եմ խստորեն հետևել գրաֆիկի կատարմանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – 1. Հաստատել 2019-2020 ուս.տարվա 1-ին կիսամյակի ամբիոնում մշտական գործող սեմինարի գրաֆիկը:

2. Պարոն Մանուկյանին հանձնարարել՝ հետևել գրաֆիկի կատարմանը և ուսումնական տարվա վերջին զեկուցել դրա արդյունքների մասին:

5. **ԼՍԵՑԻՆ** – «ՀՊՄՀ բակալավրի ավարտական աշխատանքների կազմակերպման, իրականացման և գնահատման կարգի» և «ՀՊՄՀ մագիստրոսական թեզերի պատրաստման և գնահատման կարգի» վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու մասին: /կցվում են առաջարկությունները /զեկուցող՝ Լ. Պողոսյան/

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հանձնարարել Լ. Պողոսյանին վերոնշյալ առաջարկությունները խմբագրել և ներկայացնել ՀՊՄՀ կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչություն:

6. **ԼՍԵՑԻՆ** - 2019-2020 ուս. տարում Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի «Սոցիալական մանկավարժություն» և Սկզբնական կրթության ֆակուլտետի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտությունների մանկավարժության ամբիոնի գծով մագիստրոսական ատենախոսություն գրող առկա ուսուցման 1-ին կուրսի ուսանողների թեզերի թեմաների և գիտական ղեկավարների հաստատման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Ա.Թոփուզյան, Գ. Հարությունյան, Ն. Մարկոսյան

**ՈՐՈՇԵՑԻՆ**- Հաստատել ներքոհիշյալ ուսանողների մագիստրոսական թեզերի թեմաները և գիտական ղեկավարների ցանկը:

| Սոցիալական մանկավարժություն | | | |
|---|---|---|---|
| Հ/Հ | ԹԵՄԱ | ԿԱՏԱՐՈՂ | ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ |
| 1. | Կրտսեր դպրոցականների համակարգչային խաղերից կախվածությունը որպես սոցիալ-մանկավարժական հիմնախնդիր: | Գայանե Ավետիսյան | Գ. Հարությունյան |
| 2. | Սոցիալական մանկավարժի աշխատանքի առանձնահատկությունները ԿԱՊԿՈՒ երեխաների հետ: | Շուշան Միքայելյան | Ն. Մարկոսյան |

| Տարրական մանկավարժություն և մեթոդիկա | | | |
|---|---|---|---|
| Հ/Հ | ԹԵՄԱ | ԿԱՏԱՐՈՂ | ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ |
| 1. | Էկոլոգիական կրթության բովանդակությունը և ձևերը տարրական դպրոցում: | Ավդալյան Հռիփսիմե | Ի.Բաբայան |
| 2. | Առողջագիտական դաստիարակության իրականացման ուղիները տարրական դպրոցում: | Դանիելյան Մերի | Ի.Բաբայան |
| 3. | Կրտսեր դպրոցականի հաղորդակցական կարողությունների ձևավորումը: | Աբրամովա Սեդա | Ի.Բաբայան |
| 4. | Ուսուցչի մանկավարժական վարպետության ձևավորման հիմնախնիրը տարրական դպրոցում: | Միդեյան Իրինա | Ս.Սիսյան |
| 5. | Կրտսեր դպրոցականների պատասխանատու վարքի ձևավորման մանկավարժական պայմանները: | Երոյան Արփինե | Գ.Աղուզումցյան |
| 6. | Քաղաքացիական դաստիարակության արդի հիմնախնդիրները տարրական դպրոցում: | Հովհաննիսյան Իրա | Գ.Աղուզումցյան |
| 7. | Տարրական դպրոցում սովորողների մեդիագրագիտության մանկավարժական | Անտոնյան Լիլիթ | Հ. Թադևոսյան |

| | | | |
|---|---|---|---|
| | պայմանները: | | |
| **8.** | Մանկական ստեղծագործությունների միջոցով կրտսեր դպրոցականների բարոյական որակների ձևավորման մանկավարժական պայմանները: | Պողոսյան Շուշան | Ա.Դալլաքյան |
| **9.** | Թանգարանը որպես կրտսեր դպրոցականների սոցիալական փորձի ձևավորման միջոց (ՀՀ ԳԱԱ Երկրաբանության թանգարանի օրինակով): | Խաչատրյան Սաթենիկ | Ա.Դալլաքյան |

**ԼՍԵՑԻՆ**-2019-2020 ուս. տարում Սկզբնական կրթության ֆակուլտետի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության մանկավարժության ամբիոնի գծով մագիստրոսական թեզեր գրող հեռակա ուսուցման 1-ին կուրսի ուսանողների թեզերի թեմաների և գիտական ղեկավարների հաստատման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Ա.Թոփուզյան, Լ. Պողոսյան, Ն. Մարտիրոսյան, Ս. Սիսյան, Ա. Դալլաքյան, Գ. Եգանյան

**ՈՐՈՇԵՑԻՆ**- Հաստատել ներքոհիշյալ ուսանողների մագիստրոսական թեզերի թեմաները և գիտական ղեկավարների ցանկը:

| Հ/Հ | ԹԵՄԱ | ԿԱՏԱՐՈՂ | ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ |
|---|---|---|---|
| **1.** | Առողջության նկատմամբ արժեքային վերաբերմունքի ձևավորումը տարրական դպրոցում: | Եգանյան Սուսաննա | Լ. Պողոսյան |
| **2.** | Պաուլո Ֆրեյրեի մարդաբանական գաղափարներն ու դրանց կիրառման հնարավորությունները ժամանակակից դպրոցում: | Ալոյան Քրիստինե | Լ. Պողոսյան |
| **3.** | «Ուսուցչի օգնականի դերը համընդհանուր ներառման համատեքստում»: | Սամվելյան Էլեն | Ն. Մարտիրոսյան |
| **4.** | Ճանաչողական խաղերը որպես կրտսեր դպրոցականի իմացական կարողությունների զարգացման միջոց: | Հայրապետյան Մարիամ | Ս. Սիսյան |
| **5.** | Կրտսեր դպրոցականների ինքնակրթության հիմնախնդիրը տարրական դպրոցում | Աթանեսյան Թամարա | Գ. Հարությունյան |
| **6.** | Համացանցը որպես երեխայի սոցիալականացման կարևորագույն գործոն: | Մկրտչյան Մարիամ | Գ. Հարությունյան |
| **7.** | Սովորողների բազմամշակութային դաստիարակության իրականացման միջոցները կրտսեր դպրոցում: | Ալեքսանյան Աստղիկ | Ա. Դալլաքյան |

| | | | |
|---|---|---|---|
| 8. | Կրտսեր դպրոցականի անձի սոցիալականացման վրա ազդող գործոնների հարաբերակցությունը: | Խեչոյան Քրիստինե | Գ. Եգանյան |

**ԼՍԵՑԻՆ** - 2019-2020 ուս. տարում ՍԿ ֆակուլտետի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» և ԿՀՍ ֆակուլտետի «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտությունների մանկավարժության ամբիոնի գծով ավարտական աշխատանք գրող առկա ուսուցման 4-րդ և հեռակա ուսուցման 5-րդ կուրսերի ուսանողների թեմաների և գիտական ղեկավարների հաստատման մասին:

**ՈՐՈՇԵՑԻՆ**- Հաստատել ներքոհիշյալ ուսանողների ավարտական աշխատանքների թեմաներն ու ղեկավարներին:

| **ՍԿ, առկա բակալավր 4-րդ կուրս** | | | |
|---|---|---|---|
| **Հ/Հ** | **ԹԵՄԱ** | **ԿԱՏԱՐՈՂ** | **ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ** |
| 1. | Սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացման մեթոդները, միջոցները և տեխնոլոգիաները տարրական դասարաններում | Վարդանյան Մանե | Լ. Ասատրյան |
| 2. | Աղետներին դիմակայելու կարողությունների ձևավորումը տարրական դպրոցում | Ավագյան Թամարա | Ն. Կարապետյան |
| 3. | Բնապահպանական միջոցառումների կազմակերպման մեթոդները տարրական դպրոցում | Աղասարյան Դիանա | Ն. Կարապետյան |
| 4. | Մանկավարժական պրակտիկայի դերը տարրական դպրոցի ուսուցչի մասնագիտական պատրաստության գործընթացում | Պողոսյան Սոնա | Գ. Հակոբյան |
| 5. | Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության զարգացման հիմնախնդիրը | Սևոյան Գոհար | Գ. Հակոբյան |
| **ՍԿ, հեռակա բակալավր 5-րդ կուրս** | | | |
| **Հ/Հ** | **ԹԵՄԱ** | **ԿԱՏԱՐՈՂ** | **ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ** |
| 1. | Էկոլոգիական դաստիարակությունը տարրական դպրոցում | Մելքոնյան Աննա | Լ. Ասատրյան |
| 2. | Փոխներգործուն մեթոդների կիրառման արդյունավետությունը տարրական դպրոցի ուսուցման գործընթացում: | Գալոյան Մելինե | Մ. Ասատրյան |

| | | | |
|---|---|---|---|
| **3.** | Կրտսեր դպրոցականների գեղագիտական դաստիարակության միջոցները | Հարությունյան Գոհարիկ | Գ. Հակոբյան |
| **4.** | Կրտսեր դպրոցականների էկոլոգիական գիտելիքների ձևավորումը միջառարկայական կապերի կիրառմամբ | Մնացականյան Գայանե | Գ. Հակոբյան |
| **5.** | Դպրոցի կրթական միջավայրին կրտսեր դպրոցականի հարմարման հիմնախնդիրը | Ավդալյան Լուսինե | Գ. Հակոբյան |
| **6.** | Համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի կիրառումը տարրական դպրոցում: | Աբգարյան Թամարա | Ս. Ջանիկյան |
| **7.** | Ժողովրդական հեքիաթների և հանելուկների դերը կրտսեր դպրոցականի էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման գործում | Գրիգորյան Հերմինե | Ն. Կարապետյան |
| **8.** | Խաղային տեխնոլոգիաների իրականացման մանկավարժական պայմանները տարրական դպրոցում | Շահինյան Վիկա | Ա. Մանուկյան |
| **ԿՀՍ, առկա բակալավր 4-րդ կուրս** | | | |
| **Հ/Հ** | **ԹԵՄԱ** | **ԿԱՏԱՐՈՂ** | **ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ** |
| **1.** | Ավագ դպրոցականներին զինվորական ծառայությանը պատրաստելու սոցիալ-մանկավարժական ուղիները: | Ճիճիլյան Աննա | Թադևոսյան Հ. |
| **2.** | Հանրակրթական դպրոցում սոցիալական մանկավարժի անհրաժեշտության հիմնավորումը: | Ասատրյան Աշխեն | Թադևոսյան Հ. |
| **3.** | Սոցիալական մանկավարժի դերը զարգացման կենտրոններում: | Հովհաննիսյան Վիկտորյա | Մարկոսյան Ն. |
| **4.** | Ընտանիքի դերը երեխաների սոցիալականացման գործընթացում: | Բարեղամյան Լուսինե | Մարկոսյան Ն. |
| **5.** | Սոցիալական մանկավարժի աշխատանքը դևիանտ վարք ունեցող երեխաների հետ: | Մուրադյան Աննա | Պողոսյան Լ. |
| **6.** | Լիդերության բացահայտման սոցիալ-մանկավարժական պայմանները հանրակրթական դպրոցում: | Պետրոսյան Շուշանիկ | Պողոսյան Լ. |
| **7.** | Բուհական միջավայրին 1-ին կուրսեցիների հարմարման մանկավարժական պայմանները | Պետրոսյան Սոնա | Աղուզումցյան Գ. |
| **8.** | Սոցիալական մանկավարժի գործառույթները բազմազավակ | Ալոյան Դարիկո | Աղուզումցյան Գ. |

| | | | |
|---|---|---|---|
| | ընտանիքների հետ աշխատելու համատեքստում: | | |
| 9. | Սոցիալական մանկավարժի դիագնոստիկ գործառույթի իրականացումը տարրական դպրոցում: | Դանիելյան Անի | Հարությունյան Գ. |
| 10 | Նախադպրոցականի տարրական դպրոցին հարմարման գործընթացը որպես սոցիալ-մանկավարժական հիմնախնդիր: | Սահակյան Արևիկ | Հարությունյան Գ. |
| 11 | Ընտանեկան բռնության ենթարկված երեխաների սոցիալ-մանկավարժական աջակցման ուղիները: | Գևորգյան Աննա | Հարությունյան Գ |
| 12 | ՀՀ-ում բազմազավակ ընտանիքների արդի հիմնախնդիրներն ու դրանց լուծման սոցիալ-մանկավարժական ուղիները: | Մկրտչյան Հասմիկ | Հարությունյան Գ |
| 13 | Երեխաների սոցիալականացման հիմախնդիրը նախադպրոցական հաստատություններում: | Վարդերեսյան Ֆենյա | Եգանյան Գ. |
| 14 | Սոցիալական մանկավարժի աշխատանքը տարրական դպրոցում: | Թորգոմյան Սիրանուշ | Եգանյան Գ. |
| 15 | Կրտսեր դպրոցականների սոցիալական պասիվության հաղթահարման մանկավարժական ուղիները: | Գրիգորյան Ալինա | Դալլաքյան Ա. |
| 16 | "Քոուչ ծնողի" մոդելի կիրառման առանձնահատկությունները տարրական դպրոցում: | Սահակյան Ազատուհի | Դալլաքյան Ա. |
| 17 | Դպրոցի և ընտանիքի համագործակցության ձևերը տարրական դպրոցում և դրանց դերը երեխայի դաստիարակության գործում: | Վարդանյան Էմմա | Բաբայան Ի. |
| 18 | Սոցիալական մանկավարժի աշխատանքը դպրոցականների մասնագիտության ընտրության գործընթացում: | Մարգարյան Լիանա | Հովհաննիսյան Ա. |
| 19 | Սոցիալական մանկավարժի աշխատանքը Աջափնյակի երեխաների սոցիալական աջակցության կենտրոնում: | Սևանյան Աննա | Հովհաննիսյան Ա. |
| 20 | Ուսուցչի օգնականի աշխատանքի առանձնահատկությունները ներառական կրթության պայմաններում: | Քարամյան Անի | Հովհաննիսյան Ա. |
| 21 | Սոցիալական մանկավարժի աշխատանքը դպրոց-ընտանիք համատեքստում: | Մկրտչյան Արևիկ | Հովհաննիսյան Ա. |
| 22 | Դեռահասների վարքային շեղումների կանխարգելումը: | Գևորգյան Հեղինե | Նազարյան Լ. |
| 23 | Սոցիալական մանկավարժի գործառույթները հիպերակտիվ երեխայի հետ աշխատանքում: | Սաֆարյան Գոռ | Նազարյան Լ. |

**ԼՍԵՑԻՆ** -2014-2015 ուս. տարում պետական ավարտական քննությունից անբավարար ստացած Սկզբնական կրթության ֆակուլտետի «Մանկավարժություն և մեթոդիկա /տարրական կրթություն/» մասնագիտության հեռակա բակալավր 5-րդ կուրսի ուսանողուհի Արփի Վարդանի Մխիթարյանին մանկավարժության ամբիոնի գծով ավարտական աշխատանք գրելու թույլտվություն տալու մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Ա.Թոփուզյան, Լ. Ասատրյան, Ա. Դալլաքյան

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Արփի Վարդանի Մխիթարյանի ավարտական աշխատանքի ղեկավար նշանակել մ.գ.դ., պրոֆեսոր Լ. Ասատրյանին:

7. **ԼՍԵՑԻՆ** - «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծի աշխատանքային տարբերակի մասին: /զեկուցող՝ Ա. Թոփուզյան/

**Ա. Թոփուզյան** – Ձեզ հանձնարարվել էր ուսումնասիրել «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծի աշխատանքային տարբերակը և ներկայացնել առաջարկություններ: Հիմք ընդունելով Ձեր ներկայացրած առաջարկությունները կազմվել են ամբիոնի ընդհանրական հետևյալ առաջարկությունները: /Առաջարկությունները կցվում են/

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Ս. Սիսյան, Լ. Նազարյան, Ա. Հովհաննիսյան

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Առաջարկությունները խմբագրել և հանձնել ՀՊՄՀ քարտուղարություն:

**8. ԼՍԵՑԻՆ** - 2019-2020 ուս. տարվա 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների միջանկյալ ստուգումների հարցաշարերի հաստատման մասին:

**Ա. Թոփուզյան** – Առաջարկում եմ հաստատել 2019-2020 ուս. տարվա 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների միջանկյալ ստուգումների հարցաշարերը, որոնք կազմված են ըստ համապատասխան ուսումնական պլանի, առարկայական փաթեթի, սահմանված ձևաչափի և գնահատման բաղադրիչների:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հաստատել 2019-2020 ուս. տարվա 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների միջանկյալ ստուգումների հարցաշարերը և դրանց հիման վրա կազմել

միջանկյալ ստուգման գրավոր աշխատանքի տարբերակները և քննական տոմսերը: Ավելի շատ գործնական, կիրառական բնույթի հարցեր ընդգրկել հարցաշարերում, իսկ քննական տոմսերում երրորդ հարցը պարտադիր պետք է ունենա գործնական բնույթ:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ

09.10.2019թ.

## Արձանագրություն թիվ 4

**2019-2020 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի ՆԻՍՏԻ**

**Օրակարգ**

1. Պրակտիկայի բարելավման ուղղությամբ աշխատանքներ իրականացնող հանձնաժողովի հաշվետվության մասին /զեկուցող՝ Գ. Հակոբյան/:
2. Մանկավարժական օլիմպիադայի կազմակերպման մասին:
3. «Սոցիալ-մանկավարժական նորարարությունները կրթության մեջ» խորագրով ուսանողական գիտագործնական համաժողովի կազմակերպման մասին: /զեկուցող՝ Ս. Մինասյան/
4. Դասալսումների արդյունքների մասին:

1. **ԼՍԵՑԻՆ** – Պրակտիկայի բարելավման ուղղությամբ աշխատանքներ իրականացնող հանձնաժողովի հաշվետվության մասին:

**Ա. Թոփուզյան** – Բոլորիդ հայտնի է, որ ամբիոնում ստեղծված է ուսանողական պրակտիկայի փաստաթղթերը կատարելագործելու և պրակտիկայի բարելավման ուղղությամբ աշխատանքներ իրականացնող հանձնաժողով, որը ղեկավարում է տիկին Գ. Հակոբյանը: Հանձնաժողովը արդեն սկսել է աշխատանքները և առաջարկում եմ լսել Գ. Հակոբյանի հաշվետվությունը կատարված աշխատանքների վերաբերյալ:

**Գ. Հակոբյան** – Մենք քննարկումներ ենք ունեցել Գ. Հարությունյանի, Հ. Թադևոսյանի, Ն. Մարտիրոսյանի և Լ. Պողոսյանի հետ: Ուսումնաճանաչողական պրակտիկայի համար մենք ունենք «Ուսումնաճանաչողական պրակտիկայի շրջափուլերի բովանդակային բաղադրիչները և չափորոշչային պահանջները» խորագրով մի փաստաթուղթ, որը ես եմ մշակել: Այն ներառում է հետևյալ բաղադրիչները՝ ուսումնաճանաչողական պրակտիկայի խնդիրները, մանկավարժական պրակտիկայի գործառույթները, պրակտիկայի մանկավարժ-խորհրդատուի գործունեության շրջանակները, պրակտիկայի հաջորդական շրջափուլերի բովանդակային բաղադրիչները և չափորոշչային պահանջները: Մենք ունենք նաև բակալավրի և մագիստրատուրայի

կրթական ծրագրերի համար նախատեսված պրակտիկայի նկարագրերը սոցիալական մանկավարժություն մասնագիտության համար: Առկա է նաև պրակտիկայի համար նախատեսված թղթապանակը բակալավրի և մագիստրատուրայի համար: Պլանավորել ենք որոշակի աշխատանքներ իրականացնել վերոնշյալ փաստաթղթերի բարելավման ուղղությամբ:

**Ա. Թոփուզյան** – Մենք պրակտիկայի համար պետք է ունենանք 4 փաստաթուղթ՝ բակալավրի թղթապանակը /ըստ մասնագիտությունների/, մագիստրոսի թղթապանակը, բակալավրի պրակտիկայի նկարագրերը ըստ կուրսերի և պրակտիկայի նպատակի և մագիստրատուրայի թղթապանակը՝ վերջնարդյունքները համապատասխանեցնելով մասնագիտության վերջնարդյունքներին: Թղթապանակներում պետք է ունենանք մի այնպիսի բաժին, որը կփոփոխվի մասնագիտություններից ելնելով: Խնդրում եմ բակալավրի թղթապանակում ներառել նաև արտադասարանական միջոցառում կազմակերպելու հանձնարարական:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Լ. Ասատրյանը, Լ. Պողոսյանը, Հ. Թադևոսյանը, Գ. Հարությունյանը, Մ. Գևորգյանը

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Շարունակել պրակտիկայի փաստաթղթերի բարելավման գործընթացը՝ հաշվի առնելով ներկայացված առաջարկությունները և հանձնարարել Գ. Հակոբյանին փաթեթը ներկայացնել հաստատման՝ 2019-2020 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի սկզբին:

**2. ԼՍԵՑԻՆ** - Մանկավարժական օլիմպիադայի կազմակերպման մասին:

**Ա. Թոփուզյան** – Մեր ամբիոնում արդեն ավանդույթ է դարձել մանկավարժական օլիմպիադայի անցկացումը, որին մասնակցում են ավագ դպրոցականներ, բակալավրի և մագիստրատուրայի ուսանողներ: Օլիմպիադայի կազմակերպման և անցկացման պատասխանատուներն են Գ. Աղուզումցյանը և Ն. Մարտիրոսյանը: Խնդրում եմ պատրաստել 2019-2020 ուս. տարում անցկացվելիք մանկավարժական օլիմպիադայի կանոնադրությունը և ներկայացնել հաստատման՝ ամբիոնի հաջորդ նիստին:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հանձնարարել Գ. Աղուզումցյանին և Ն. Մարտիրոսյանին օլիպիադայի կանոնադրությունը ներկայացնել ամբիոն մինչև 06.11.2019թ.:

**3. ԼՍԵՑԻՆ** - «Սոցիալ-մանկավարժական նորարարությունները կրթության մեջ» խորագրով ուսանողական գիտագործնական համաժողովի կազմակերպման մասին: /զեկուցող՝ Ս. Մինասյան/

**Ս. Մինասյան** – Առաջարկում ենք 2020թ. ապրիլի 28-29-ին կազմակերպել ուսանողական գիտագործնական համաժողով՝ «Սոցիալ-մանկավարժական նորարարությունները կրթության մեջ» խորագրով: Համաժողովի նպատակն է՝ խթանել ուսանողական գիտահետազոտական աշխատանքը, բացահայտել ուսանողների ստեղծագործական ներուժը, զարգացնել ուսանողների և դասախոսների միջև համագործակցությունը և համատեղ հոդվածներ գրելու ավանդույթը, երիտասարդության ուշադրությունն ուղղել ժամանակակից մանկավարժության հիմնախնդիրների և նորարարությունների վրա:
Համաժողովի ուղղություններն են՝

1. Մանկավարժական մասնագիտական կրթության զարգացման միտումները՝ այսօր, վաղը:
2. Ապագա ուսուցչի մասնագիտական կոմպետենցիաները:
3. Մանկավարժական գործունեության կազմակերպման նորարարական սկզբունքները և մոտեցումները:
4. Դպրոցում կրթական միջավայրի նախագծում և ձևավորում:
5. Դաստիարակչական աշխատանքը կրթական համակարգում:
6. Սիներգետիկան որպես հոգևոր-բարոյական դաստիարակության նոր ուղղություն:
7. Մարդաբանությունը որպես մանկավարժական ռեսուրսի պահպանման և զարգացման ռազմավարություն:
8. Մանկավարժությունը և տեղեկատվական-հաղորդակցական միջավայրը՝ որպես նոր հնարավորությունների աղբյուր:
9. Սահմանափակ կարողություններ ունեցող սովորողների ուսուցումն ու դաստիարակությունը:

10. Կրթության էկոլոգիական ասպեկտները արդի պայմաններում:

11. Մանկավարժության պատմությունը ժամանակակից կրթության համատեքստում:

/Համաժողովի կանոնադրությունը կցվում է/

**ՈՐՈՇԵՑԻՆ** – 1. Հաստատել «Սոցիալ-մանկավարժական նորարարությունները կրթության մեջ» խորագրով ուսանողական գիտագործնական համաժողովի կանոնադրությունը:

2. Հանձնարարել կազմակերպիչներին /Ս. Մինասյան, Ա. Հակոբյան, Ա. Բաղդասարյան/ պատրաստել հայտատարարություն ՀՊՄՀ կայքում տեղադրելու համար:
3. 2020թ. փետրվարի վերջին ինֆորմացիա տալ համաժողովի նախապատրաստական աշխատանքների ընթացքի մասին:

**4. ԼՍԵՑԻՆ** - Դասալսումների արդյունքների մասին:

**Մ. Մանուկյան** – Դասալսումներ եմ իրականացրել Գ. Աղուզումցյանի, Հ. Թադևոսյանի և Ա. Հովհաննիսյանի մոտ:

18.10.2019թ. Գ. Աղուզումցյանի «Մանկավարժություն» առարկայի շրջանակներում դիտարկված դասի ընթացքում նկատվել են հետևյալ բացթողումները.

- դասագործընթացը գերհագեցած էր առցանց նյութերով,
- խոսքը գրագետ է և բովանդակալից, սակայն երբեմն խրթին,
- դասաժամը չափազանց ծանրաբեռնված էր առցանց նյութերով, այդ թվում և ռուսերեն լեզվով, ինչը դժվարամարս է դարձնում մատուցվող թեման:

22.10.2019թ. իրականացրել եմ դասալսում Հ. Թադևոսյանի դասավանդած «Սոցիալական մանկավարժություն» առարկայի շրջանակներում: Դասը հրաշալի էր, սակայն կարծում եմ, որ դասագործընթացում դասախոսի և ուսանողների միջև հաստատվող հետադարձ կապը մերթ ընդ մերթ խզվում էր դասախոսի խոսքում հուզականության պակասից:

25.10.2019թ. Ա. Հովհաննիսյանի «Սոցիալական մանկավարժության պատմություն» դասընթացի շրջանակներում դիտարկված դասի ընթացքում նկատվել են հետևյալ բացթողումները.

- ցայտուն չէին արտահայտվում հետազոտության տարրերը ուսանողների կատարած առաջադրանքների մեջ: Պատճառն այն էր, որ ուսանողները, համարյա առանց բացառության կարդում էին իրենց առջև դրված մտքերը, որոնք իրենց սեփականը չէին:
- անչափ շատ էր օգտագործվող ուսուցման մեթոդների քանակը, որն էլ ծանրաբեռնում էր գործընթացը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – 1. Մ. Մանուկյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

2. Բարձրացված հարցերն ու դիտողությունները հաշվի առնել հաջորդ դասերը պլանավորելիս:

3. Հանձնարարել Մ. Մանուկյանին 2-րդ կիսամյակում ևս դաս լսել և զեկուցել Հ. Թադևոսյանի, Ա. Հովհաննիսյանի և Գ. Աղուզումցյանի դասավանդման գործընթացում իրականացված փոփոխությունների մասին:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ

**30.10.2019թ.**

**Արձանագրություն թիվ 5**

**2019-2020 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 6-Ի ՆԻՍՏԻ**

Օրակարգ

1. Մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի մասին:
2. Մանկավարժական օլիմպիադայի կանոնադրության հաստատման մասին:

**1. ԼՍԵՑԻՆ** - Մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի մասին:

**Ա. Դալլաքյան** – ՍԿ ֆակուլտետի հեռակա մագիստրատուրա 3-րդ կուրսի ուսանողուհի Աստղիկ Գենջոյանը «Հանդուրժողականությունն իբրև մանկավարժի կոմպետենցիա» թեմայով մագիստրոսական թեզի հետազոտությունն իրականացրել է թիվ 6 և 39 հիմնական դպրոցներում, հարցաթերթիկային հարցում է իրականացրել ուսուցիչների, ծնողների շրջանում՝ բացահայտելու, թե ինչ են հասկանում մանկավարժական հանդուրժողականություն ասելով և որքանով են ուսուցիչները հանդուրժող: Հանդուրժողականության մակարդակի բացահայտման ուղղությամբ անկետավորում է իրականացրել բուհի ուսանողների շրջանում պրակտիկայի ընթացքում: Այժմ կատարում է արդունքների ամփոփում:

**Ա. Թոփուզյան** – Փորձեք մոդելավորել հանդուրժողականության բովանդակությունը և հանդուրժող ուսուցչի կոմպետենցիաները:

**Ն. Մարտիրոսյան** - ՍԿ ֆակուլտետի հեռակա մագիստրատուրա 3-րդ կուրսի ուսանողուհի Շաքե Գևորգյանը «Վեցամյա երեխայի դպրոցի նախապատրաստման հիմնախնդիրները ժամանակակից մանկավարժության մեջ» թեմայով մագիստրոսական թեզի շրջանակում հարցաթերթիկային հարցում է իրականացրել պետական մանկապարտեզում դաստիարակների և տնօրենի շրջանում, նախակրթարանի /քոլեջի/ և տարրական դպրոցի ուսուցիչների շրջանում՝ պարզելու համար, թե ինչ հիմնախնդիրներ կան, որ երեխան չի հարմարվել և ինչ պետք է անեն առաջացած խնդիրները լուծելու համար: Կատարում է արդյունքների վերլուծություն:

**Ն. Մարկոսյան** - «Աշակերտների հարմարման հիմնախնդիրը տարրականից միջին դպրոց անցումային փուլում» թեմայով մագիստրոսական թեզի հեղինակ Աննա

Ավետիսյանը հարցաթերթիկներ է բաժանել 4-րդ և 5-րդ դասարանների աշակերտներին և այդ դասարանների ուսուցիչներին, բացահայտելու, թե ինչ դժվարություններ և հարմարման խնդիրներ ունեն աշակերտները տարրականից միջին դպրոց անցման ընթացքում:

**Ա. Թոփուզյան** – Կարող եք նաև ծնողներին հարցման գործընթացի մեջ ընդգրկել, հարցազրույց իրականացնել աշակերտների հետ:

**Ս. Սիսյան -** ՍԿ ֆակուլտետի հեռակա մագիստրատուրա 3-րդ կուրսի ուսանողուհի Թերեզա Ալոյանը «Ուսուցչի հաղորդակցական ոճերի հիմնախնդիրը տարրական դպրոցում» թեմայով մագիստրոսական թեզի պատրաստման համար հաղորդակցական ոճերի ախտորոշման մեթոդիկայի միջոցով փորձել է պարզել, թե հաղորդակցման որ ոճին և մոդելին է համապատասխանում տվյալ ուսուցչի աշխատանքի հաղորդակցական ոճը: Պրակտիկայի ընթացքում իրականացվել է հարցում 60 ուսանողների շրջանում՝ պարզելու, թե ինչպես են գնահատում իրենց դասախոսների հաղորդակցական ոճը:

**Ա. Թոփուզյան** – Կարող եք նայել նաև մանկավարժական համատեղելիության տեսանկյունից: Մասնավորապես, թե ուսուցչի հաղորդակցական ոճը ինչպես է ազդում երեխայի առողջության վրա:

**Ս. Սիսյան** - «Դպրոց-ընտանիք համագործակցության հիմնախնդիրը տարրական դպրոցում» թեմայով մագիստրոսական թեզի հեղինակ, մագիստրոս Լիանա Սահակյանը մասնակցել է ծնողական ժողովների, զրուցել է ծնողների հետ, անցկացրել է սեմինար ծնողների համար:

**Ա. Թոփուզյան** – Աշխատանքի արդյունքում առաջարկեք ծնողական կրթության մեկ տարվա ծրագիր, այսինքն, սեմինարի 9 թեմա:

**Գ. Եզանյան** - «Մանկավարժի դերը կրտսեր դպրոցականի արժեհամակարգի ձևավորման գործում» թեմայով մագիստրոսական թեզի հեղինակ, մագիստրոս Սոֆյա Տերտերյանը իրականացրել է հարցաթերթիկային ուսումնասիրություն բակալավր 4-րդ կուրսի ուսանողների շրջանում: Պանտալովայի անձի արժեքային համակարգի դիագնոստիկ մեթոդիկայի միջոցով հետազոտություն է իրականացրել տարրական դպրոցի ուսուցիչների շրջանում: Աշխատանքի արդյունքում ներկայացնելու ենք

առաջարկություններ, թե դասվարը ինչ արժեքներ պետք է ձևավորի տարրական դպրոցում:

**Հ. Թաղևոսյան** - «Մանկավարժական հաղորդակցման հիմնախնդիրները տարրական դպրոցում» թեմայով մագիստրոսական թեզի շրջանակում մագիստրոս Նարինե Հովհաննիսյանը ուսումնասիրել է տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության մասնագիրը, ապագա ուսուցչի կոմպետենցիաները հաղորդակցման վերաբերյալ, դիտման և հարցազրույցի մեթոդներով պետք է պարզի ձևավորվա՞ծ են արդյոք այդ կոմպետենցիաները գործող ուսուցիչների և ապագա ուսուցիչների մոտ, թե ոչ և արդյունքում պետք է մշակի դրանց ձևավորմանը նպաստող մանկավարժական պայմաններ:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Մինչև 20.11.2019թ. ամբողջացնել հեռակա մագիստրատուրա 3-րդ կուրսի մագիստրոսների թեզերը և պատրաստել ուսանողներին նախապաշտպանության:

**2. ԼՍԵՑԻՆ** - Մանկավարժական օլիմպիադայի կանոնադրության հաստատման մասին:

**Ն. Մարտիրոսյան** – Պատրաստել ենք 2020թ. մանկավարժական օլիմպիադայի կանոնադրությունը: Օլիմպիադայի նպատակն է նպաստել

ա)ավագ դպրոցականների մասնագիտական կողմնորոշմանը՝ ուսուցչի մասնագիտության նկատմամբ հետաքրքրության առաջացմանը,

բ) բակալավրիատի ուսանողների և մագիստրանտների մանկավարժական գիտելիքների խորացմանը, պրակտիկ գործունեություն ծավալելու կարողությունների և հմտությունների ամրապնդմանը, մանկավարժական մտածելակերպի ձևավորմանը:

Օլիմպիադան անցկացվելու է 3 փուլով: Կանոնադրության մեջ հստակ ներկայացված են օլիմպիադայի անցկացման ժամկետները, յուրաքանչյուր փուլի առաջադրանքների ընդհանուր բովանդակությունը և գնահատման չափանիշները: /Կանոնադրությունը կցվում է/

Օլիմպիադայի ավարտին մասնակիցները կստանան մասնակցության մասին հավաստագրեր, իսկ հաղթողները (առաջին, երկրորդ, երրորդ տեղեր) նվերներ և դիպլոմներ:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հաստատել մանկավարժական համահամալսարանական օլիմպիադայի կանոնադրությունը: Հանձնարարել բոլոր դասախոսներին իրենց դասավանդած ֆակուլտետներում ապահովել բակալավրի և մագիստրատուրայի ուսանողների մասնակցությունը օլիմպիադային:

**ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝** **Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ**

**ՔԱՐՏՈՒՂԱՐ՝** **Է. ՅԱՐԱՋՅԱՆ**

**06.11.2019թ.**

## Արձանագրություն հոտ. 6

## 2019-2020 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի ՆԻՍՏԻ

Օրակարգ

1. Ավարտական աշխատանքների իրականացման ընթացքի մասին:

**ԼՍԵՑԻՆ** - Ավարտական աշխատանքների իրականացման ընթացքի մասին:

**Լ. Պողոսյան** - «Լիդերության բացահայտման սոցիալ-մանկավարժական պայմանները հանրակրթական դպրոցում» թեմայով ավարտական աշխատանքում լիդերային օժտվածության բացահայտման երկու մեթոդիկաների միջոցով իրականացնելու ենք հետազոտություն դպրոցներում, հարցումներ ենք իրականացնելու ուսուցիչների շրջանում՝ պարզելու որքանով են կարողանում ճանաչել այդ օժտվածությունը և ինչ աշխատանքներ են իրականացնում այդ օժտվածությունը զարգացնելու ուղղությամբ:

**Լ. Պողոսյան** - «Սոցիալական մանկավարժի աշխատանքը դևիանտ վարք ունեցող երեխաների հետ» թեմայով ավարտական աշխատանքում հետազոտություն ենք իրականացրել դևիանտ վարքի բացահայտման մեթոդիկաների միջոցով: Իրականացնելու ենք հարցումներ ուսուցիչների շրջանում և դիտումներ աջակցման կենտրոնում պրակտիկայի ընթացքում:

**Հ. Թադևոսյան** – «Ավագ դպրոցականներին զինվորական ծառայությանը պատրաստելու սոցիալ-մանկավարժական ուղիները» թեմայով ավարտական աշխատանքի 1-ին փուլում ուսումնասիրելու, բացահայտելու և համեմատելու ենք դպրոցականների զինվորական ծառայությանը վերաբերող աշխատանքների բովանդակությունը մեր դպրոցներում, այսինքն, փաստաթղթային ուսումնասիրություն ենք կատարելու: Կիրառելու ենք զրույցի, հարցաթերթի մեթոդը՝ տնօրենների, փոխտնօրենների, ՆԶՊ ուսուցիչների շրջանում՝ պարզելու համար ինչ դժվարություններ են առաջանում ուսուցման գործընթացում: Աշխատանքը ավարտելու ենք՝ ներկայացնելով առաջարկություններ ապագա զինվորի պատրաստման, կատարելագործման ուղղությամբ:

«Հանրակրթական դպրոցում սոցիալական մանկավարժ մասնագետի անհրաժեշտության հիմնավորումը» թեմայով ավարտական աշխատանքում դիտարկելու ենք 2 դպրոց, որոնցից մեկում կա սոցիալական մանկավարժ, մյուսում չկա, երկու դպրոցներն էլ իրականացանում են ներառական կրթություն: Համեմատության արդյունքում պետք է պարզենք ինչ դժվարություններ են առաջանում, ինչով է տարբերվում այդ դպրոցների աշխատանքն ու դրա բովանդակությունը: Նախատեսել ենք անցկացնել հարցաթերթիկային ուսումնասիրություն, զրույց: Վերջում ցանկանում ենք պատրաստել սոցիալական մանկավարժի պաշտոնի անձնագիր, այսինքն, ինչ հիմնական պարտականություններ, իրավասություններ, գործառույթներ ունի դպրոցում սոցիալական մանկավարժը և այդ հաստիքի բացակայությունը ինչ խնդիրներ է առաջացնում:

**Գ. Հակոբյան** – «Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության զարգացումը ուսուցման գործընթացում» թեմայով ավարտական աշխատանքում Շյուրի մեթոդիկայով հարցումներ է իրականացվելու ուսուցիչների շրջանում, ինքնագնահատման 2 հարցաթերթիկ է պատրաստվել և հարցազրույց է իրականացվելու աշակերտների շրջանում՝ պարզելու աշակերտների ինքնագնահատման մակարդակը:

**Ա. Թոփուզյան** – Կարող եք հարցումների հիման վրա տալ մոդել, որտեղ ներկայացված կլինի ինքնագնահատման էությունը: Այսինքն, մոդելավորել ինքնագնահատման էությունը:

**Գ. Հակոբյան** - «Կրտսեր դպրոցականների էկոլոգիական դաստիարակությունը» թեմայով ավարտական աշխատանքում հարցումներ է անցկացվելու ուսուցիչների շրջանում և ուսումնասիրվելու են տարրական դպրոցի կրթության բովանդակությունն արտահայտող փաստաթղթեր՝ դասագրքերը, ձեռնարկները, պարզելու, թե որ նյութերն են նպաստում այդ գործընթացի իրականացմանը: Ուսանողը Արարատի մարզից է, հետազոտությունը իրականացնելու է իրենց մարզի 3 դպրոցներում:

**Ն. Կարապետյան** – «Աղետներին դիմակայելու կարողությունների ձևավորումը տարրական դպրոցում» թեմայով ավարտական աշխատանքում փաստաթղթերի,

կրթական չափորոշիչների ուսումնասիրություն ենք կատարել, պատրաստել ենք հարցաթերթիկներ ուղղված ուսուցիչներին:

**Ա. Թոփուզյան** – Արդյո՞ք դա բավական է, գուցե աշակերտների շրջանում էլ հարցումներ անցկացնեք:

**Ն. Կարապետյան** - «Բնապահպանական միջոցառումների կազմակերպման մեթոդները տարրական դպրոցում» թեմայով ավարտական աշխատանքի համար պլանավորել ենք հարցաթերթիկի միջոցով հասկանալ ինչ վերաբերմունք ունեն ուսուցիչները բնապահպանական միջոցառումների կրթական, դաստիարակչական նշանակության վերաբերյալ և հարցազրույց է իրականացվելու միջոցառումների բոլոր մասնակիցների հետ, պարզելու, թե ինչ տվեց այդ միջոցառումն իրենց:

**Ա. Թոփուզյան** – Իսկ դիտարկո՞ւմ: Չէ որ դուք ուզեք – չուզեք դիտարկելու եք այդ միջոցառումները:

**Մ. Ասատրյան** – «Փոխներգործուն մեթոդների կիրառման արդյունավետությունը տարրական դպրոցի ուսուցման գործընթացում» թեմայով ավարտական աշխատանքի շրջանակներում հարցաթերթիկ է մշակվել ուղղված ուսուցիչներին՝ պարզելու մեթոդների կիրառման արդյունավետությունը:

**Ա. Թոփուզյան** – Կարող եք նաև դիտումներ իրականացնել, որևէ մեթոդ վերցնել և վերլուծել SWOT-ով:

**Լ. Նազարյան** – «Դեռահասների վարքային շեղումների կանխարգելումը» թեմայով ավարտական աշխատանքն իրականացնելու համար ուսանողը Վարդաշենի թիվ 1 հատուկ դպրոցում պրակտիայի ընթացքում ընտրել է վարքային շեղում ունեցող մեկ երեխա և մանկավարժական աջակցության տեխնոլոգիայով աշխատանք է իրականացրել երեխայի հետ: Այժմ կատարվում է արդյունքների վերլուծություն:

**Ա. Թոփուզյան** – Կարող եք այդ դեպքի ուսումնասիրության արդյունքում առաջարկություններ ներկայացնել կամ մանկավարժական պայմաններ մշակել այդ ուղղությամբ:

**Ն. Մարկոսյան** – «Սոցիալական մանկավարժի դերը զարգացման կենտրոններում» թեմայով ավարտական աշխատանքում պատրաստվում ենք սոց. հարցման միջոցով

պարզել արդյո՞ք զարգացման կենտրոններն ունեն սոցիալական մանկավարժ, թե ոչ, եթե ունեն ի՞նչ գործառույթներ են իրականացնում, եթե չունեն ո՞վ է այդ գործառույթներն իրականացնում: Հետազոտության արդյունքում կներկայացնենք առաջարկություններ զարգացման կենտրոնների սոցիալական մանկավարժի գործառույթների վերաբերյալ:

**Գ. Եգանյան** – «Սոցիալական մանկավարժի աշխատանքը տարրական դպրոցում» թեմայով ավարտական աշխատանքի շրջանակում ուսանողն իրականացրել է զրույց աշակերտների հետ և հարցաթերթիկներ է կազմել ծնողների և ուսուցիչների համար՝ պարզելու, թե որքանով է օգնում սոցիալական մանկավարժը աշակերտներին, ինչ աշխատանքներ է իրականացնում նրանց հետ:

**Գ. Հարությունյան** – «ՀՀ-ում բազմազավակ ընտանիքների արդի հիմնախնդիրներն ու դրանց լուծման սոցիալ-մանկավարժական ուղիները» թեմայով ավարտական աշխատանքի իրականացման համար նախատեսված է հարցաթերթիկային հարցում, բազմազավակ ընտանիքների հիմնախնդիրները բացահայտելու և կարիքները գնահատելու համար: Արդյունքում կմշակվեն այդ հիմնախնդիրների լուծման սոցիալ-մանկավարժական ուղիներ:

**Ա. Թոփուզյան** – Ամբիոնում կազմվել է ավարտական աշխատանք գրող ուսանողների հետ հանդիպումների գրաֆիկ, խնդրում եմ նախապատրաստել ուսանողներին: Հարցումներ իրականացնել առնվազն 50 հոգու շրջանում, այլապես Ձեր արածը հետազոտություն չի համարվի:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Ընդունել ի գիտություն ավարտական աշխատանքների ղեկավար դասախոսների հաղորդումը աշխատանքների իրականացման մեթոդների և ձևերի մասին: Խստորեն հետևել ավարտական աշխատանքներ գրող ուսանողների հետ հանդիպումների գրաֆիկին:

**ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ**

**ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ**

**13.11.2019թ.**

Արձանագրություն հոր. 7

**2019-2020 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ի ՆԻՍՏԻ**

Օրակարգ

1. Արմինե Աղվանի Բաղդասարյանի «Սովորողների էկոլոգիական մշակույթի ձևավորման մեթոդները, միջոցներն ու ձևերը հիմնական դպրոցում» խորագրով ուսումնամեթոդական ձեռնարկը տպագրության երաշխավորելու մասին:
2. Ամբիոնի աշխատանքային հանձնաժողովների նոր կազմը հաստատելու մասին:
3. Արցախի պետական համալսարանի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի 1-ին տարվա հայցորդ Օքսանա Արամայիսի Գասպարյանի թեկնածուական ատենախոսության թեմայում փոփոխություն կատարելու մասին:
4. 2019-2020 ուս. տարում Սկզբնական կրթության ֆակուլտետի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի 3-րդ կուրսի Մանկավարժության ամբիոնի գծով մագիստրոսական ատենախոսությունների նախապաշտպանությունների արդյունքների մասին:
5. Սեմինար՝ ՛՛Դպրոցի կառավարման ժամանակակից մոդելները՛՛ թեմայով: /զեկուցող՝ Լ. Ասատրյան/

1. **ԼՍԵՑԻՆ** - Արմինե Աղվանի Բաղդասարյանի «Սովորողների էկոլոգիական մշակույթի ձևավորման մեթոդները, միջոցներն ու ձևերը հիմնական դպրոցում» խորագրով ուսումնամեթոդական ձեռնարկը տպագրության երաշխավորելու մասին:

**Ա. Բաղդասարյան** - «Սովորողների էկոլոգիական մշակույթի ձևավորման մեթոդները, միջոցներն ու ձևերը հիմնական դպրոցում» խորագրով ուսումնամեթոդական ձեռնարկի վերաբերյալ կա երկու կարծիք տրված՝ Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական մանկավարժական համալսարանի ‹‹Մանկավարժության›› ամբիոնի վարիչ մ.գ.դ., պրոֆեսոր Պ. Գևորգյանի և Երևանի պետական համալսարանի ‹‹Աշխարհագրության և

երկրաբանության›› ֆակուլտետի դոցենտ, մ.գ.թ. Վ. Գրիգորյանի կողմից: Գրախոսները արժևորել են ձեռնարկը և դրա հրատարակությունը խիստ օգտակար են համարում:

**Լ. Ասատրյան** – Այս աշխատանքը քննարկվել է մեր նախկին՝ մանկավարժության տեսության և պատմության ամբիոնում և որոշում է ընդունվել երաշխավորել տպագրության: Առաջարկում եմ որոշումը թողնել ուժի մեջ:

**Ա. Թոփուզյան** - Ելնելով գրախոսների կարծիքներից և հաշվի առնելով նախկին ամբիոնի ընդունած որոշումը՝ կարծում եմ ուսումնամեթոդական ձեռնարկը կարելի է երաշխավորել հրատարակության և առաջարկում եմ այդ խնդրանքով դիմել համալսարանի գիտական խորհրդին՝ այն հրատարակության թույլտվություն ստանալու համար:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Արմինե Աղվանի Բաղդասարյանի «Սովորողների էկոլոգիական մշակույթի ձևավորման մեթոդները, միջոցներն ու ձևերը հիմնական դպրոցում» խորագրով ուսումնամեթոդական ձեռնարկը երաշխավորել տպագրության և ներկայացնել համալսարանի գիտական խորհրդի քննարկմանը:

Ամբիոնի 26 անդամներից նիստին ներկա էին 25-ը, որից կողմ քվեարկեց 25-ը, դեմ՝0, ձեռնպահ՝0:

2. **ԼՍԵՑԻՆ** - Ամբիոնի աշխատանքային հանձնաժողովների նոր կազմերը հաստատելու մասին:

**Ա. Թոփուզյան** – Ամբիոնի անդամների համալրման հետ կապված որոշակի փոփոխություններ ենք կատարել ամբիոնի աշխատանքային հանձնաժողովների կազմերում՝ հաշվի առնելով Ձեր առաջարկությունները: Ուստի առաջարկում եմ հաստատել ամբիոնի աշխատանքային հանձնաժողովների նոր կազմերը:

| **Հ/հ** | **Հանձնաժողովի անվանումը** | **Անդամներ** |
|---|---|---|
| **1.** | Որակի հանձնաժողով | **Նախագահ**՝ Լ. Նազարյան<br>**անդամներ**՝ Ա. Մանուկյան<br>Գ. Հակոբյան<br>Ն. Մարկոսյան |
| **2.** | Ուսանողների ճանաչողական, ուսումնահետազոտական պրակտիկայի | **Նախագահ**՝Գ. Հարությունյան<br>**անդամներ**՝Մ. Ասատրյան |

| | | |
|---|---|---|
| | կազմակերպման և շահառուների հետ կապի հանձնաժողով | Գ. Եգանյան |
| **3.** | Գիտա-հետազոտական աշխատանքի համակարգման հանձնաժողով | **Նախագահ՝** Լ. Ասատրյան<br>**անդամներ՝** Լ. Պողոսյան<br>Ս. Ջանիկյան |
| **4.** | Միջազգային կապերի իրականացման հանձնաժողով | **Նախագահ՝** Ս. Սիսյան<br>**անդամներ՝** Ն. Կարապետյան,<br>Մ. Գևորգյան<br>Ս. Մինասյան |
| **5.** | Ուսումնական գործունեության և ուսումնամեթոդական աշխատանքների համակարգման հանձնաժողով | **Նախագահ՝** Հ. Թադևոսյան<br>**անդամներ՝** Ա. Դալլաքյան,<br>Ա. Հակոբյան |
| **6.** | Դպրոցի հետ տարվող աշխատանքի կազմակերպման հանձնաժողով | **Նախագահ՝** Գ. Աղուզումցյան<br>**անդամներ՝** Ն. Մարտիրոսյան<br>Ի.Բաբայան |
| **7.** | ՊԴԱ-ի վերապատրաստման հարցերով զբաղվող հանձնաժողով | **Նախագահ՝** Ա. Հովհաննիսյան<br>**անդամներ՝** Ա. Բաղդասարյան<br>Զ. Ասատրյան |

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հաստատել ամբիոնի աշխատանքային հանձնաժողովների նոր կազմերը և հանձնարարել յուրաքանչուր հանձնաժողովի նախագահին 1 ամսվա ընթացքում ներկայացնել հանձնաժողովի աշխատանքային պլանը:

3. **ԼՍԵՑԻՆ** – Արցախի պետական համալսարանի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի հայցորդ Օքսանա Արամայիսի Գասպարյանի թեկնածուական ատենախոսության թեմայում փոփոխություն կատարելու մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Ա. Թոփուզյանը, Լ. Ասատրյանը, Հ. Թադևոսյանը, Լ. Պողոսյանը

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հաստատել Օքսանա Արամայիսի Գասպարյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ. «Դեռահասների սոցիալականացման գործընթացի վրա տեղեկատվական տեխնոլոգիաների ներգործության մանկավարժական ուղղորդման պայմանները»: Գիտական ղեկավար մ.գ.դ., պրոֆեսոր Լաուրա Ասատրյան:

4. **ԼՍԵՑԻՆ** - 2019-2020 ուս. տարում Սկզբնական կրթության ֆակուլտետի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի 3-րդ կուրսի Մանկավարժության ամբիոնի գծով

մագիստրոսական ատենախոսությունների նախապաշտպանությունների արդյունքների մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Ա. Թոփուզյան, Ա. Հովհաննիսյան, Լ.Պողոսյան, Ս. Սիսյան, Ի. Բաբայան, Ա. Դալլաքյան,

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Թույլատրել ներքոհիշյալ ուսանողների մագիստրոսական ատենախոսությունների հրապարակային պաշտպանությունը:

| Հ/հ | Թեզի թեմա | Կատարող | Գիտական ղեկավար |
|---|---|---|---|
| 1. | Հանդուրժողականությունն իբրև մանկավարժի կոմպետենցիա: | Գենջոյան Աստղիկ | Ա. Դալլաքյան |
| 2. | Տարրական դպրոցի ուսուցչի մանկավարժական նկարագիրը և նրա կոմպետենցիաները: | Հակոբյան Քրիստինե | Ի. Բաբայան |
| 3. | Ընտանիք-դպրոց համագործակցությունը կրտսեր դպրոցում՝ որպես անձի ձևավորման նախապայման: | Աթաբեկյան Լիա | |
| 4. | Ընտանեկան արժեքների, սովորույթների և ավանդույթների դերը երեխայի դաստիարակության գործընթացում: | Ավետիսյան Արաքսյա | |
| 5. | Լիդերության որակների ձևավորման մանկավարժական պայմանները կրտսեր դպրոցականների մոտ: | Ղազարյան Անուշ | Լ. Նազարյան |
| 6. | Էլեկտրոնային ուսուցման համակարգի ազդեցությունը ՀՊՄՀ ուսանողների առաջադիմության վրա: | Զախարյան Կարինե | |
| 7. | Մանկավարժական բուհի ուսանողի ինքնագնահատման կարողությունների կատարելագործման հիմնախնդիրը: | Զոհրաբյան Մերի | |
| 8. | Գեղագիտական դաստիարակությունը կրտսեր դպրոցում: | Մակի Իշօ | Ա. Հովհաննիսյան |
| 9. | Դպրոց-ընտանիք համագործակցության հիմնախնդիրը տարրական դպրոցում: | Սահակյան Լիանա | Ս. Սիսյան |
| 10. | Ուսուցչի հաղորդակցական ոճերի հիմնախնդիրը տարրական դպրոցում: | Ալոյան Թերեզա | |
| 11. | Մանկավարժի դերը կրտսեր դպրոցականի արժեհամակարգի ձևավորման գործում: | Տերտերյան Սոֆյա | Գ. Եգանյան |
| 12. | Վեցամյա երեխայի դպրոցի նախապատրաստման | Գևորգյան Շաքե | Ն. Մարտիրոսյան |

| | | | |
|---|---|---|---|
| | հիմնախնդիրները ժամանակակից մանկավարժության մեջ: | | |
| **13.** | Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հանդեպ հանդուրժողականության ձևավորումը տարրական դպրոցում | Ասպատուրյան Ալիսա | Ն. Մարկոսյան |
| **14.** | Աշակերտների հարմարման հիմնախնդիրը տարրականից միջին դպրոց անցումային փուլում | Ավետիսյան Աննա | |
| **15.** | Մանկավարժական հաղորդակցման հիմնախնդիրները տարրական դպրոցում | Հովհաննիսյան Նարինե | Հ. Թադևոսյան |

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ

20.11.2019թ.

## Արձանագրություն հոդ. 8

## 2019-2020 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի ՆԻՍՏԻ

Օրակարգ

1. Մանկավարժության ամբիոնի հայցորդների և ասպիրանտների ատեստավորման մասին:
2. Մանկավարժության ամբիոնի ասպիրանտ Միշա Թադևոսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի մասին:
3. Մանկավարժության ամբիոնի հայցորդ Լիլիթ Անտոնյանի թեկնածուական ատենախոսության թեմայի մասին:
4. Ա. Սարգսյանի հաղորդումը Google Classroom էլ. հարթակի վերաբերյալ:
5. «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու մասին:

1. ԼՍԵՑԻՆ - Մանկավարժության ամբիոնի հայցորդների և ասպիրանտների ատեստավորման մասին: /հաշվետվությունները կցվում են/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Թոփուզյան, Լ. Ասատրյան, Լ. Պողոսյան, Ա. Մանուկյան, Հ. Թադևոսյան

ՈՐՈՇԵՑԻՆ – Ատեստավորել ներքոհիշյալ հայցորդներին և ասպիրանտներին՝ 2019թ. կատարած աշխատանքների հիման վրա:

1. Անտոնյան Լիլիթ /հայցորդ/ - ղեկավար՝ Ա. Թոփուզյան
2. Սարգսյան Անուշ /հայցորդ/ - ղեկավար՝ Ա. Թոփուզյան
3. Պետրոսյան Արևիկ /հայցորդ/ - ղեկավար՝ Մ. Մկրտչյան
4. Հակոբյան Արմեն /հայցորդ/ - ղեկավար՝ Ի. Սարգսյան
5. Գալստյան Աննա /հայցորդ/ - ղեկավար՝ Ա. Թոփուզյան
6. Հովսեփյան Աստղիկ /հայցորդ/ - ղեկավար՝ Լ. Ասատրյան
7. Սարգսյան Անուշ /ասպիրանտ/ - ղեկավար՝ Հ. Թադևոսյան
8. Յարազյան Էմմա /ասպիրանտ/ - ղեկավար՝ Լ. Պողոսյան

9. Գևորգյան Մարիա /ասպիրանտ/ - ղեկավար՝ Լ. Ասատրյան
10. Մկրտչյան Վարդիթեր /ասպիրանտ/ - ղեկավար՝ Լ. Ասատրյան
11. Գինոսյան Սյուզաննա /ասպիրանտ/ - ղեկավար՝ Լ. Պողոսյան

2. **ԼՍԵՑԻՆ -** Մանկավարժության ամբիոնի ասպիրանտ Միշա Թադևոսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ -** Ա. Թոփուզյանը, Լ. Ասատրյանը, Ա. Մանուկյանը

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Հաստատել Միշա Թադևոսյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ հետևյալ խորագրով «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական հիմնարկներում կրթության կազմակերպման հիմնախնդիրները»: Գիտական ղեկավար նշանակել մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Թոփուզյանին:

Ամբիոնի 26 անդամներից ներկա էր 25-ը, որից "կողմ" քվեարկեցին 25-ը, "դեմ"՝ 0:

3. **ԼՍԵՑԻՆ -** Մանկավարժության ամբիոնի հայցորդ Լիլիթ Անտոնյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ -** Ա. Թոփուզյանը, Լ. Պողոսյանը, Ն. Մարտիրոսյանը

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Հաստատել Լիլիթ Անտոնյանի թեկնածուական ատենախոսության հետևյալ թեման՝ «Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը դպրոցի կառավարման գործընթացում»: Գիտական ղեկավար նշանակել մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Թոփուզյանին:

Ամբիոնի 26 անդամներից ներկա էր 25-ը, որից "կողմ" քվեարկեցին 25-ը, "դեմ"՝ 0:

**4. ԼՍԵՑԻՆ -** Ա. Սարգսյանի հաղորդումը Google Classroom էլ. հարթակի վերաբերյալ:

**Ա. Սարգսյան** – Նախորդ ռեկտորատի նիստում ներկայացրել եմ հաշվետվություն Google Classroom էլ. հարթակում դասախոսների և ուսանողների կատարած աշխատանքի և դրսևորած ակտիվության վերաբերյալ: Համաձայն 2018թ. հուլիսի 3-ի ՀՊՄՀ գիտական խորհրդի N 5 որոշման՝ այսուհետև մշտադիտարկումն իրականացվելու է ամբիոնի կողմից՝ ըստ նախապես հաստատված ցուցիչների, իսկ ընդհանուր վերահսկողությունը իրականացվում է մեր բաժնի կողմից: Ուստի ես հաշվետվությունը պատրաստել եմ

ամբիոնի ներկայացրած հաշվետվությունների հիման վրա: Սակայն պատահականության սկզբունքով ուսումնասիրել եմ նաև մի քանի դասընթացների էլեկտրոնային էջերը, որի արդյունքնում մանկավարժության ամբիոնի հետ կապված խնդիրներ չեմ նկատել: Միակ առաջարկությունը որ ունեմ այն է, որ նկարագրերում ավելացնեք գնահատվող հանձնարարության մասին տեղեկատվությունը և նշեք, թե ՄԿԾ-ի որ վերջնարդյունքն է այն ապահովում: Առանձին իհարկե տրված է գնահատվող հանձնարարության հիմնավորումը, սակայն ցանկալի է, որ այն երևա նաև առարկայական նկարագրում:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Ա. Սարգսյանի հողորդումն ընդունել ի գիտություն: 2019-2020 ուս. տարվա 2-րդ կիսամյակի առարկայական նկարագրերում ներառել նաև գնահատվող հանձնարարության և դրա գնահատման մասին տեղեկատվությունը:

**5.ԼՍԵՑԻՆ** - «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու մասին:

**Ա. Թոփուզյան** – Բոլորիդ հայտնի է, որ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծի աշխատանքային տարբերակի մասին մեր առաջարկությունները արդեն ներկայացրել ենք, այժմ մեզ են ուղարկել օրենքի նախագծի վերանայված տարբերակը, որը ուղարկել ենք նաև ձեզ: Խնդրում եմ ուսումնասիրեք ինչ փոփոխություններ են արվել, համեմատեք նախկին՝ աշխատանքային տարբերակի հետ և ներկայացրեք Ձեր առաջարկությունները:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Ներկայացնել առաջարկությունները մինչև 09.12.2019թ.:

**ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ**

**ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ**

**04.12.2019թ.**

**Արձանագրություն հոր. 9**

**2019-2020 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի ՆԻՍՏԻ**

**Օրակարգ**

1. 2019թ. ամբիոնի հաշվետվության մասին:
2. Google Classroom հարթակի մշտադիրտարկման մասին: /զեկուցող՝ Լ. Նազարյան/
3. 2019-2020 ուս. տարվա 1-ին կիսամյակի դասալսումների արդյունքների մասին: /զեկուցող՝ Մ. Մանուկյան/

**1. ԼՍԵՑԻՆ** - 2019թ. ամբիոնի հաշվետվության մասին:

**Ա. Թոփուզյան** – Պատրաստ է արդեն 2019թ. հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածն ընդգրկող ամբիոնի հաշվետվությունը: Հաշվետվության մեջ հիմնականում անդրադարձել ենք ռազմավարական պլանի կատարմանը, մասնավորապես, հետևյալ բաժիններին.

- ✓ ուսումնական գործունեություն, ՄԿԾ, կառավարում,
- ✓ ուսումնամեթոդական գործունեություն
- ✓ Գիտահետազոտական աշխատանք, ուսանողների հետ տարվող աշխատանքներ,
- ✓ Արտաքին կապեր և միջազգային գործունեություն
- ✓ Մասնագիտական կողմնորոշման և մարքեթինգային գործունեություն
- ✓ Որակի ապահովում, ՊԴԱ-ի հետ տարվող աշխատանքներ.

/հաշվետվությունը կցվում է/

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Լ. Ասատրյան, Լ. Նազարյան, Գ. Հարությունյան, Ս. Սիսյան, Հ. Թադևոսյան, Գ. Աղուզումցյան, Ա. Հովհաննիսյան

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հաստատել հաշվետվությունը, առաջարկությունները և դիտողությունները մեկ շաբաթվա ընթացքում ներկայացնել ամբիոն:

**2. ԼՍԵՑԻՆ** - Google Classroom հարթակի մշտադիրտարկման մասին: /զեկուցող՝ Լ. Նազարյան/

**Լ. Նազարյան** - 2019-2020 ուս. տարվա 1-ին կիսամյակի մշտադիտարկումը իրականացվել է ըստ հետևյալ չափանիշների.

1. Google Classroom հարթակում համապատասխան առարկայի էլեկտրոնային էջին դասախոսի ու բոլոր ուսանողների կցվածությունը:
2. Առարկայի էլեկտրոնային էջում ամբողջական ԱՈՒՄՓ-ի առկայությունը:
3. Առարկայի էլեկտրոնային էջում միջանկյալ ստուգումների, ստուգարքների, քննության հարցաշարերի, դրանց անցկացման ընթացակարգի վերաբերյալ տեղեկատվության առկայություն:
4. Դասախոսի կողմից տվյալ էջում նվազագույն ակտիվության դրսևորում՝ ամսեկան կտրվածքով:
5. Google Classroom հարթակի առարկայական էջում գնահատվող էլեկտրոնային առաջադրանքների և դրանց ստուգման չափանիշների առկայություն:
6. Google Classroom հարթակի առարկայական էջում մուլտիմեդիոն և այլ նյութերի առկայություն՝ բխող առարկայի պարտադիր անհրաժեշտությունից:

Ըստ սահմանված չափանիշների՝ 2019-2020 ուս. տարվա 1-ին կիսամյակի մշտադիտարկման արդյունքում ստացվեցին հետևյալ կատարողական ցուցանիշները.

1. Ըստ առաջին չափանիշի առկա է 100% կատարողականություն:
2. Ըստ երկրորդ չափանիշի առկա է 100% կատարողականություն, սակայն ԱՈՒՄՓ-ներում առկա են որոշակի տեխնիկական խնդիրներ և անհամապատասխանություններ, որոնք էական ազդեցություն չունեն:
3. Երրորդ չափանիշի ուղղությամբ ևս աշխատանքները իրականացվել են ամբողջությամբ, որոշակի անհամաժանակայնություն է նկատվել հարցաշարերի տեղադրման հարցում, ինչը պայմանավորված է ուսումնական պրակտիկայի չկանոնակարգված գրաֆիկով:
4. Ըստ չորրորդ չափանիշի առկա է 90% կատարողականություն, որոշ դեպքերում դասախոսները իրենց ակտիվությունը հարթակում կառուցում են միայն խիստ

անհրաժեշտ հարցերի շուրջ և սակավ հաղորդակցության մեջ են գտնվում ուսանողների հետ: /Ս. Խաչատրյան, Ա. Մանուկյան/

5. Հինգերորդ չափանիշի ուղղությամբ ևս առկա է ամբողջական կատարողականություն, այնուհանդերձ հստակ չէ գնահատվող էլեկտրոնային առաջադրանքների ստեղծման մեթոդաբանությունը:
6. Ըստ վեցերորդ չափանիշի անհրաժեշտ է նշել, որ ոչ բոլոր դասախոսներն են լրացուցիչ նյութեր, ցուցադրական ռոլիկներ և այլ մուլտիմեդիոն գործիքներ օգտագործում և տեղադրում իրենց էջերում:

**ՈՐՈՇԵՑԻՆ** –1. Ի գիտություն ընդունել Լ. Նազարյանի հաղորդումը: 2. Բոլոր դասախոսներին հանձնարարել Google classroom-ի աշխատանքը իրականացնել վերոնշյալ 6 չափանիշների համաձայն: 3. Պարոն Նազարյանին հանձնարարել եռամսյակը մեկ Google classroom հարթակի մշտադիտարկում անել և զեկուցել ամբիոնի նիստում:

**3. ԼՍԵՑԻՆ** - 2019-2020 ուս. տարվա 1-ին կիսամյակի դասալսումների արդյունքների մասին: / Զեկուցող՝ Մ. Մանուկյան, հաշվետվությունը կցվում է:/

**ՈՐՈՇԵՑԻՆ** – 1. Ի գիտություն ընդունել Մ. Մանուկյանի հաղորդումը:

2. Հանձնարարել ամբիոնի բոլոր դասախոսներին հաշվի առնել Մ. Մանուկյանի և դասալսման մասնակից մյուս դասախոսների առաջարկություններն ու նկատառումները՝ 2-րդ կիսամյակում իրենց առարկաների դասավանդման ընթացքում:

**ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ**

**ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ**

**18.12.2019թ.**

## Արձանագրություն Նո. 10

## 2019-2020 ՈՒՍ.ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի ՆԻՍՏԻ

**Օրակարգ**

1. 2019-2020 ուս. տարվա 2-րդ կիսամյակում բակալավրիատում դասավանդվող առարկաների փաթեթների հաստատման մասին:

**ԼՍԵՑԻՆ** - 2019-2020 ուս. տարվա 2-րդ կիսամյակում բակալավրիատում դասավանդվող առարկաների փաթեթների հաստատման մասին:

**Գ. Հակոբյան** – Ա. Հովհաննիսյանի կազմած **«Հայ դպրոցի և մանկավարժական մտքի պատմություն»** առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է ‹‹Սոցիալական մանկավարժություն›› մասնագիտության բակալավր 3-րդ կուրսի համար:

Առարկայի նկարագրում հստակ, պահանջվող չափանիշների համաձայն ներկայացված են բոլոր բաղադրիչները՝ դասընթացի համառոտ բովանդակությունը, նպատակը, կրթական ելքային արդյունքները, հիմնական և լրացուցիչ գրականության ցանկը, միջանկյալ ստուգման արդյունքների գնահատման չափանիշները: Դասընթացի շրջանակներում մասնագիտական կրթական ծրագրի վերջնարդյունքների ձևավորումն արտահայտված է համապատասխան բաղադրիչների ներկայացմամբ:

Առարկայի թեմատիկ տրոհման մեջ տրված են դասընթացի 12 թեմաներն ու 5 գործնական պարապմունքները, դրանց ուսուցման և ուսումնառության մեթոդները, քննարկվող հարցերի և առաջադրանքների համախումբը:

Առարկայի դասախոսություններն ու թեմատիկ տրոհումը կազմված են լիարժեք համապատասխանությամբ: Առաջարկում եմ հաստատել:

**Գ. Հակոբյան** – Հ. Թադևոսյանի կազմած **«Սոցիալական մանկավարժություն»** առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության բակալավր 3-րդ կուրսի համար:

Առարկայի նկարագիրը կազմված է ըստ պահանջվող չափանիշների: Առարկայի նկարագրի բաղադրիչները՝ նպատակը, կրթական ելքային արդյունքները լիովին համապատասխանում են դասընթացի բովանդակությանը, հիմնական և լրացուցիչ գրականությունն արդիական է: Հանգամանալից և հիմնավորված ներկայացված են գնահատման բաղադրիչների ստուգման

չափանիշները: Դասընթացի շրջանակներում մասնագիտական կրթական ծրագրի վերջնարդյունքների ձևավորումն արտահայտված է համապատասխան բաղադրիչների ներկայացմամբ. մասնագիտական կրթական ծրագրի վերջնարդյունքները լիովին համապատասխանում են դասընթացի նպատակին ու բովանդակությանը:

Առարկայի թեմատիկ տրոհման մեջ ներկայացված թեմաների ու գործնական պարապմունքների ուսուցման և ուսումնառության մեթոդներն արդիական են ու բազմազան, քննարկվող հարցերն ու առաջադրանքները համակողմանի արտացոլում են ուսումնական նյութի բովանդակության յուրացմանը ներկայացվող պահանջները:

Առարկայի դասախոսություններն ու թեմատիկ տրոհումը կազմված են լիարժեք համապատասխանությամբ: Առաջարկում եմ հաստատել:

**Ա. Հովհաննիսյան** – Մ. Գևորգյանի կազմած **«Մանկավարժական հաղորդակցում»** /ընտրովի դասընթաց/ առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է «Ռուսաց լեզու և գրականություն» մասնագիտության բակալավր 3-րդ կուրսի համար:

Դասընթացի համար հատկացված է 30 ժամ, որից 22 ժամ դասախոսություն և 8 ժամ գործնական: Առարկայական նկարագրում ներկայացված է դասընթացի նպատակը, կրթական ելքային վերջարդյունքները, որոնք բխում են դասընթացի նպատակից:

Սակայն ունենք որոշ առաջարկություններ և նկատառումներ.

1. Առարկայական նկարագրում չկան Google classroom–ում տեղադրվող գնահատվող հանձնարարությունները՝ իրենց հիմնավորումներով:
2. Դասախոսությունների փաթեթում՝ / թեմա 3 / դասախոսությունից հետո չկան ո՛չ հարցեր, ո՛չ առաջադրանքներ:

Վերոնշյալ դիտարկումները քննարկել ենք հեղինակի հետ և դրանք արդեն ուղղված են, ուստի առաջարկում եմ փաթեթը հաստատել:

**Ա. Հովհաննիսյան** - Գ. Հակոբյանի կազմած **«Էթնոմանկավարժություն» /ընտրովի դասընթաց/** առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության բակալավր 3-րդ կուրսի համար:

Ուսումնամեթոդական փաթեթը համապատասխանում է անհրաժեշտ բոլոր չափանիշներին: Դասընթացի համար հատկացված է ընդհանուր 60 ժամ, որից 16 ժամը դասախոսություն, 4 ժամը գործնական աշխատանք: Դասախոսությունների և

գործնական պարապմունքների քանակը համապատասխանում է ուսումնական պլանով առարկայի համար նախատեսված լսարանային ժամերին:

Առարկայական նկարագրում, որը կազմված է նոր ձևաչափին համապատասխան, ներկայացված դասընթացի նպատակները, կրթական ելքային արդյունքները և կրթական ծրագրի վերջնարդյունքները փոխկապակցված են: Դասընթացի կրթական ելքային վերջնարդյունքները՝ բխում են դասընթացի նպատակից, իսկ գործնական աշխատանքները բխում են ելքային վերջնարդյունքներից:

Դասընթացն աչքի է ընկնում գործնական աշխատանքների համար նախատեսված մեթոդների բազմազանությամբ՝ «Անկյուններ», դերախաղ, սոցիալական հոլովակի դիտում, խորանարդում, ուսումնահետազոտական նախագիծ, «5 րոպեանոց շարադրանք», բանավեճ և այլն: Փաթեթն ամբողջական է, ուստի առաջարկում եմ հաստատել:

**Ս. Ջանիկյան** – Ա. Մանուկյանի կազմած **«Մեդիակրթություն»** առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության բակալավր 4-րդ կուրսի համար: Ներկայացվող դասընթացի նկարագիրը, թեմատիկ տրոհումը և դասախոսությունների փաթեթը համապատասխանում են կրթական պահանջներին, թեմաները ներկայացված են հաջորդաբար և տրամաբանորեն փոխկապակցված: Ըստ թեմաների, ուսումնական շաբաթների թեմատիկ տրոհումը և դասախոսությունները համապատասխանում են: Գործնական պարապմունքների ընթացքում ձևավորվող կարողությունները համապատասխանում են ՄԿԾ վերջնարդյունքներին:

Նկատառումներ.

4. Թեմատիկ տրոհման և առարկայական նկարագրի մեջ օգտագործված գրականության ցանկը ծավալուն է:
5. Առարկայի դասիչը սխալ է գրված:

Առաջարկում եմ հաստատել փաթեթը:

**Լ. Նազարյան** - Գ. Եգանյանի կազմած **«Սոցիալ-մանկավարժական դիագնոստիկա»** առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է «Սոցիալական

մանկավարժություն›› մասնագիտության բակալավր 3-րդ կուրսի համար: Հստակ սահմանված է առարկայի նպատակը, ընտրված են կրթական ելքային արդյունքները, կրթական ծրագրի վերջնարդյունքները:

Տրված է ժամանակակից հիմնական ու լրացուցիչ գրականություն:

Գնահատման բաղադրիչները և կշիռները սահմնված են հստակ:

Առարկայի թեմատիկ տրոհումը համահունչ է բովանդակային ծածկույթին և տրված ժամաբաշխմանը:

Գործնական աշխատանքի մեթոդներն են. սեմինար, անհատական հետազոտական աշխատանք, բանավեճ, փորձագիտական գնահատում, սոցիալական հետազոտության ալգորիթմի կազմում, ինքնադիագնոստիկա:

Ընտրված մեթոդները թույլ են տալիս ապահովել նշված վերջնարդյունքները:

Դասախոսությունների շարադրանքը համապատասխանում է ներկայացված պահանջներին:

Առկա են որոշակի տեխնիկական վրիպակներ: Առաջարկում եմ հաստատել փաթեթը:

**Հ. Թադևոսյան** – Գ. Եգանյանի ներկայացրած **«Սոցիալական մանկավարժություն»** առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է ‹‹Սոցիալական մանկավարժություն›› մասնագիտության բակալավր 1-ին կուրսի համար: Ուսումնական պլանով նախատեսված է լսարանային 90 ժամ, որից 60-ը դասախոսություն, 30-ը՝ գործնական: Գործնական պարապմունքների ընթացքում նախատեսված են սեմինար, կլոր սեղան, դերային խաղ, հետազոտական աշխատանքներ: Վերջնարդյունքներն ապահովում են սոցիալական մանկավարժություն մասնագիտական կրթական ծրագրի մասնագրի 5 վերջնարդյունքների ձևավորումը:

**Եզրակացություն**

1. «Սոցիալական մանկավարժություն» դասընթացի քննարկվող փաթեթը համապատասխանում է առարկայական էլեկտրոնային ուսումնամեթոդական փաթեթների կառուցմանը ներկայացվող չափանիշներին, պահանջներին:
2. Առաջարկում եմ հաստատել փաթեթը:

**Հ. Թաղևոսյան** – Ն. Մարկոսյանի ներկայացրած **«Սոցիալական մանկավարժություն»** առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է «Սոցիոլոգիա» մասնագիտության բակալավր 2-րդ կուրսի համար: Ուսումնական պլանով նախատեսված է լսարանային 32 ժամ, որից 24-ը դասախոսություն, 8-ը՝ գործնական: Գործնական պարապմունքների ընթացքում նախատեսված են բանավեճ, հետազոտական աշխատանքներ, մանկավարժական իրավիճակների վերլուծություն: Վերջնարդյունքներն ապահովում են սոցիոլոգիա մասնագիտական կրթական ծրագրի մասնագրի 4 վերջնարդյունքների ձևավորումը:

**Եզրակացություն**

1. «Սոցիալական մանկավարժություն» դասընթացի քննարկվող փաթեթը համապատասխանում է առարկայական էլեկտրոնային ուսումնամեթոդական փաթեթների կառուցմանը ներկայացվող չափանիշներին, պահանջներին:
2. Առաջարկում եմ հաստատել:

**Ն. Մարկոսյան** – Գ. Աղուզումցյանի կազմած **«Գործնական մանկավարժություն»** առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության բակալավր 2-րդ կուրսի համար:

Փաթեթը, ընդհանուր առմամբ, համապատասխանում է անհրաժեշտ բոլոր չափանիշներին: Դասախոսությունների և գործնական պարապմունքների քանակը համապատասխանում է ուսումնական պլանով առարկայի համար նախատեսված լսարանային ժամերին: Դասընթացի խնդիրները համապատասխանում և բխում են դասընթացի նպատակից, կրթական ելքային վերջնարդյունքները՝ դասընթացի խնդիրներից, իսկ գործնական աշխատանքները՝ ելքային վերջնարդյունքներից: Առարկայական նկարագրում նշված է 23 հիմնական և 9 լրացուցիչ գրականության աղբյուր, որոնց մեծ մասը ժամանակակից գրականություն է: Դասընթացի համար հատկացված է 15 դասախոսության և 30 գործնական ժամեր: Գործնական ժամերի մեջ հեղինակը ներառել է հետևյալ աշխատանքները՝ մոդելավորում, մանկավարժական իրավիճակների վերլուծություն, դեպքի ուսումնասիրում, սեմինար, կլոր սեղան, նախագծային աշխատանք, դերային խաղ, տեսանյութի դիտում-քննարկում, թեստերի

մշակում, էսսե: Դասախոսությունների փաթեթի մեջ յուրաքնչյուր դասախոսությունից հետո առկա են ինքնաստուգման հարցեր և առաջադրանքներ: Առարկայական նկարագրի և թեմատիկ տրոհման մեջ առկա են տեխնիկական վրիպակներ և տառատեսակի անհամապատասխանություններ:

- Առաջարկություն՝ կարելի է դասընթացի միջանկյալ աշխատանքներից մեկը՝ գրավոր աշխատանքը փոխարինել մեկ այլ աշխատանքով: Օրինակ՝ հետազոտական աշխատանք, նախագիծ և այլն:

Առաջարկում եմ հաստատել փաթեթը:

**Գ. Հարությունյան** - Ն. Մարտիրոսյանի մշակած **«Սոցիալ-մանկավարժական պրակտիկում»** առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է ‹‹Սոցիալական մանկավարժություն›› մասնագիտության բակալավր 4-րդ կուրսի համար: Փաթեթը, ընդհանուր առմամբ, համապատասխանում է անհրաժեշտ բոլոր չափանիշներին: Դասընթացի համար հատկացված են 10 դասախոսության և 14 գործնական ժամեր: Առարկայական նկարագիրը կազմված է նոր ձևաչափին համապատասխան: Դասընթացի կրթական ելքային վերջնարդյունքները բխում են դասընթացի նպատակից, գործնական աշխատանքները՝ ելքային վերջնարդյունքներից: Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի վերջնարդյունքները՝ թվով 5 վերջնարդյունքներ /Ա1., Բ1., Գ1., Գ2., Գ3./: Առարկայական նկարագրում նշված Կրթական ելքային արդյունքների Մասնագիտական գիտելիք և իմացություն բաժնի առաջին վերջնարդյունքը նպատակահարմար չէ ներկայացնել /սահմանելու և մեկնաբանելու սոցիալ-մանկավարժական պրակտիկումի նպատակը, խնդիրները/, քանի որ դասընթացը շարունակվում է 2-րդ կիսամյակում, իսկ այդ վերջնարդյունքն առավել բնորոշ է 1-ին կիսամյակում ընդգրկված թեմային: Թվով 7 գործնական աշխատանքների համար առանձնացված մեթոդներն են՝ նախագիծ, հետազոտական աշխատանք, քեյս սթադի, դերային խաղ: Թեմատիկ տրոհման մեջ Գնահատում բաժնում բացակայում են մի քանի մեթոդների գնահատման չափանիշները /օրինակ՝ մուտք 2՝ էսսե, մուտք 3՝ նախագիծ, մուտք 6՝ PP ներկայացում, մուտք 11՝ դերային խաղ/: Առկա են

տեխնիկական վրիպակներ, մասնավորապես, համակարգչային շարվածքի և տառատեսակի տարբերություններ:

Նկատառումների մասին խոսել ենք հեղինակի հետ, դրանք արդեն ուղղված են: Առաջարկում եմ հաստատել փաթեթը:

**Գ. Եգանյան** – Ա. Հովհաննիսյանի մշակած **«Մանկավարժական հաղորդակցում»** դասընթացի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է ԿՀՍ ֆակուլտետի Սոցիալական մանկավարժություն մասնագիտության բակալավր 2-րդ կուրսի համար: Դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 75 ժամ, որից 44 ժամը դասախոսություն, 16-ը՝ գործնական: Դասընթացի կրթական ելքային արդյունքները, որոնք բխում են մասնագիտության մասնագրից, ձևավորվում են ինչպես գործնական, այնպես էլ տեսական դասաժամերի ընթացքում դասախոսի կողմից ճիշտ ընտրված փոխներգործուն մեթոդների կիրառմամբ:

Ուսումնամեթոդական փաթեթը ներկայացված է պահանջվող ձևաչափին համապատասխան: Այն բովանդակում է առարկայական նկարագիրը, թեմատիկ տրոհումը, դասախոսության 22 թեմա՝ յուրաքանչյուրը հիմնական և լրացուցիչ գրականության ցանկով, դասավանդման ու ուսումնառության մեթոդներով, առաջադրանքներով և ինքնաստուգման հարցերով, ինչպես նաև գործնական պարապմունքներ:

Գրականության ցանկն արդիական է, դասախոսությունների բովանդակությունը համապատասխանում է առաջադրված թեմաներին:

Ա. Հովհաննիսյանը դասընթացի շրջանակում ներկայացրել է մանկավարժական հաղորդակցման ոչ խոսքային հաղորդակցումը մանկավարժական գործընթացում, խոսքային հաղորդակցման մշակութային և գենդերային առանձնահատկությունները, մանկավարժական կոնֆիլիկտների տեսակները, ժեստերի և շարժումների լեզուն, մանկավարժական հաղորդակցման մոդելները, վոկալ աղմուկները, խոսքի մշակույթի ձևավորման հնարները, հաղորդակցման խոչընդոտները և դրանց հաղթահարման, կիրառման արդյունավետությունը մանկավարժական գործընթացում::

Սակայն ցանկանում եմ նշել, որ

1. «Մանկավարժական հաղորդակցում» դասընթացը առավել նպատակային կլիներ, եթե առարկայի գործնական ժամերը համարժեք լինեին տեսականին. այսինքն 30ժամ հատկացվեր դասախոսությանը, 30 ժամ՝ գործնականին, քանի որ առարկան կիրառական բնույթ ունի:

«Մանկավարժական հաղորդակցում» դասընթացը համապատասխանում է ՀՊՄՀ-ի դասընթացի կառուցմանը ներկայացվող պահանջներին: Առաջարկում եմ փաթեթը հաստատել:

**Ն. Կարապետյան** – Լ. Ասատրյանի մշակած **«Ես և շրջակա աշխարհը»** առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության բակալավր 3-րդ կուրսի համար: Ներկայացվող դասընթացի նկարագիրը, թեմատիկ տրոհումը և դասախոսությունների փաթեթը համապատասխանում են կրթական պահանջներին, թեմաները ներկայացված են հաջորդաբար և տրամաբանորեն փոխկապակցված: Ըստ թեմաների, ուսումնական շաբաթների թեմատիկ տրոհումը և դասախոսությունները համապատասխանում են:

Մշակված են գործնական և սեմինար պարպմունքների թեմատիկա, մեթոդական համալիր, որը կարևոր պայման է կրթական ելքային արդյունքների և ՄԿԾ վերջնարդյունքների համապատասխանության համար:

Նկատառումներ.

- Թեմատիկ տրոհման մեջ կարելի է վերանայել գրականության ցանկը:

Փաթեթն ամբողջական է, ուստի առաջարկում եմ հաստատել:

**Ն. Կարապետյան** - Ա. Դալլաքյանի մշակած **«Մասնագիտական կողմնորոշման հիմունքներ»** առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության բակալավր 2-րդ կուրսի համար: Դասընթացի նկարագիրը, թեմատիկ տրոհումը, դասախոսությունների փաթեթը համապատասխանում են կրթական պահանջներին, թեմաները ներկայացված են հաջորդաբար և տրամաբանորեն փոխկապակցված: Մշակված են կրթական ելքային արդյունքները, նշված են ՄԿԾ վերջնարդյունքները:

Նկատառումներ.

1. Դասընթացի նկարագրում անհրաժեշտ է տեղադրել գնահատման նոր բաղադրիչները:
2. Գրականության ցանկը վերանայել ըստ պահանջների:

Առաջարկում եմ հաստատել:

**Մ. Գևորգյան** - Ն. Մարկոսյանի ներկայացրած **«Մանկության սոցիալական պաշտպանության համակարգի կառավարում»** առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության բակալավր 4-րդ կուրսի համար: Դասընթացի նկարագիրը, թեմատիկ տրոհումը, դասախոսությունների փաթեթը համապատասխանում են ներկայացվող պահանջներին: Առաջադրված գործնական աշխատանքներն ու առաջադրանքները ապահովում են առարկայի կրթական ելքային արդյունքները և ՄԿԾ վերջնարդյունքները:

Նկատառումներ.

1. Դասընթացի թեմատիկ տրոհումը ներկայացված է հին ձևաչափով:

Հեղինակի հետ նախապես քննարկել ենք նկատառումը, որը արդեն վերանայվել և փոփոխվել է: Ուստի առաջարկում եմ հաստատել:

**Լ. Պողոսյան** – Ուսումնասիրել եմ տարբեր ֆակուլտետներում դասավանդվող **«Մանկավարժություն»** առարկայի մի քանի ուսումնամեթոդական փաթեթներ, որոնք մշակվել են տարբեր դասախոսների կողմից և նախատեսված են բակալավր 1-ին և 2-րդ կուրսերի համար: Ունեմ որոշ առաջարկություններ և դիտարկումներ:

**Կուրս՝** բակալավր 2-րդ,

**Մասնագիտություն՝** Երաժշտություն

**Դասախոս՝** Ա. Բաղդասարյան

1. **«Դաստիարակության նպատակը, խնդիրները, առանձնահատկությունները»** թեմայի «Ուսումնառության առաջադրանքներ» բաժնում դեռ սկզբունքները չանցած առաջադրանք է տրված «Ներկայացնել և վերլուծել ուսումնադաստիարակչական գործընթացում դաստիարակության սկզբունքների կիրառման օրինակներ»:
2. **4-րդ շաբաթ, տեսակը՝** Գործնական պարապմունք

***Մեթոդներ՝*** *խմբային հետազոտություն, սարդոստայն, քննարկում, քեյս սթադի, բանավեճ, PP ներկայացում*

Գործնական աշխատանքների բովանդակությունը, կատարվող աշխատանքները գործնականների ընթացքում նկարագրված չեն: Պարզ չեն, թե ինչ պետք է ուսանողները կատարեն գործնականների ժամանակ: Մեթոդները շատ են, քննարկման հարցերը անհասկանալի:

**6-րդ շաբաթ, տեսակը՝ ինտերակտիվ** դասախոսություն

**Մեթոդներ՝** բանավեճ, խմբային քննարկում

Բանավեճը գործնականի համար նախատեսված մեթոդ է, երկար պատրաստում է նախատեսում և արդյունավետ չէ կիրառել անգամ ինտերակտիվ դասախոսությունների ընթացքում: «Ուսումնառության առաջադրանքներ» բաժնում մեկ դասաժամի համար անգամ նշված է երկու բանավեճի թեմա:

**8-րդ շաբաթ, տեսակը՝** Գործնական պարապմունք

**Մեթոդներ՝** խմբային հետազոտություն, քեյս սթադի, դերախաղ, բանավեճ

Մեթոդները շատ են, հնարավոր չէ իրականացնել մեկ դասի ընթացքում: Բանավեճ կազմակերպելու համար պետք է մեկ ամբողջ դասաժամ: Ոչ մի գործնականի թեմա նշված չէ:

**12-րդ շաբաթ, տեսակը՝** գործնական

**Մեթոդներ՝** քեյս սթադի, խմբային, զույգերով և անհատական աշխատանք, դերախաղ, մտագրոհ, բանավեճ

Նշված է 11 քննարկվող հարց, սակայն աշխատանքի բովանդակությունը պարզ չէ:

**15-րդ շաբաթ, տեսակը՝** գործնական

**Մեթոդներ՝** քեյս սթադի, խմբային և զույգերով հետազոտական աշխատանք

Կրկին միայն քննարկվող հարցերն են...

Դասընթացի բովանդակության մեջ պետք է նշել այն թեմաները, որոնք ուսումնասիրելու են, ոչ թե նկարագրությունը:

Առարկայական նկարագրի ***Ընդհանրական/ փոխանցելի կարողությունները սխալ են:***

**Ընդհանուր առմամբ բոլոր նկարագրերի ելքային արդյունքները գրելու ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել բլյումի տաքսոնոմիայով ՝ տվյալ մակարդակին համապատասխանող բայերով:**

**Կուրս՝** բակալավր 1-ին,

**Մասնագիտություն՝** անգլերեն, իսպաներեն, գերմաներեն լեզու և գրակ.

**Դասախոս՝** Մ. Ասատրյան

**ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ** բաժնում ավել հատված է լրացրված:

Առարկայական նկարագրում ձևաչափի մեջ կարմիրով նշված հատվածներ կան, որոնք անհրաժեշտ է ջնջել:

Բանավեճ մեթոդը դասախոսությունների մեջ արդյունավետ չէ, առավել ևս, երբ նշված չէ բանավեճի թեման: Ավելի լավ է գրել քննարկում:

Թեմատիկ տրոհման մեջ անչափ շատ են տեխնիկական բնույթի խնդիրները: Նպատակը մի տեղ գրված է, մի տեղ ոչ, առկա են ավելորդ գծեր:

**3-րդ շաբաթ՝ գործանական աշխատանք** /նշված չէ, որ գործնական է լինելու/:

**Տեսակը՝ Սեմինար պարապմունք**

**Մեթոդները՝** Սահիկահանդեսներ, անհատական և զույգերով ներկայացում, համեմատական աղյուսակների կազմում.

Սեմինարի թեման նշված չէ: Քննարկվող հարցերը առկա են:

Դասախոսությունների մեջ շատ են նշված մեթոդները, սակայն ուսումնական առաջադրանքներում ընդամենը նշված է ներկայացնել և բնութագրել:

**5-րդ շաբաթ՝** թեմա **«Դպրոցն ու մանկավարժական միտքը Հայաստանում 10-18-րդ դարերում»:**

Մեթոդներում նշված է «քեյսի կազմում»՝ անտեղի է, քննարկվող հարցերում միայն ուսումնասիրել, ներկայացնել և վերլուծել տարբեր դարաշրջաններում մանկավարժների գործունեությունը: Քեյսերի վերլուծություն լինել չի կարող:

**6-րդ շաբաթ՝ սեմինար/գործնական/ աշխատանք.**

**Մեթոդները՝** սահիկահանդեսի ցուցադրություն, բանավոր ներկայացում, իրավիճակային

համեմատական վերլուծություն:

Կրկնվում են նախորդ դասախոսության քննարկվող հարցերը:

Թեմատիկ տրոհումը ներկայացված է մոդուլներով, որոնք անցնում են մեկ դասաժամի ընթացքում: Կան մոդուլներ, որոնք պարունակում են մեկ թեմա: Կան մոդուլներ, որոնք ներառել են 3-4 թեմա:

**11-րդ շաբաթ, տեսակը՝ սեմինար /գործնական աշխատանք/**

**Մեթոդները՝** քննարկում, բանավոր ներկայացում, համեմատական վերլուծություն, քեյսերի կազմում:

Բոլոր գործնականները սեմինարներ են, քեյսերի կազմումը անտեղի է:

**16-րդ շաբաթ, տեսակը՝ սեմինար /գործնական պարապմունք/**

**Մեթոդները՝** բանավոր ներկայացում, կարծիքների փոխանակում, բանավեճ.

Դասախոսությունների փաթեթի գրականության ցանկը շտկման, նորացման կարիք ունի:

**Կուրս՝** բակալավր 2-րդ,

**Մասնագիտություն՝** մաթեմատիկա, ֆիզիկա, ինֆորմատիկա

**Դասախոս՝** Մ. Ասատրյան

**Դասաժամերի բաշխում** բաժնում նշված է “Տեսական մանկավարժություն 2” դասընթացի անունը: Շփոթ կա առարկայի իրական անվանման մեջ:

Կարմիրով նշված ցուցումները ձևաչափի մեջ անհրաժեշտ է հանել:

***Գործնական մասնագիտական կարողություններում*** «ԸՆԿԱԼԵԼ» բայով սկսվող վերջնարդյունք չպետք է լինի:

«Տիրապետել մանկավարժական էթիկայի հիմունքներին, մանկավարժական մշակույթին» ՝ սա ընդհանրական կոմպետենցիա չէ:

Գրականության ցանկը համակարգելու կարիք ունի /գրականության ցանկում գրքեր կան, որոնք դաստիարակության տեսության հետ կապ չունեն/:

Գործնական աշխատանքները միայն սեմինարի տեսքով են: Դաստիարակության տեսության մեջ «Կառավարում» թեման է ներառված/կարող է այդպես է արվում, չգիտեմ, բայց տրամաբանական չէ/:

Սեմինարի համար նախատեսված մեթոդներն ու քննարկվող հարցերը իրար հետ կապ չունեն:

Դասախոսությունների փաթեթը հին է: Դաստիարակության սահմանումները նեղ և լայն իմաստներով ներկայացված:

Այս դասընթացում քեյսերի վերլուծությունը շատ օգտակար կլիներ: Սակայն, ոչ մի աշխատանք լսարանում, որը կարող է նպաստել ուսանողի գործնական կարողությունների ձևավորմանը, նախատեսված չէ: Այս դասընթացով առարկայական նկարագրի ոչ մի վերջնարդյունք չի ձևավորվի:

**Կուրս՝** բակալավր 1-ին,

**Մասնագիտություն՝** ռուսաց լ. և գրականություն

**Դասախոս՝** Մ. Գևորգյան

- ✓ Նախապայմանի մեջ գրվում են այն գիտելիքները, որոնք հիմք կծառայեն դասընթացի յուրացման համար:
- ✓ Համառոտ բովանդակությունը պետք է փոխվի:
- ✓ Վերջնարդյունքները փոփոխման կարիք ունեն:
- ✓ Առաջին գործնականի տեսակի և մեթոդի, ինչպես նաև առաջադրանքի մեջ հակասություն կա: Հանձնարարվում է գրել էսսե տրված թեմաներով, սակայն մեթոդները կլոր սեղան, խմբային աշխատանք և այլն:
- ✓ Երկրորդ գործնականը՝ նույնն է:
- ✓ Երրորդը՝ ևս անհակասանալի է:
- ✓ Նույնը՝ չորրորդը:
- ✓ Դասախոսությունների փաթեթում բացակայում են հարցերն ու առաջադրանքները, գրականության ցանկը:

**Ն. Մարտիրոսյան** – Ես ուսումնասիրել եմ **«Մանկավարժություն»** առարկայի ուսումնամեթոդական որոշ փաթեթներ և ունեմ դիտարկումներ:

**Կուրս՝** բակալավր 1-ին,

**Մասնագիտություն՝** մաթեմատիկա, ֆիզիկա, ինֆորմատիկա

**Դասախոս՝** Ա. Հակոբյան

1. Նկարագրում առարկայի անվանումը «Մանկավարժություն» է, սակայն թեմատիկ տրոհման մեջ՝ «Կրթության և մանկավարժական մտքի պատմություն»:
2. Թեմատիկ տրոհման մեջ նշված է 16 ուսումնական շաբաթ, սակայն առարկան ունի 22 ժամ դասախոսություն, 6 ժամ գործնական / ընդհանուր՝ 28 ժամ/, ուստի դառնում է 14 շաբաթ:
3. Միջանկյալ 1-ին ստուգումը հեղինակը դրել է 5-րդ ուսումնական շաբաթից հետո, մինչդեռ պետք է դրվեր 8-րդ ուսումնական շաբաթից հետո:
4. Նկարագրի **Համառոտ բովանդակություն** բաժնում հեղինակը անդրադարձել է առարկայի կարևորությանը, նշանակությանը, մինչդեռ պետք է նշեր առարակայի բոլոր թեմաները:
5. Ըստ հեղինակի՝ դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի թվով 6 վերջնարդյունք, որն իրականացվում է թվով 3 գործնական պարապմունքի միջոցով, սակայն մեթոդներն արժանահավատ չեն՝ սահիկահանդեսի ցուցադրություն, բանավոր ներկայացում, իրավիճակային համեմատական վերլուծություն, քննարկում, համեմատական աղյուսակի կազմում: Թեմատիկ տրոհման մեջ բացակայում են առաջին երկու գործնական պարապմունքների գնահատման չափանիշները:
6. Գրականությունը բազմաբովանդակ է, սակայն փաթեթն ավելի կշահի, եթե օրինակ՝ Джуринский А .Н. История педагогики древнего и средневекого мира, М., 1999. գիրքը փոխարինվի հետևյալով՝ Пискунов А. И., Хрестоматия по истории педагогики, М., 2006/3 հատոր/:

**Կուրս՝** բակալավր 1-ին,

**Մասնագիտություն՝** հայոց լ. և գրականություն

**Դասախոս՝** Գ. Հակոբյան

1. Նկարագրում առարկայի անվանումը «Մանկավարժություն» է, իսկ թեմատիկ տրոհման մեջ՝ «Մանկավարժության պատմություն»:
2. Նկարագրի **Համառոտ բովանդակություն** բաժնում հեղինակն անդրադարձել է առարկայի ազդեցությանը ապագա մանկավարժների ձևավորման գործում, մինչդեռ պետք է նշեր առարկայի բոլոր թեմաները:
3. Թեմատիկ տրոհման մեջ նշված է 16 ուսումնական շաբաթ, սակայն պետք է լինի 15 շաբաթ/22դ+8գ./:
4. Միջանկյալ 1-ին ստուգումը նշված չէ, թե ինչ է լինելու:
5. Գրականությունն անհրաժեշտ է թարմացնել:

**Կուրս՝** բակալավր 2-րդ,

**Մասնագիտություն՝** հոգեբանություն

**Դասախոս՝** Գ. Հակոբյան

1. Թեմատիկ տրոհման մեջ միջանկյալ 1-ին ստուգումը նշված չէ, թե ինչ է լինելու:
2. Գրականությունն անհրաժեշտ է թարմացնել, մասնավորապես առաջարկում ենք ցանկում ընդգրկել հետևյալ հեղինակներին՝ Пидкасистый П., И,Реан А.А., Подласий И.,П:
3. Թեմատիկ տրոհման մեջ պահանջվում է նշել ոչ թե գրքի էջերի քանակը, այլ այն էջերը, որոնք համապատասխանում են թեմային:

**Կուրս՝** բակալավր 1-ին,

**Մասնագիտություն՝** տարրական մանկ. և մեթոդիկա

**Դասախոս՝** Զ. Ասատրյան

1. Թեմատիկ տրոհման մեջ պետք է լինի 16 ուսումնական շաբաթ, մինչդեռ նշված է 23 շաբաթ:

2. Առաջարկում ենք գրականության ցանկում ընդգրկել հետևյալ հեղինակներին՝ Пидкасистый П., И,Реан А.А., Подласий И.,П:

**Կուրս՝** բակալավր 1-ին,

**Մասնագիտություն՝** կենսաբանություն, քիմիա, աշխարհագրություն

**Դասախոս՝** Ն. Կարապետյան

1. Նկարագրի **Համառոտ բովանդակություն** բաժնում հեղինակը անդրադարձել է առարկայի կարևորությանը, նշանակությանը, մինչդեռ պետք է նշեր առարակայի բոլոր թեմաները:
2. Նկարագրում գրված է դասընթացն ունի 30 ժամ դասախոսություն, մինչդեռ թեմատիկ տրոհման մեջ 22 ժամ դասախոսություն է:
3. Միջանկյալ 1-ին ստուգումը թեմատիկ տրոհման մեջ ընկնում է 5-րդ շաբաթից հետո, մինչդեռ պետք է լինի 8-րդ շաբաթից հետո:
4. Առաջարկում ենք գրականության ցանկում ընդգրկել հետևյալ հեղինակի 3 հատորանոց գիրքը՝

Пискунов А. И., Хрестоматия по истории педагогики, М., 2006.

**Կուրս՝** բակալավր 2-րդ,

**Մասնագիտություն՝** կենսաբանություն, աշխարհագրություն

**Դասախոս՝** Ն. Կարապետյան

1. Նկարագրում առարկայի անվանումը «Մանկավարժություն» է, սակայն նկարագրի **Համառոտ բովանդակություն** բաժնի մեջ գրված է «Տեսական մանկավարժություն 1», իսկ թեմատիկ տրոհման մեջ՝ «Մանկավարժություն 1»:
2. Հեղինակը նշել է նկարագրում, որ «Տեսական մանկավարժություն 1» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 64 ժամ, **34 ժամ լսարանային** և 30-ը՝ արտալսարանային: Լսարանային ժամերից՝ **22-ը՝** դասախոսություն, **8**-ը սեմինար/գործնական պարապմունքներ/: Այսինքն ընդհանուր 30 ժամ լսարանային, ոչ թե 34՝ ժամ:
3. Թեմատիկ տրոհման մեջ նշված է ուսումնական 13 շաբաթ, մինչդեռ պետք է 15 շաբաթ լինի:

4. Դասախոսությունները թարմացնելու կարիք ունեն, քանի որ փոխվել են կարգերը, կրթական գործընթացի մասնակիցների իրավունքները, պաշտոնային պարտականությունները՝ մասնավորապես դպրոցի տնօրենի մրցույթի կարգը: Դաստիարակության մեթոդների մեջ անհրաժեշտ է հաշվի առնել առաջադեմ գիտնականների մոտեցումները, մասնավորապես վարքի խթանման մեթոդներից՝ սուբյեկտիվ-պրագմատիստական մեթոդը/ Подласий И.П., Педагогика, М.,2007,. ст.464/:
5. Առաջարկում ենք գրականության ցանկում ընդգրկել հետևյալ հեղինակներին՝ Пидкасистый П., И,Реан А.А., Подласий И.,П:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – 1. Հաստատել «Հայ դպրոցի և մանկավարժական մտքի պատմություն», «Սոցիալական մանկավարժություն», «Մանկավարժական հաղորդակցում», «Էթնոմանկավարժություն», ‹‹Մեդիակրթություն››, «Սոցիալ-մանկավարժական դիագնոստիկա», ‹‹Սոցիալական մանկավարժություն››, ‹‹Սոցիալական մանկավարժություն››, «Գործնական մանկավարժություն», «Սոցիալ-մանկավարժական պրակտիկում», ‹‹Մանկավարժական հաղորդակցում››, «Ես և շրջակա աշխարհը», ‹‹Մասնագիտական կողմնորոշման հիմունքներ››, ‹‹Մանկության սոցիալական պաշտպանության համակարգի կառավարում›› առարկաների փաթեթները: 2. Բակալավրում ‹‹Մանկավարժություն›› առարկայի դասավանդումը ժամանակավորապես իրականացնել առկա փաթեթներով՝ նշված դիտողությունները շտկելու պայմանով: 3. Ստեղծել հանձնաժողով՝ հետևյալ կազմով Ա. Թոփուզյան, Լ. Ասատրյան, Լ. Պողոսյան, Ա. Հովհաննիսյան, Գ. Հակոբյան, Ա. Մանուկյան, Ն. Կարապետյան, Ն. Մարտիրոսյան, Գ. Հարությունյան ‹‹Մանկավարժություն›› առարկայի ծրագիրը վերամշակելու նպատակով: 4. Հարց բարձրացնել ՀՊՄՀ ուսումնական բաժնի առջև՝ վերանայելու ԿՀՍ ֆակուլտետի բակալավր 2-րդ կուրսում դասավանդվող ‹‹Մանկավարժական հաղորդակցում›› առարկայի ժամերի բաշխումը:

**ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ**

**ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ**

**10.02.2020թ.**

**Արձանագրություն Նո. 11**

**2019-2020 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի ՆԻՍՏԻ**

**Օրակարգ**

1. 2019-2020 ուս. տարվա 2-րդ կիսամյակում մագիստրատուրայում դասավանդվող առարկաների փաթեթների հաստատման մասին:
2. Մանկավարժության ամբիոնի ասպիրանտ Էմմա Կոստանյանի թեկնածուական ատենախոսության թեմայի մասին:

**1. ԼՍԵՑԻՆ** - 2019-2020 ուս. տարվա 2-րդ կիսամյակում մագիստրատուրայում դասավանդվող առարկաների փաթեթների հաստատման մասին:

**Ա. Դալլաքյան** – Ի. Բաբայանի ներկայացրած «Բարձրագույն և մասնագիտական դպրոցի մանկավարժություն» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է ԿՔԱ ֆակուլտետի մագիստրատուրա 1-ին կուրսի համար: Առարկայի նկարագիրը և թեմատիկ տրոհումը կառուցվածքային առումով համապատասխանում են ներկայացված ձևաչափին: Առարկայական նկարագրում առկա են «Կենսաբանություն», «Քիմիա» և «Աշխարհագրություն» մասնագիտությունների կրթական ծրագրերի մասնագրերի համապատասխան վերջնարդյունքները:

Սակայն «Բարձրագույն և մասնագիտական դպրոցի մանկավարժություն» դասընթացի բարելավման համար առաձնացվել են մի քանի նկատառումներ՝

- Գործնական աշխատանքների ուղղվածությունը համապատասխանեցնել տվյալ մասնագիտությունների առանձնահատկություններին,
- առարկայական նկարագրում ավելացնել գնահատվող առաջադրանքը, դրան հատկացված տեսակարար կշիռը՝ նշելով, թե ո՞ր բաղադրիչի մեջ է այն ներառվում:

Առաջարկում եմ հաստատել փաթեթը:

**Ա. Դալլաքյան** - Հ. Թադևոսյանի մշակած «Սոցիալ-մանկավարժական գործունեության համակարգը կրթության ոլորտում» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը

նախատեսված է «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության մագիստրատուրա առաջին կուրսի համար: Տրամաբանական հաջորդականությամբ փաթեթում տրված է՝ առարկայական նկարագիրը՝ «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության կրթական ծրագրի մասնագրի համապատասխան վերջնարդյունքներով, ներկայացված են թեմատիկ տրոհումը և դասախոսություններն ըստ պահանջվող ձևաչափի:

Սակայն «Սոցիալ-մանկավարժական գործունեության համակարգը կրթության ոլորտում» առարկայի փաթեթի բարելավման համար ունենք մի քանի նկատառում՝

- առարկայական նկարագրում նշված վերջնարդյունքների դիմաց պետք է ավելացնել այն թեմաները կամ համապատասխան առաջադրանքները, որոնք ձևավորում են տվյալ վերջնարդյունքը,
- թեմատիկ տրոհման մեջ յուրաքանչյուր շաբաթվա ուսումնառության առաջադրանքներ բաժնում ավելացնել յուրաքանչյուր թեմայի քննարկվող հարցերը, որոնք տրված են դասախոսությունների վերջում,
- առարկայական նկարագրում ավելացնել գնահատվող առաջադրանքը, դրան հատկացված տեսակարար կշիռը և նշել, թե ո՞ր բաղադրիչի մեջ է այն ներառվում,
- ցանկալի է գրականության բաժնում նշել նաև էլեկտրոնային առցանց ռեսուրսների աղբյուրներ:

Առաջարկում եմ հաստատել:

**Մ. Ասատրյան** - Լ. Նազարյանի ներկայացրած «Մանկավարժական մարդաբանություն» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է ԳԿ ֆակուլտետի մագիստրատուրա 1-ին կուրսի համար:

«Մանկավարժական մարդաբանություն» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը կազմված է ըստ սահմանված ձևանմուշի և դրան ներկայացվող չափանիշների: Փաթեթը բաղկացած է ԱՈՒՄՓ-ի բովանդակությունը կազմող բոլոր բաղադրիչներից՝ առարկայական նկարագրից, թեմատիկ տրոհումից, դասախոսության նյութերից, պահանջվող գրականության ցանկից, գործնական և սեմինար պարապմունքների անցկացման մեթոդներից: Առարկայական նկարագրում սահմանված կրթական

վերջնարդյունքները համապատասխանում են ՄԿԾ-ի ելքային արդյունքներին: Թեմատիկ տրոհման մեջ ըստ շաբաթական ծանրաբեռնվածության ներկայացված է դասի տեսակը, դասավանդման մեթոդները, առաջադրանքներն ու գնահատումը: Գործնական պարապմունքների համար ընտրված մեթոդներն ու առաջադրանքներն ուղղված են լուծելու կրթական ելքային արդյունքները, թեմաների բովանդակությունը համապատասխանում է նկարագրի և ծրագրային նյութի պահանջներին: Դասախոսության յուրաքանչյուր թեմայից հետո տրված են հետադարձ կապն ապահովող առաջադրանքներ, ինքնաստուգման հարցեր, հիմնական գրականություն: Գրականության ցանկն արդիական է, դասախոսությունների նյութերը համապատասխանում են առաջադրված թեմաներին:

«Մանկավարժական մարդաբանություն» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը համապատասխանում է մագիստրատուրայի կրթական ծրագրի պահանջներին, ուստի առաջարկում եմ հաստատել:

**Մ. Ասատրյան -** Գ. Հարությունյանի կազմած «Սոցիալական մարդաբանություն» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է Սոցիալական մանկավարժություն մասնագիտության մագիստրատուրա 1-ին կուրսի համար: Կազմված է ըստ սահմանված ձևանմուշի և դրան ներկայացվող չափանիշների: Առարկայի դասախոսությունների թեմատիկայում հեղինակը հանգամանորեն ներկայացրել է «Սոցիալական մարդաբանությունը» որպես գիտության ճյուղ, նրա հիմնական բնագավառները, մարդաբանության հետազոտության ձևերն ու մեթոդները: Մարդու ծագման հիմնական տեսությունները, մարդու և հասարակության ծագումը, սոցիալական հասարակության, ազգագրության, մշակույթի, էթնոսի, բնական միջավայրի սոցիալ-մարդաբանական էությունը, սոցիալական մարդաբանության ստեղծման և կայացման պատմությունը: Առարկայական նկարագրում ներկայացված ժամաքանակը համապատասխանում է մագիստրատուրայի կրթական ծրագրին և արտացոլված է առարկայի թեմատիկ տրոհման մեջ: Թեմատիկ տրոհման մեջ ըստ շաբաթական ծանրաբեռնվածության ներկայացված է դասի տեսակը, դասավանդման մեթոդները, առաջադրանքներն ու գնահատումը: Առարկայական նկարագրում

սահմանված կրթական վերջնարդյունքները համապատասխանում են ՄԿԾ-ի ելքային արդյունքներին: Գործնական պարապմունքների համար ընտրված մեթոդներն ու առաջադրանքներն ուղղված են լուծելու կրթական ելքային արդյունքները, թեմաների բովանդակությունը համապատասխանում է նկարագրի և ծրագրային նյութի պահանջներին: Փաթեթն ամբողջական է, ուստի առաջարկում եմ հաստատել:

**Մ. Ասատրյան** – Ս. Սիսյանի ներկայացրած «Մանկավարժական մարդաբանություն» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է Պարարվեստ մասնագիտության մագիստրատուրա 1-ին կուրսի համար: Առարկայի ուսումնամեթոդական փաթեթը կազմված է ըստ սահմանված ձևանմուշի և դրան ներկայացվող չափանիշների: Առարկայի դասախոսությունների թեմատիկայում հեղինակը հանգամանորեն ներկայացրել է «Մարդ» հասկացությունը և նրա մեկնաբանությունները: Մարդը որպես գիտական ուսումնասիրման առարկա, մանկավարժական մարդաբանության էությունը, անձը և մարդկային անհատականության զարգացումը: «Ես» հայեցակարգը անձի կառուցվածքում, անձի զարգացման ժամանակակից տեսությունները, մանկության ժամանակակից հիմնախնդիրները, մարդաբանական մոդելներ և մանկավարժական տեխնոլոգիաներ, ինչպես նաև կրթական հաստատության տարածքի հումանացման ուղիներն ու միջոցները: Առարկայական նկարագրում սահմանված կրթական վերջնարդյունքները համապատասխանում են ՄԿԾ-ի ելքային արդյունքներին: Թեմատիկ տրոհման մեջ ըստ շաբաթական ծանրաբեռնվածության ներկայացված է դասի տեսակը, դասավանդման մեթոդները, առաջադրանքներն ու գնահատումը: Գործնական պարապմունքների համար ընտրված մեթոդներն ու առաջադրանքներն ուղղված են լուծելու կրթական ելքային արդյունքները, թեմաների բովանդակությունը համապատասխանում է նկարագրի և ծրագրային նյութի պահանջներին: Փաթեթն ամբողջական է, ուստի առաջարկում եմ հաստատել:

**Ս. Սիսյան** – Ն. Մարտիրոսյանի կազմած «Սոցիալ-մանկավարժական կառավարում» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է Սոցիալական մանկավարժություն մասնագիտության մագիստրատուրա 1-ին կուրսի համար:

Ուսումնամեթոդական փաթեթը կազմված է առարկայական նկարագրից, առարկայի թեմատիկ տրոհումից և 9 դասախոսություն և 3 գործնական աշխատանքներ ներառող թեմատիկ փաթեթից:

Դասընթացի նպատակը, խնդիրները բխում են դասընթացի բովանդակությունից: Առարկայական նկարագիրը, թեմատիկ տրոհումը, դասախոսություններն ու գործնականներն իրենց բովանդակությամբ և կառուցվածքով համապատասխանում են ԱՈՒՄՓ ձևաչափի չափանիշներին, դասընթացի նպատակը, խնդիրները և վերջնարդյունքները բխում են միմյանցից, գրականությունը համապատասխանում է դասընթացի թեմատիկային, առարկայական թեմատիկ տրոհման մեջ ներկայացված դասավանդման և ուսումնառության մեթոդների կիրառումը և գործնական առաջադրանքների կատարումը ամբողջությամբ փակում են նկարագրում ներկայացված դասընթացի կրթական վերջնարդյունքները և տվյալ մասնագիտական ծրագրի կրթական ելքային արդյունքները, որոնք հստակ ներկայացված են նաև առարկայական տրոհման 3 գործնական դասերի համար: Առարկայական տրոհման մեջ յուրաքանչյուր թեմայի համար նշված են պարապմունքի տեսակը, կիրառվող ուսուցման մեթոդները, քննարկվող հարցերը, ապա շարադրված են առաջադրանքները և ինքնաստուգման հարցերը:

Գործնական պարապմունքին կատարվող առաջադրանքները ստեղծագործական բնույթի են, դրդում են ուսանողին մտածել, վերլուծել, համադրել և ինքնուրույն աշխատանք կատարել ու սեփական կարծիք ձևավորել: /1-ին գործնական պարապմունքին կիրառվում են «Մտածիր-զուգորդիր-մտքեր փոխանակիր» մեթոդը, 2-րդ գործնական պարապմունքին՝ Նախագծման և Մտածիր-զուգորդիր-մտքեր փոխանակիր» մեթոդը, 3-րդին՝ «Խճանկար», «Մտածիր-զուգորդիր-մտքեր փոխանակիր», «ԳՈՒՍ», «Քառաբաժան» մեթոդները: Գրականության ցանկն ընդգրկում է արդիական գրականություն, ինտերնետային աղբյուրներ և տեսանյութերի հասցեներ:

Առաջարկում եմ հարստացնել գործնական աշխատանքների մեթոդները, օգտագործել նախագծային, մոդելավորման տեխնոլոգիաները, փաթեթի համապատասխան

բաժնում նշել նաև 3 արտալսարանային ինքնուրույն աշխատանքների բովանդակությունը, որոնք լսարանային դասախոսության կամ գործնականների շարունակությունն են և պարտադիր են ուսանողի կատարման համար: Առաջարկում եմ հաստատել:

**Ս. Միսյան** – Հ. Թադևոսյանի մշակած «Այլընտրանքային խնամքի կազմակերպման սոցիալ-մանկավարժական ապահովում» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է Սոցիալական մանկավարժություն մասնագիտության մագիստրատուրա 2-րդ կուրսի համար: Ուսումնամեթոդական փաթեթը կազմված է առարկայական նկարագրից, առարկայի թեմատիկ տրոհումից և 12 դասախոսություն և 6 գործնական աշխատանքներ ներառող թեմատիկ փաթեթից: Դասընթացի լսարանային ընդհանուր ծավալը կազմում է 36 ժամ, որից 24 ժամը տեսական, է, 12-ը՝ գործնական: Դասընթացն ավարտվում է կիսամյակի վերջում վարկանշային ամփոփումով: Ընդհանուր կրեդիտների քանակը՝ 3:

Դասընթացի նպատակը, խնդիրները բխում են դասընթացի բովանդակությունից: Առարկայական նկարագիրը, թեմատիկ տրոհումը, դասախոսություններն ու գործնականներն իրենց բովանդակությամբ և կառուցվածքով համապատասխանում են ԱՈՒՄՓ ձևաչափի չափանիշներին, դասընթացի նպատակը, խնդիրները և վերջնարդյունքները բխում են միմյանցից: Փաթեթում առկա է նաև թեմատիկ պլան, որտեղ ներկայացված են ոչ միայն բոլոր թեմաների ուսումնասիրմանը հատկացված առավելագույն ուսումնական ծանրաբեռնվածությունը, այլ նաև ինքնուրույն ուսումնական ծանրաբեռնվածությունը: 6 գործնական պարապմունքներն իրենց բովանդակությամբ և կիրառվող մեթոդներով լիարժեքորեն ապահովում են տեսական գիտելիքների ամրապնդումը, մասնագիտական կարողությունների և նկարագրում առաջադրված կրթական ելքային վերջնարդյունքների ձևավորումը:

- **1-ին գործնական** - Վեննի դիագրամ, մոդելավորում, նախագծի կառուցում, տեսանյութերի դիտում և քննարկում: Խմբային աշխատանք, կոնկրետ իրավիճակների քննարկում և վերլուծություն:

- **2-րդ գործնական** - Դերային խաղ, նախագծի կառուցում, տեսանյութերի դիտում և քննարկում, մոդելավորում: Խմբային աշխատանք, կոնկրետ իրավիճակների քննարկում և վերլուծություն:
- **3-րդ գործնական** - Մոդելավորում, դերային խաղ:
- **4-րդ գործնական** - կոնկրետ իրավիճակների քննարկում, խաղարկում և վերլուծություն:
- **5-րդ գործնական** - մոդելավորել այլընտրանքային խնամքի կազմակերպման գործընթացում սոցիալական մանկավարժի՝ որպես մասնագիտական գործունեության սուբյեկտի պրոֆեսիոգրամմա (անձնային բնութագիր, մասնագիտական կոմպետենտություններ):
- **6-րդ գործնական** - Բանավեճ, նախագծում, մոդելավորում: Խմբային աշխատանք, կոնկրետ իրավիճակների վերլուծություն;

Առաջադրանքները ստեղծագործական բնույթի են, դրդում են ուսանողին մտածել, վերլուծել, համադրել, ինքնուրույն աշխատանք կատարել և սեփական մասնագիտական կարծիք ձևավորել: Սակայն ընտրված մեթոդները մեկ դասաժամի համար շատ են և համարյա նույնն են: Փաթեթն ամբողջական է և առաջարկում եմ հաստատել:

**Լ. Նազարյան** - Գ. Եգանյանի «Մանկավարժական դիագնոստիկա» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է սոցիալական մանկավարժություն մասնագիտության մագիստրատուրա 1-ին կուրսի համար:

Սահմանված է առարկայի նպատակը, հստակ ընտրված են կրթական ելքային արդյունքները և կրթական ծրագրի վերջնարդյունքները: Առաջարկված է բավարար և ժամանակակից հիմնական ու լրացուցիչ գրականություն: Գնահատման բաղադրիչները և կշիռները սահմնված են հստակ: Առարկայի թեմատիկ տրոհումը համահունչ է բովանդակային ծածկույթին և տրված ժամաբաշխմանը:

Գործնական աշխատանքի մեթոդներն են.

Գ1 - նախագծային աշխատանք

Գ2 – մոդելավորում

Գ3 - անհատական հետազոտական աշխատանք

Ընտրված մեթոդները թույլ են տալիս ապահովել նշված վերջնարդյունքները:

Դասախոսությունների շարադրանքը համապատասխանում է ներկայացված պահանջներին:

Առկա են որոշակի տեխնիկական վրիպակներ:

Առաջարկում եմ հաստատել:

**Ն. Կարապետյան** – Լ. Պողոսյանի ներկայացրած «Մանկավարժական վալեոլոգիա» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության մագիստրատուրա 1-ին կուրսի համար: Դասընթացի նկարագիրը, թեմատիկ տրոհումը և դասախոսությունների փաթեթը համապատասխանում են կրթական պահանջներին, թեմաները ներկայացված են հաջորդաբար և տրամաբանորեն փոխկապակցված: Ըստ թեմաների, ուսումնական շաբաթների թեմատիկ տրոհումը և դասախոսությունները համապատասխանում են:

Առաջարդվել է գործնական և սեմինար պարպմունքների մեթոդական համալիր, որը կարևոր պայման է կրթական ելքային արդյունքների և ՄԿԾ վերջնարդյունքների համապատասխանության համար:

Նկատառումներ.

1. Թեմատիկ տրոհման մեջ գրականության ցանկում նպատակահարմար է ներառել հայալեզու գրականություն:

Առաջարկում եմ հաստատել փաթեթը:

**Գ. Եզանյան** – Ա. Դալլաքյանի ներկայացրած «Մանկավարժական կանխատեսում և նախագծում» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է Սկզբնական կրթության ֆակուլտետի, Տարրական մանկավարժություն և մեթոդիկա բաժնի մագիստրատուրա 1-ին կուրսի համար: Դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 60 ժամ, որից լսարանայինը 24 ժամ՝ 18-ը դասախոսություն, 6-ը սեմինար/գործնական պարապմունքներ/: Դասընթացի կրթական ելքային արդյունքները, որոնք բխում են մասնագիտության մասնագրից ձևավորվում են ինչպես գործնական, այնպես էլ տեսական դասաժամերի ընթացքում փոխներգործուն մեթոդների կիրառմամբ:

Ուսումնամեթոդական փաթեթը ներկայացված է պահանջվող ձևաչափին համապատասխան: Այն բովանդակում է առարկայական նկարագիրը, թեմատիկ տրոհումը, դասախոսության թեմաներ, ինչպես նաև գործնական պարապմունքներ:

Գրականության ցանկն արդիական է:

Ա. Դալլաքյանը դասընթացի շրջանակում ներկայացրել է մանկավարժական կանխատեսումը կրթության ոլորտում՝ կանխատեսման ազդեցությունը ուսանող-դասախոս փոխհարաբերությունների վրա, կանխատեսման մանկավարժական պայմանները, ուսանողների կանխատեսման կոմպետենցիայի մակարդակը, կանխատեսման տեսակները, մեթոդները, ինչպես նաև կանխատեսման գործընթացի փուլերը:

Սակայն ցանկանում եմ նշել, որ

2. Գործնական աշխատանքները ներկայացված են թեմատիկ տրոհման 8-րդ շաբաթից, առաջարկում եմ գործնական աշխատանքները իրականցնել 4-րդ, 8-րդ և 12-րդ շաբաթներում, 8-րդ, 10-րդ և 12-րդ շաբաթների փոխարեն:
3. 8-րդ շաբաթում գործնական աշխատանքը նշված է որպես մոդելավորում, սակայն գնահատման չափանիշները ներկայացված են որպես սեմինարի գնահատում:
4. 12-րդ շաբաթում նշված է գործնական աշխատանքի խորագիրը «Մոդելավորել տարրական դպրոցի անվտանգ կրթական միջավայր», որպես մեթոդ նշված է նախագծային աշխատանք, իսկ գնահատման չափանիշներում նշված է՝ գործնական աշխատանք. Կարծում եմ հստակեցման կարիք կա:

Վերոնշյալ դիտարկումները նախապես ներկայացվել են հեղինակին, ով կատարել է համապատասխան ուղղումներ:

«Մանկավարժական կանխատեսում և նախագծում» դասընթացը համապատասխանում է ՀՊՄՀ-ի դասընթացի կառուցման ներկայացվող պահանջներին և առաջարկում եմ հաստատել:

**Գ. Եգանյան –** Գ. Հարությունյանի ներկայացրած «Մանկավարժական կանխատեսում և նախագծում» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է Կրթության

հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի, Սոցիալական մանկավարժություն բաժնի մագիստրատուրա 2-րդ կուրսի համար:

Ուսումնամեթոդական փաթեթը ներկայացված է պահանջվող ձևաչափին համապատասխան: Այն բովանդակում է առարկայական նկարագիրը, թեմատիկ տրոհումը, դասախոսության թեմաներ, ինչպես նաև գործնական պարապմունքներ:

Գրականության ցանկն արդիական է:

Գ. Հարությունյանը դասընթացի շրջանակում ներկայացրել է մանկավարժական կանխատեսումը կրթության ոլորտում՝ կանխատեսման ազդեցությունը ուսանող-դասախոս փոխհարաբերությունների վրա, մասնագիտական կողմնորոշման կանխատեսման ներուժը, ուսանողների կանխատեսման կոմպետենցիան, կանխատեսման տեսակները, մեթոդները ինչպես նաև կանխատեսման գործընթացի փուլերն ու սոցիալ-մանկավարժական կանխատեսումը համընդհանուր ներառման համատեքստում:

Սակայն ցանկանում եմ նշել, որ

1. Դասախոսությունների փաթեթում յուրաքանչյուր դասախոսությունից հետո առաջադրանքները և ինքնաստուգման հարցերը տրված են միասին, առաջարկում եմ առանձնացնել՝ սկզբում նշելով առաջադրանքները, այնուհետև՝ ինքնաստուգման հարցերը:
2. 12-րդ շաբաթում նշված է գործնական աշխատանքը՝ կլոր սեղան, որի համար որպես խորագիր ներկայացված է «Կրթության հիմնախնդիրները ՀՀ-ում՝ կրթության ներկա և ապագա», կարծում եմ այն հստակեցման և խմբագրման կարիք ունի:
3. Դասախոսությունների մեջ առկա են տեխնիկական վրիպակներ:

Գ. Հարությունյանին նախապես ներկայացվել են վերոնշյալ դիտարկումները և նա կատարել է համապատասխան շտկումներ: Ուստի առաջարկում եմ հաստատել փաթեթը:

**Զ. Ասատրյան** – Ս. Սիսյանի ներկայացրած «Մանկավարժական արժեբանություն» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է ԿՀՍ ֆակուլտետի

Սոցիալական մանկավարժություն մասնագիտության մագիստրատուրա 2-րդ կուրսի համար: Փաթեթը կազմված է առարկայական նկարագրից, թեմատիկ տրոհումից, դասախոսության նյութերից, գրականության ցանկից, գործնական պարապմունքների անցկացման մեթոդներից, առաջադրանքներից և ինքնաստուգման հարցերից: Դասախոսությունների նյութերը համապատասխանում են առաջադրված թեմաներին և թեմատիկ տրոհմանը: Հեղինակը փաթեթում ներկայացրել է մանկավարժական արժեբանության բովանդակությունը, նպատակը, խնդիրները, հիմնական հասկացությունները, արժեբանական հիմնական ուղղությունները արևմտյան փիլիսոփայության մեջ, ինչպես նաև հայ իմաստասիրական մտքի արժեքային առաջնությունը, հայ ազգի կրթության արդիականացման արժեքային առաջնությունները, համաշխարհային կրթական դաշտի գնահատումը արժեբանական տեսանկյունից: Առարկայական նկարագրում տեղ գտած կրթական վերջնարդյունքները համապատասխանում են «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության կրթական ծրագրի ելքային արդյունքներին, որոնք լուծվում են թեմատիկ տրոհման մեջ ներկայացված գործնական պարապմունքների ընթացքում: Հեղինակի կողմից կազմած առարկայի ուսումնամեթոդական փաթեթը համապատասխանում է մագիստրատուրայի կրթական ծրագրի պահանջներին: Առաջարկում եմ հաստատել փաթեթը:

**Ն. Մարտիրոսյան** – Լ. Նազարյանի կազմած «Մանկավարժական ժամանակակից հիմնախնդիրներ» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նախատեսված է Բանասիրական, Կուլտուրայի, Օտար լեզուների ֆակուլտետների մագիստրատուրա 1-ին կուրսերի համար: Դասընթացի ուսումնամեթոդական փաթեթը կազմված է ըստ սահմանված ձևանմուշի և չափանիշների: Փաթեթը կազմված է բովանդակությունից, առարկայական նկարագրից, դասախոսության նյութերից, պահանջվող գրականության ցանկից, գործնական, սեմինար պարապմունքների անցկացման մեթոդներից, առաջադրանքներից, ինքնաստուգման հարցերից: «Մանկավարժական ժամանակակից հիմնախնդիրներ» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 60 ժամ, 26 ժամ լսարանային, որից՝ 22ժամ դասախոսություն և 4 ժամ սեմինար/գործնական պարապմունքներ, 34 ժամ արտալսարանային: Թվով 2 գործնական պարապմունքների

միջոցով /սեմինար, դեբատ/, ըստ հեղինակի, դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի թվով 3 վերջնարդյունք:

Այնուհանդերձ առկա են թերություններ.

1. Նկարագրի **Համառոտ բովանդակություն** բաժինը լրացված չէ:
2. Թեմատիկ տրոհման մեջ նշված է 16 ուսումնական շաբաթ, սակայն պետք է լինի 13 շաբաթ /22դ+4գ./:
3. Գրականությունն անհրաժեշտ է թեմատիկ տրոհման մեջ կրճատել:
4. Դասախոսություններում բացակայում է հիմնական և լրացուցիչ գրականության ցանկը:

Վերը նշված թերությունները նախապես ներկայացվել են հեղինակին և ուղղվել են: Առաջարկում եմ հաստատել փաթեթը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հաստատել «Բարձրագույն և մասնագիտական դպրոցի մանկավարժություն», «Սոցիալ-մանկավարժական գործունեության համակարգը կրթության ոլորտում», «Մանկավարժական մարդաբանություն», «Սոցիալական մարդաբանություն», «Սոցիալ-մանկավարժական կառավարում», «Այլընտրանքային խնամքի կազմակերպման սոցիալ-մանկավարժական ապահովում», «Մանկավարժական դիագնոստիկա», «Մանկավարժական վալեոլոգիա», «Մանկավարժական կանխատեսում և նախագծում», «Մանկավարժական արժեբանություն», «Մանկավարժական ժամանակակից հիմնախնդիրներ» առարկաների ուսումնամեթոդական փաթեթները:

2. **ԼՍԵՑԻՆ** - Մանկավարժության ամբիոնի ասպիրանտ Էմմա Կոստանյանի թեկնածուական ատենախոսության թեմայի մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ -** Ա. Թոփուզյանը, Լ. Ասատրյանը, Ա. Մանուկյանը

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Հաստատել Էմմա Կոստանյանի թեկնածուական ատենախոսության հետևյալ թեման՝ «Կրտսեր դպրոցականների մետաճանաչողական գիտելիքների և կարողությունների ձևավորման գործընթացների կառավարումը տարրական դպրոցում»:

Գիտական ղեկավար նշանակել մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լ. Ասատրյանին:

Ամբիոնի 26 անդամներից ներկա էր 25-ը, որից "կողմ" քվեարկեցին 25-ը, "դեմ"՝ 0:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ

12.02.2020թ.

## Արձանագրություն Նո. 12

## 2019-2020 ՈՒՍ.ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի ՆԻՍՏԻ

Օրակարգ

1. 2019-2020 ուսումնական տարվա ՍԿ ֆակուլտետի հեռակա մագիստրատուրա 3-րդ կուրսի ուսանողների մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների մասին:
2. 2019-2020 ուս. տարվա 2-րդ կիսամյակի դասալսումների գրաֆիկի հաստատման մասին:/կցվում է/
3. Ամբիոնում գործող մշտական սեմինարի 2019-2020 ուս.տարվա 2-րդ կիսամյակի գրաֆիկի հաստատման մասին: /կցվում է/

1. **ԼՍԵՑԻՆ** - 2019-2020 ուսումնական տարվա ՍԿ ֆակուլտետի հեռակա մագիստրատուրա 3-րդ կուրսի ուսանողների մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների մասին:

**Ա. Թոփուզյան** – Ս/թ փետրվարի 3-6-ը տեղի ունեցավ ՍԿ ֆակուլտետի հեռակա մագիստրատուրա 3-րդ կուրսի ուսանողների մագիստրոսական թեզերի պաշտպանությունը: Նախ ցանկանում եմ ներկայացնել ամփոփիչ ատեստավորման արդյունքները.

| Հ/հ | Ուսանող | Ղեկավար | Գնահատական |
|---|---|---|---|
| 1 | Հովհաննիսյան Նարինե | Հ. Թադևոսյան | 82 |
| 2 | Հակոբյան Քրիստինե | Ի. Բաբայան | 69 |
| 3 | Աթաբեկյան Լիա | Ի. Բաբայան | 80 |
| 4 | Ավետիսյան Արաքսյա | Ի. Բաբայան | 87 |
| 5 | Ղազարյան Անուշ | Լ. Նազարյան | 79 |
| 6 | Զախարյան Կարինե | Լ. Նազարյան | 63 |
| 7 | Զոհրաբյան Մերի | Լ. Նազարյան | 65 |
| 8 | Մակի Իշօ | Ա. Հովհաննիսյան | 87 |
| 9 | Սահակյան Լիանա | Ս. Սիսյան | 82 |
| 10 | Ալոյան Թերեզա | Ս. Սիսյան | 76 |
| 11 | Տերտերյան Սոֆյա | Գ. Եգանյան | 86 |

| | | | |
|---|---|---|---|
| **12** | Գևորգյան Շաքե | Ն. Մարտիրոսյան | 82 |
| **13** | Ասպատուրյան Ալիսա | Ն. Մարկոսյան | 84 |
| **14** | Ավետիսյան Աննա | Ն. Մարկոսյան | 82 |
| **15** | Գենջոյան Աստղիկ | Ա. Դալլաքյան | 78 |

Հանձնաժողովի նախագահ, մ.գ.դ., պրոֆեսոր Ա. Չատինյանի ներկայացրած հաշվետվության մեջ նշվում է.

Պաշպանությանը ներկայացրած մագիստրոսական թեզերն առանձնանում էին բովանդակության տրամաբանությամբ, գծագրերի, ցուցադրական և այլ նյութերի բավարար քանակով: Ներկայացված բոլոր թեմաները արդիական էին և հետագայում կարող են շարունակվել որպես հետազոտական կարևոր ուղղություններ: Մագիտրոսները լավ ներկայացրեցին հետազոտական աշխատանքների էությունը: Բոլոր հեազոտությունները կրում էին փորձարարական բնույթ, ինչը ողջունելի է և գովելի: Մագիտրոսները լավ էին տիրապետում հետազոտական նյութի տեսական և փորձարարական մասերին: Հանձնախմբի անդամների կողմից առաջադրված բազմաբնույթ հարցերին մագիստրոսները հիմնականում տալիս էին համոզիչ պատասխաններ: Դրանք հնարավորություն տվեցին օբյեկտիվ գնահատել յուրաքանչյուր աշխատանքի որակը և նյութի տիրապետման աստիճանը: Ելույթների տևողության հստակ պահպանումը վկայում էր մագիստրոսների և իրենց ղեկավարների նախապատրաստական աշխատանքների լավ կազմակերպման մասին:

Պաշտպանության գործընթացը դեկանատը կազմակերպել էր պատշաճ մակարդակով: Ստեղծված էր բարենպաստ միջավայր, որը հնարավորություն տվեց մագիստրոսներին լիովին դրսևորել իրենց կարողությունները, իսկ հանձնախմբին՝ ճիշտ գնահատել թեզերը և պատկերացում կազմել գիտական ղեկավարների կատարած աշխատանքի մասին:

**Առաջարկություններ.**

1. Անհրաժեշտ է ավելի հստակ ձևակերպել մագիստրոսական թեզի նպատակը և կոնկրետ ներկայացնել եզրակացությունների բովանդակությունը:

2. Կարևոր է ուշադրություն դարձնել զննական նյութերի ներկայացման որակին՝ մեծացնել տառաչափը, օգտագործել գույների ճիշտ լուծումներ:
3. Անհրաժեշտ է թեզի փորձարարական բաժնում ավելի շատ տեղ հատկացնել հիմնական դրույթների ներկայացմանը՝ դրանով ավելի հստակ հիմնավորել հետազոտության նորույթը և առաջադրանքների մշակումների էությունը:
4. Սոցիոլոգիական հարցումներ անցկացնելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել առաջադրված հարցերի բովանդակային կողմին՝ մշակելով այնպիսի հարցեր, որոնք կնպաստեն հիմնախնդրի ավելի խորը պարզաբանմանը:

**Ա. Թոփուզյան** – Այս առաջարկություններին ես ուզում եմ ավելացնել որոշ դիտարկումներ.

1. Եզրակացությունները պետք է բխեն հետազոտությունից և ամփոփեն թեմայի նպատակի ու խնդիրների իրականացման բովանդակությունը: Եզրակացությունները չպետք է լոզունգներ լինեն:
2. Օգտագործված մեթոդները միօրինակ են: Միայն հարցաթերթիկային հետազոտությունը քիչ է, դիտարկում կատարեք, հարցազրույց իրականացրեք, մոդելավորման մեթոդը օգտագործեք և այլն: Հաշվի առեք նաև, որ հարցաթերթիկային հետազոտությանը պետք է մասնակցեն առնվազն 50 հոգի:
3. Մեր ուսանողները չեն կարողանում վերլուծել, իրենց կարծիքն ու տեսակետը հայտնել, մենք պետք է դա նրանց սովորեցնենք:
4. Գրականության ցանկի վրա պետք է ուշադրություն դարձնել, այն պետք է ընդգրկի նորագույն գրականություն: Հղումների վրա հատուկ ուշադրություն պետք է դարձնել:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հաշվի առնել ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ մ.գ.դ., պրոֆեսոր Ա. Չատինյանի առաջարկությունները և մ.գ.դ., պրոֆեսոր Ա. Թոփուզյանի դիտարկումները հաջորդ տարիների թեզերը պատրաստելիս:

**2.ԼՍԵՑԻՆ** - 2019-2020 ուս. տարվա 2-րդ կիսամյակի դասալսումների գրաֆիկի հաստատման մասին:

**Մ. Մանուկյան –** Հաստատման է ներկայացվում 2019-2020 ուս. տարվա 2-րդ կիսամյակի դասալսումների գրաֆիկը: Առաջարկում եմ յուրաքանչյուր դասալսման արդյունքները գրանցել դասի դիտարկման թերթիկում և քննարկել ամբիոնի նիստում:

**ՈՐՈՇԵՑԻՆ –** 1. Հաստատել 2019-2020 ուս.տարվա 2-րդ կիսամյակի փոխադարձ դասալսումների գրաֆիկը: Յուրաքանչյուր դասախոս պարտավոր է կիսամյակում լսել, վերլուծել և գնահատել առնվազն 2 դաս:

2. Հանձնարարել պարոն Մանուկյանին հետևել դասալսումների գրաֆիկի կատարմանը:

2. **ԼՍԵՑԻՆ** - Ամբիոնում գործող մշտական սեմինարի 2019-2020 ուս.տարվա 2-րդ կիսամյակի գրաֆիկի հաստատման մասին:

**Ա. Թոփուզյան** - Ամբիոնում կազմվել է 2019-2020ուս. տարվա մշտական գործող սեմինարի գրաֆիկը՝ ձեր ներկայացրած թեմաների հիման վրա: Խնդրում եմ խստորեն հետևել գրաֆիկի կատարմանը: Առաջարկում եմ այն հաստատել:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – 1. Հաստատել ամբիոնում գործող մշտական սեմինարի 2019-2020 ուս.տարվա 2-րդ կիսամյակի գրաֆիկը:

2. Հանձնարարել պարոն Մանուկյանին հետևել գրաֆիկի կատարմանը:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ

**19.02.2020թ.**

**Արձանագրություն Նո. 13**

**2019-2020 ՈՒՍ.ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ԱՊՐԻԼԻ 1-Ի ՆԻՍՏԻ**

**Օրակարգ**

1. Ավարտական աշխատանքների ընթացքի մասին:
2. Մանկավարժական պրակտիկայի ընթացքի մասին:

**1. ԼՍԵՑԻՆ** - Ավարտական աշխատանքների ընթացքի մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – բոլոր ղեկավարները

**Ա. Թոփուզյան** – Ես խնդրում եմ ուշադրություն դարձնել աշխատանքի ներածությանը, որտեղ պետք է արտացոլվի թեմայի արդիականությունը, որը պետք է լինի կարճ, համառոտ, հստակ: Նպատակը և խնդիրները պետք է բխեն միմյանցից, կիրառական նշանակությունը պետք է մեկ, երկու նախադասությամբ շարադրված լինի: 1-ին գլուխը տեսական է, այս գլխում պետք է համառոտ վերլուծված լինի օգտագործված գրականությունը, այսինքն, 1-ին գլուխը պետք է պարունակի ուսումնասիրվող խնդրի վերլուծությունը: 2-րդ գլուխը պետք է լինի հետազոտական: Այս գլխում պետք է համառոտ նկարագրվի հետազոտությունը, կիրառված մեթոդները, հետազոտության անցկացման բազան, վերլուծված լինեն հետազոտության արդյունքները: Ուշադրություն դարձրեք եզրակացություններին, դրանք պետք է պատասխանեն աշխատանքի խնդիրներին: Եզրակացությունները պետք է գնահատեն հետազոտության արդյունքների արդիականությունը, կարևորությունը, պետք է լինեն կարճ, կոնկրետ, լոգունգային չլինեն: Օգտագործված գրականության ցանկում պետք է դնել հնարավորինս նոր աղբյուրներ: Ուշադրություն դարձրեք հղումներին: Խորհուրդ եմ տալիս նաև, եթե կտեսնեք, որ 1-ին գլուխը, այսինքն տեսական մասը կարելի է մոդելավորել, կարող եք 1-ին գլուխը ավարտել որևէ մոդելով:

Դեռ հայտնի չեն պաշտպանությունների օրերը, բայց մենք պարտավոր ենք մինչև մայիսի 25-ը ունենալ արդեն ամբողջական աշխատանքները PP-ներով, գրախոսների և ղեկավարների կարծիքներով:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Ավարտական աշխատանքները վերանայել վերը նշված պահանջների ոգով:

**2. ԼՍԵՑԻՆ -** Մանկավարժական պրակտիկայի ընթացքի մասին:

**Գ. Հարությունյան** - Հարգելի գործընկերներ, 26.03.2020թ. Google Meet-ով տեղի ունեցավ Պրակտիկայի վարչության ղեկավար Վ. Սարգսյանի և պրակտիկայի ԿԾ-երի ղեկավարների համատեղ հեռահար տեսանիստ, որտեղ որոշվեցին 2019-2020 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի պրակտիկայի անցկացման ժամկետները: Ձեզ ենք ներկայացնում այդ մասին գրաֆիկի նախագիծը:

- Մագիստրոսի կրթական ծրագրի **մանկավարժահետազոտական պրակտիկան** կազմակերպել **հեռահար** բուհի բակալավրի հենքի 1-4-րդ կուրսերում.
    - ✓ **Տարրական կրթություն առկա մագիստրատուրա 1-ին կուրս** /06.04.2020թ.-ից 3 շաբաթ տևողությամբ, հեռահար ՍԿ ֆակուլտետի բակալավրի հենքի վրա/
    - ✓ **Տարրական կրթություն հեռակա մագիստրատուրա 2-րդ կուրս** /06.04.2020թ.-ից 2 շաբաթ տևողությամբ հեռահար ՍԿ ֆակուլտետի բակալավրի հենքի վրա, իսկ **մասնագիտությամբ աշխատող** ուսանողների պարագայում՝ անհատական կարգով հեռահար տվյալ դպրոցի՝ տարրական դպրոցի հենքի վրա/
    - ✓ **Սոցիալական մանկավարժություն առկա մագիստրատուրա 1-ին կուրս** /16.04.2020թ.-ից 3 շաբաթ տևողությամբ, հեռահար ԿՀՍ ֆակուլտետի բակալավրի հենքի վրա/
- **Սոցիալական մանվարժություն /հեռակա բակալավր 3-րդ կուրս**/ պրակտիկայի պաշտպանությունն իրականացնել հունիսին
- **Սոցիալական մանվարժություն /հեռակա բակալավր 4-րդ կուրս**/ պրակտիկան հետաձգել և կազմակերպել սեպտեմբերին
- **Սոցիալական մանվարժություն /առկա բակալավր 3-րդ կուրս/ կիրառական** /ակտիվ/ պրակտիկան կազմակերպել **հեռահար**

- ✓ Պրակտիկայի բազա՝ Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն /տնօրեն՝ Գևորգյան Հայկուհի/
- ✓ Պրակտիկայի տևողություն՝ ապրիլի 20-ից 6 շաբաթ տևողությամբ՝ յուրաքանչյուր օր աշխատանքին տրամադրելով 2,5-3 ժամ:

**ՈՐՈՇԵՑԻՆ – 1.** Հաստատել 2019-2020 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի պրակտիկայի անցկացման գրաֆիկը: **2.** Հանձնարարել Գ. Հարությունյանին հետևել մագիստրատուրայի մանկավարժահետազոտական պրակտիկայի և սոցիալական մանկավարժություն մասնագիտության բակալավրի մանկավարժական պրակտիկայի ընթացքին: **3.** Հանձնարարել Ս. Ջանիկյանին հետևել բակալավրի մյուս բոլոր մասնագիտությունների մանկավարժական պրակտիկաների ընթացքին: 4. Պրակտիկայի ավարտի և պաշտպանությունների մասին հաշվետվություն տալ ուսումնական տարվա վերջին ամբիոնի նիստում:

**ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ**

**ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ**

**01.04.2020թ.**

Արձանագրություն Նո. 14

2019-2020 ՈՒՍ.ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ԱՊՐԻԼԻ 3-Ի ՆԻՍՏԻ

Օրակարգ

1. Մագիստրոսական թեզերի ընթացքի մասին:
2. Ամփոփիչ ատեստավորման գործընթացի կազմակերպման ժամանակացույցի մասին:

**1. ԼՍԵՑԻՆ** - Մագիստրոսական թեզերի ընթացքի մասին

**Ա. Թոփուզյան** – Այսօրվա մեր նիստին մասնակցում են նաև ԿՀՍ և ՍԿ ֆակուլտետների, սոցիալական մանկավարժություն և տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտությունների մագիստրատուրա 2-րդ կուրսի մեր ամբիոնում թեզ գրող ուսանողները: Առաջարկում եմ նախ լսենք ուսանողների հաշվետվությունները թեզերի պատրաստվածության մակարդակի մասին:

**Մովսեսյան Աննա** – Մագիստրոսական թեզի թեման է՝ «Աշակերտների հոգեբանական անվտանգության ապահովումը դպրոցում սոցիալ-մանկավարժական գործունեության միջոցով», գիտական ղեկավար՝ Լ. Նազարյան: Թեզի տեսական և գործնական մասերն ավարտված են, աշխատում ենք եզրակացությունների վրա, գրեթե վերջացրել ենք:

**Հակոբյան Աննա** – Մագիստրոսական թեզի թեման է՝ «Սոցիալական մանկավարժի աշխատանքը ԿԱՊԿՈՒ երեխաների հետ», գիտական ղեկավար՝ Հ. Թադևոսյան: Աշխատանքը ավարտել ենք, հետազոտությունն արված է, վերլուծությունն արված է, աշխատում ենք եզրակացությունների վրա:

**Հովհաննիսյան Թամարա** – Մագիստրոսական թեզի թեման է՝ «Կրթությունից դուրս մնացած երեխաների կրթության իրավունքի իրացմանն ուղղված սոցիալ-մանկավարժական գործունեության բովանդակությունը», գիտական ղեկավար՝ Հ. Թադևոսյան: Հետազոտությունն ամբողջությամբ ավարտել ենք, այս պահին վերանայում ենք եզրակացությունները՝ հիմք ընդունելով տիկին Թոփուզյանի դիտարկումները:

**Մուրադյան Արևիկ** – Մագիստրոսական թեզի թեման է՝ «Սոցիալ-մանկավարժական գործունեությունը 6 տարեկան երեխաների դպրոցին հարմարման գործընթացը

կազմակերպելու ուղղությամբ», գիտական ղեկավար՝ Գ. Աղուզումցյան: Ավարտել ենք աշխատանքի տեսական մասը, վերանայել ենք հետազոտությունը և եզրակացությունները՝ հաշվի առնելով տիկին Թոփուզյանի դիտարկումները:

**Մելիքյան Արմինե** – Մագիստրոսական թեզի թեման է՝ «Սոցիալ-մանկավարժական գործունեության առանձնահատկությունները Երևանի Աջափնյակ համայնքի սոցիալական հոգածության կենտրոնում», գիտական ղեկավար՝ Գ. Եգանյան: Աշխատանքի տեսական և գործնական մասերն ամբողջությամբ ավարտել ենք, աշխատում ենք եզրակացությունների վրա:

**Հարությունյան Վանուհի** – Մագիստրոսական թեզի թեման է՝ «Սոցիալական մանկավարժի աշխատանքը սոցիալապես անապահով ընտանիքների հետ», գիտական ղեկավար՝ Ա. Հովհաննիսյան: Աշխատանքը գրեթե ավարտել ենք, այս պահին աշխատում ենք սոցիալական մանկավարժի մոդելի և եզրակացությունների ձևակերպման վրա:

**Հայրումյան Ռոզա** – Մագիստրոսական թեզի թեման է՝ «Սոցիալական մանկավարժի աշխատանքը ԿԱՊԿՈՒ երեխաների ընտանիքների հետ», գիտական ղեկավար՝ Ա. Հովհաննիսյան: Աշխատանքը ամբողջությամբ պատրաստ է, աշխատում ենք տեխնիկական սխալները շտկելու վրա:

**Եղիազարյան Ալինա** – Մագիստրոսական թեզի թեման է՝ «Մանկությունը որպես մարդկային կյանքի հիմք», գիտական ղեկավար՝ Ա. Թոփուզյան: Աշխատանքի տեսական մասը պատրաստ է, կատարում ենք հետազոտությունների արդյունքների վերլուծություն, որից հետո կանցնենք եզրակացությունների ձևակերպմանը:

**Գաբրիելյան Անժելա** – Մագիստրոսական թեզի թեման է՝ «Համակարգչային խաղերի ազդեցությունը երեխաների սոցիալականացման վրա», գիտական ղեկավար՝ Ա. Թոփուզյան: Թեզի տեսական մասը պատրաստ է, կատարում ենք հետազոտական աշխատանքի վերլուծություն և աշխատում ենք համակարգչային խաղերի ազդեցության մոդելի վրա:

**Ադամյան Անահիտ** – Մագիստրոսական թեզի թեման է՝ «ՄՈՒԿ-ով երեխաների ինտեգրումը որպես սոցիալ-մանկավարժական հիմնախնդիր», գիտական ղեկավար՝ Լ.

Նազարյան: Աշխատանքի տեսական և գործնական մասերն ամբողջությամբ ավարտել ենք, շտկումներ ունենք անելու եզրակացություններում, այժմ աշխատում ենք դրանց ուղղությամբ:

**Անանյան Գայանե** – Մագիստրոսական թեզի թեման է՝ «Դպրոցական մակարդակում երեխայի կրթության կարիքի գնահատման հիմնախնդիրները», գիտական ղեկավար՝ Ն. Մարտիրոսյան: Ամբողջությամբ պատրաստ են թեզի տեսական և հետազոտական մասերը, աշխատում ենք եզրակացությունները ամբողջացնելու ուղղությամբ:

**Մուրադյան Արաքսյա** - Մագիստրոսական թեզի թեման է՝ «Տարրական դպրոցում էլեկտրոնային միջոցների կիրառման դիդակտիկական պայմանները», գիտական ղեկավար՝ Լ. Պողոսյան: Թեզի տեսական և գործնական մասերն ամբողջությամբ պատրաստ են, ուղղակի վերջին զարգացումների հետ կապված կցվել եմ մի քանի էլ. դասընթացների և փորձում եմ այդտեղից դուրս բերել էլեկտրոնային միջոցների կիրառման դիդակտիկական պայմանները:

**Աբրահամյան Մարգարիտա** - Մագիստրոսական թեզի թեման է՝ «Տարրական դպրոցի աշակերտների սեռադերային առանձնահատկությունների հաշվառման մանկավարժական պայմանները», գիտական ղեկավար՝ Լ. Պողոսյան: Աշխատանքը ամբողջությամբ պատրաստ է, խմբագրման ընթացքի մեջ է:

**Արսենյան Սեդա** - Մագիստրոսական թեզի թեման է՝ «Զգացմունքների դաստիարակության առանձնահատկությունները կրտսեր դպրոցում», գիտական ղեկավար՝ Ա. Թոփուզյան: Աշխատանքի տեսական մասը պատրաստ է, կատարում ենք հետազոտական աշխատանքի վերլուծություն և աշխատում ենք կրտսեր դպրոցականի զգացմունքների առանձնահատկությունների մոդելի վրա:

**Մխիթարյան Սուսաննա** - Մագիստրոսական թեզի թեման է՝ «Ընտանեկան դաստիարակության առանձնահատկությունները ժամանակակից ընտանիքում», գիտական ղեկավար՝ Ա. Թոփուզյան: Աշխատանքը գրեթե պատրաստ է, աշխատում ենք եզրակացությունների ուղղությամբ:

**Ա. Թոփուզյան** – Կարելի է համարել, որ թեզերի պատրաստման գործընթացքը բնականոն հունով ընթանում է և մենք ժամանակին ամեն ինչ կհասցնենք: Խնդրում եմ բոլոր ղեկավարներին աշխատել ուսանողների հետ, օգնել նրանց PP ներկայացումները պատրաստելու գործում:

**2. ԼՍԵՑԻՆ** - Ամփոփիչ ատեստավորման գործընթացի կազմակերպման ժամանակացույցի մասին:

**Ա. Թոփուզյան** – Ձեզ ենք ներկայացնում ամփոփիչ ատեստավորման գործընթացի կազմակերպման ժամանակացույցի նախագիծը: Խնդրում եմ կարդալ և տալ կարծիք ու առաջարկություններ:

**Ավարտական աշխատանքներ**

- ✓ **Ապրիլի 15-ին** - ավարտական աշխատանքների՝ միայն էլեկտրոնային տարբերակի ներկայացում:
- ✓ **Ապրիլի 16-ից - ապրիլի 30-ը** - աշխատանքների ստուգում հանձնաժողովի կողմից: Հանձնաժողովի կազմը. նախագահ՝ Լ. Ասատրյան, անդամներ՝ Ա.Հովհաննիսյան, Գ.Աղուզումցյան, Ն.Մարկոսյան, Ա.Դալլաքյան, Ս.Ջանիկյան, Ա.Մանուկյան, Ն.Կարապետյան, Գ.Հարությունյան, Մ.Ասատրյան, Զ. Ասատրյան, Լ.Նազարյան, Ի. Բաբայան, Մ. Գևորգյան:
- ✓ **Ապրիլի 16-ից – ապրիլի 30-ը** - PP ներկայացումների պատրաստում՝ ղեկավարների հսկողությամբ:
- ✓ **Մայիսի 4-ին, 5-ին, 6-ին ժամը 11.00-16.00** ավարտական աշխատանքների նախապաշտպանություն՝ ղեկավարների և հանձնաժողովի անդամների մասնակցությամբ: /on-line/ ըստ օրերի ուսանողների ցանկը կցվում է:
- ✓ **Մայիսի 7-ից - մայիսի 13-ը** - նախապաշտպանության ժամանակ արված դիտողությունների շտկում:
- ✓ **Մայիսի 14-ին** - ավարտական աշխատանքների և PP ներկայացումների հանձնում՝ էլեկտրոնային տարբերակով, ղեկավարի կարծիքի հետ միասին:

- ✓ **Մայիսի 14-ից մայիսի 18-ը** - ավարտական աշխտանքների տրամադրումը գրախոսներին:
- ✓ **Մայիսի 18-ին** – գրախոսական աշխատանքի ավարտ: Գրախոսական թերթիկների, ավարտական աշխատանքների և PP ներկայացումների հանձնում:
- ✓ **Մայիսի 20-ին** - ավարտական աշխատանքների, PP ներկայացումների, ղեկավարի և գրախոսի կարծիքների հանձնումը դեկաններին:

**Մագիստրոսական թեզեր**

- ✓ **Ապրիլի 30-ին** - թեզերի միայն էլէկտրոնային տարբերակի հանձնում:
- ✓ **Ապրիլի 30-ին- ժամը 13.00-ին** ԿՀՍ մագիստրոս 2-րդ կուրսի 6 ուսանողի նախապաշտպանություն՝ ղեկավարների և հանձնաժողովի անդամների մասնակցությամբ: /on-line//ցուցակը կցվում է/:
- ✓ **Մայիսի 2-ից - Մայիսի 11-ը** աշխատանքների ստուգում հանձնաժողովի կողմից: Հանձնաժողովի կազմը՝ նախագահ՝ Ա.Թոփուզյան, անդամներ՝ Լ.Պողոսյան, Հ.Թադևոսյան, Գ.Հակոբյան, Ս.Սիսյան:
- ✓ **Մայիսի 2-ից - Մայիսի11-ը** - PP ներկայացումների պատրաստում՝ ղեկավարների հսկողությամբ:
- ✓ **Մայիսի 7-ին ժամը 14.00-ին**- ԿՀՍ ֆակուլտետի մագիստրոս 2-րդ կուրսի 5 ուսանողի նախապաշտպանություն՝ ղեկավարների և հանձնաժողովի անդամների մասնակցությամբ:/on-line/՝/ցուցակը կցվում է/:
- ✓ **Մայիսի 8-ին ժամը 11.00-ին** –ՍԿ ֆակուլտետի մագիստրոս 2-րդ կուրսի 5 ուսանողի նախապաշտպանություն՝ ղեկավարների և հանձնաժողովի անդամների մասնակցությամբ:/on-line/
- ✓ **Մայիսի 11-ից Մայիսի 18-ը** - նախապաշտպանության ժամանակ արված դիտողությունների շտկում:
- ✓ **Մայիսի 12-ից Մայիսի 18-ը** - PP ներկայացումների ստուգումը հանձնաժողովի անդամների կողմից:

- ✓ **Մայիսի 19-ին** - թեզերի, PP ներկայացումների հանձնում՝ էլեկտրոնային տարբերակով, ղեկավարի կարծիքի հետ միասին:
- ✓ **Մայիսի 20-ին** - թեզերի տրամադրումը գրախոսներին՝ մայիսի 25-ին վերադարձնելու պայմանով:
- ✓ **Մայիսի 26-ին** - թեզերի, PP ներկայացումների, ղեկավարի և գրախոսի կարծիքների հանձնումը դեկաններին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ –** Ա. Դալլաքյան, Հ. Թադևոսյան, Լ. Ասատրյան

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հաստատել ամփոփիչ ատեստավորման գործընթացի կազմակերպման ժամանակացույցը և հանձնարարել դրա կատարման վերահսկողությունը Ա. Թոփուզյանին:

**ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ**

**ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ**

**03.04.2020թ.**

Արձանագրություն Նո. 15

2019-2020 ՈՒՍ.ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի ՆԻՍՏԻ

Օրակարգ

1. 2019-2020 ուս. տարում ԿՀՍ ֆակուլտետի «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության առկա մագիստրատուրա 2-րդ կուրսի Մանկավարժության ամբիոնի գծով մագիստրոսական ատենախոսությունների նախապաշտպանությունների արդյունքների մասին:
2. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գրախոսների ցանկի հաստատման մասին:

**1. ԼՍԵՑԻՆ –** Անահիտ Ադամյանի ‹‹ՄՈՒԿ-ով երեխաների ինտեգրումը որպես սոցիալ-մանկավարժական հիմնախնդիր›› թեմայով մագիստրոսական ատենախոսության նախապաշտպանության տեսաներկայացումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Ա. Թոփուզյան, Լ. Նազարյան

**Ա. Թոփուզյան –** Տեսաներկայացման սլայդները շատ ծանրաբեռնված են, արդիականությունը շատ երկար է, այն անհրաժեշտ է ներկայացնել երեք նախադասությամբ: Օգտագործված մեթոդների մասին ներկայացրեք միայն հետազոտական մասում, ներածության մեջ պետք չէ անդրադառնալ դրանց: Տեսական մասն ամփոփեք մոդելով, որը պետք է լինի Ձեր տեսական նորույթը: Ընդհանուր առմամբ աշխատանքն ամբողջական է:

**Լ. Նազարյան** - .Մագիստրոսական հետազոտության իրականացման ողջ ընթացքում մագիստրոսն աչքի է ընկել բարձր պատասխանատվությամբ: Բարեխիղճ և անհրաժեշտ համբերությամբ իրականացրել է հետազոտության էմպիրիկ արդյունքների ստացումը, դրանց մշակման գործում ցուցաբերել է անհրաժեշտ աշխատունակություն: Անահիտ Ադամյանի մագիստրոսական ատենախոսությունն ավարտուն, ինքնուրույն, ամբողջական հետազոտություն է և համապատասխանում է մագիստրոսական

ատենախոսություններին ներկայացվող պահանջներին: Առաջարկում եմ երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Անահիտ Ադամյանի «ՄՈՒԿ-ով երեխաների ինտեգրումը որպես սոցիալ-մանկավարժական հիմնախնդիր» թեմայով մագիստրոսական ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ԼՍԵՑԻՆ –** Վանուհի Հարությունյանի «Սոցիալական մանկավարժի աշխատանքը սոցիալապես անապահով ընտանիքների հետ» թեմայով մագիստրոսական ատենախոսության նախապաշտպանության տեսաներկայացումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ –** Ա. Թոփուզյան, Ա. Հովհաննիսյան

**Ա. Թոփուզյան -** Արդիականությունը շատ երկար է, անհրաժեշտ է կրճատել: 1-ին գլուխը ներկայացնելիս անպայման կարճ ներկայացրեք նաև սոցիալապես անապահով ընտանիքների բնութագիրը և հիմնախնդիրները, որը կարող է լինել Ձեր աշխատանքի տեսական նորույթը: Եզրակացությունները անհրաժեշտ է վերանայել, քանի որ այնտեղ չի երևում հետազոտության նպատակի իրականացումը: Տեսաներկայացման մեջ առկա են բազմաթիվ տեխնիկական վրիպակներ:

**Ա. Հովհաննիսյան** - Վանուհի Հարությունյանին ընդհանուր առմամբ հաջողվել է իրականացնել հետազոտություն, մագիստոսը կարողացել է գտնել համապատասխան գրականություն, կատարել հետազոտական աշխատանք, իրեն լիովին դրսևորել է որպես ինքնուրույն հետազոտողի, նա կարողացել է ինքնուրույն գտնել համապատասխան նյութեր, կատարել վերլուծություններ, հետևություններ, ներկայացնել մանկավարժական մոտեցումներ: Վանուհի Հարությունյանի մագիստրոսական ատենախոսությունն ավարտուն, ինքնուրույն աշխատանք է, լիովին համապատասխանում է մագիստրոսական թեզի պահանջներին: Առաջարկում եմ երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Վանուհի Հարությունյանի «Սոցիալական մանկավարժի աշխատանքը սոցիալապես անապահով ընտանիքների հետ» թեմայով մագիստրոսական

ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության՝ վերոնշյալ դիտարկումները շտկելուց հետո:

**ԼՍԵՑԻՆ –** Ռոզա Հայրումյանի «Սոցիալական մանկավարժի աշխատանքը ԿԱՊԿՈՒ երեխաների ընտանիքների հետ» թեմայով մագիստրոսական ատենախոսության նախապաշտպանության տեսաներկայացումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ –** Ա. Թոփուզյան, Ա. Հովհաննիսյան

**Ա. Թոփուզյան** – Հետազոտության օբյեկտը և առարկան սլայդում բացակայում է, անհրաժեշտ է ավելացնել: Աշխատանքում առկա են տառասխալներ, եզրակացությունները պետք է խմբագրել, դրանք պետք է պատասխանեն խնդիրներին: Ձեր ներկայացրած հանձնարարականները ուղղեք սոցիալական մանկավարժին, որոնք նա կօգտագործի ԿԱՊԿՈՒ երեխաների ընտանիքների հետ աշխատանքում, քանի որ Ձեր թիրախը սոցիալական մանկավարժն է:

**Ա. Հովհաննիսյան** - Հետազոտության իրականացման ողջ ընթացքում Ռոզա Հայրումյանն աչքի է ընկել բարձր պատասխանատվությամբ, աշխատասիրությամբ, պարտաճանաչությամբ, ազնվությամբ, կատարել է ինքնուրույն հետազոտական աշխատանք: Մագիստրոսական ատենախոսությունը համապատասխանում է մագիստրոսական թեզին ներկայացվող պահանջներին: Առաջարկում եմ երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Ռոզա Հայրումյանի «Սոցիալական մանկավարժի աշխատանքը ԿԱՊԿՈՒ երեխաների ընտանիքների հետ» թեմայով մագիստրոսական ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության՝ վերոնշյալ բոլոր դիտարկումները շտկելու պայմանով:

**ԼՍԵՑԻՆ** – Արմինե Մելիքյանի «Սոցիալ–մանկավարժական գործունեության առանձնահատկությունները Երևանի Աջափնյակ համայնքի սոցիալական հոգածության կենտրոնում» թեմայով մագիստրոսական ատենախոսության նախապաշտպանության տեսաներկայացումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Ա. Թոփուզյան, Գ. Եգանյան

**Ա. Թոփուզյան** – Եզրակացությունները անհրաժեշտ է խմբագրել: Առաջարկում եմ ներկայացված մոդելը վերանվանել «Երևանի Աջափնյակ համայնքի սոցիալական հոգածության կենտրոնի գործունեության մոդել» և ոչ թե «Սոցիալ-մանկավարժական աջակցության մոդել»:

**Գ. Եգանյան** – Մագիստրոսական թեզի կատարման ընթացքում ուսանողը դրսևորել է նախաձեռնողականություն, պատասխանատվություն, բարեխղճություն. փորձել է ձեռք բերել հիմնախնդրի վերաբերյալ գիտական տեղեկատվական նյութեր, առաջադրել մոտեցումներ իր կողմից իրականացվող հիմնախնդրի լուծման վերաբերյալ: Մագիստրոսական թեզն ավարտուն, ինքնուրույն, տեսական և գործնական կարևոր նշանակություն ունեցող ուսումնական հետազոտություն է, կարելի է ներկայացնել հրապարակային պաշտպանության:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Արմինե Մելիքյանի «Սոցիալ–մանկավարժական գործունեության առանձնահատկությունները Երևանի Աջափնյակ համայնքի սոցիալական հոգածության կենտրոնում» թեմայով մագիստրոսական ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ԼՍԵՑԻՆ** - Վիկտորյա Հովհաննիսյանի «Արտադպրոցական ուսումնական հաստատությունների դերը կրտսեր դպրոցականների սոցիալականացման գործում» թեմայով մագիստրոսական ատենախոսության նախապաշտպանության տեսաներկայացումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Ա. Թոփուզյան, Ն. Մարկոսյան

**Ա. Թոփույան** – 4-րդ խնդիրը անհրաժեշտ է մասնակի վերաձևակերպել: Սլայդում բացակայում է աշխատանքի տեսական և գործնական նշանակություն բաժինը: Եզրակացությունները չեն պատասխանում խնդիրներին, անհրաժեշտ է խմբագրել:

**Ն. Մարկոսյան** - Մագիստրոսական թեզի շրջանակներում համապատասխան նյութերի հավաքագրման, տեսական մասի շարադրման և դրա վերլուծության համար

Վ.Հովհաննիսյանը ցուցաբերել է բավարար ինքնուրույնություն: Կատարել է թեմայից բխող հետազոտական աշխատանք, որի ընթացքում կարողացել է կատարել հետևություններ, վերլուծություններ և եզրահանգումներ: Մագիստրոսական թեզի արդյունքները կիրառելի են մանկավարժների, սոցիալական մանկավարժների կողմից տարբեր արտադպրոցական ուսումնական հաստատություններում: Մագիստրոսական թեզը տրամաբանական, ավարտուն աշխատանք է և ընդհանուր առմամբ համապատասխանում է մագիստրոսական թեզին ներկայացվող պահանջներին: Առաջարկում եմ երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Վիկտորյա Հովհաննիսյանի «Արտադպրոցական ուսումնական հաստատությունների դերը կրտսեր դպրոցականների սոցիալականացման գործում» թեմայով մագիստրոսական ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության՝ ներկայացված բոլոր թերությունները շտկելուց հետո:

**ԼՍԵՑԻՆ** – Արևիկ Մուրադյանի «Սոցիալ-մանկավարժական գործունեությունը 6 տարեկան երեխաների դպրոցին հարմարման գործընթացը կազմակերպելու ուղղությամբ» թեմայով մագիստրոսական ատենախոսության նախապաշտպանության տեսաներկայացումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Ա. Թոփուզյան, Գ. Աղուզումցյան

**Ա. Թոփուզյան** – Անհրաժեշտ է արդիականությունը վերաշարադրել և կրճատել: Ներկայացված սոցիալ-մանկավարժական արդյունավետ ուղիները խմբագրման և վերանայման կարիք ունեն: Եզրակացությունները անհարժեշտ է համապատասխանեցնել առաջադրված խնդիրներին:

**Գ.Աղուզումցյան** – Ա. Մուրադյանը աշխատանքը կատարելիս ցուցաբերել է ինքնուրույնություն և հետազոտական աշխատանք կատարելու ունակություն: Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել մանկապարտեզներում, դպրոցներում վեց տարեկան երեխաների դպրոցին հարմարումը արդյունավետ կազմակերպելու գործընթացում: Մագիստրոսական թեզը ավարտուն, ամբողջական

հետազոտություն է, և այն համապատասխանում է մագիստրոսական թեզի կատարմանը ներկայացվող պահանջներին: Ուստի առաջարկում եմ երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Արևիկ Մուրադյանի «Սոցիալ-մանկավարժական գործունեությունը 6 տարեկան երեխաների դպրոցին հարմարման գործընթացը կազմակերպելու ուղղությամբ» թեմայով մագիստրոսական ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության՝ ներկայացված բոլոր թերությունները շտկելու պայմանով:

**2. ԼՍԵՑԻՆ** - Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գրախոսների ցանկի հաստատման մասին:

**Ա. Թոփուզյան** – Ամբիոնում ստեղծված ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ուսումնասիրման հանձնաժողովի առաջարկությունները հաշվի առնելով՝ կազմել ենք գրախոսների ցանկը, որը առաջարկում եմ հաստատել:

| **Առկա բակ. 4-րդ կուրս<br>Սոցիալական մանկավարժություն** | | | | |
|---|---|---|---|---|
| **Հ/հ** | **Ավարտական աշխատանքի Թեմա** | **Ուսանողի անուն ազգանուն** | **Գիտական ղեկավար** | **Գրախոս** |
| **1.** | Սոցիալական մանկավարժի աշխատանքը դնիանտ վարք ունեցող երեխաների հետ: | Մուրադյան Աննա | Լ. Պողոսյան | մ.գ.թ., դասախոս Ա. Դալլաքյան |
| **2.** | Դպրոցականների լիդերային օժտվածության բացահայտման և զարգացման սոցիալ-մանկավարժական պայմանները: | Պետրոսյան Շուշանիկ | Լ. Պողոսյան | մ.գ.թ., դոցենտ Ա. Մանուկյան |
| **3.** | Ավագ դպրոցականներին զինվորական ծառայությանը պատրաստելու սոցիալ-մանկավարժական ուղիները: | Ճիճիլյան Աննա | Հ. Թադևոսյան | մ.գ.դ., պրոֆեսոր Լ. Ասատրյան |
| **4.** | Հանրակրթական դպրոցում սոցիալական մանկավարժի անհրաժեշտության հիմնավորումը: | Ասատրյան Աշխեն | Հ. Թադևոսյան | մ.գ.թ., դոցենտ Լ. Նազարյան |
| **5.** | Սոցիալական մանավարժի դերը զարգացման կենտրոններում: | Հովհաննիսյան Վիկտորյա | Ն. Մարկոսյան | մ.գ.թ., դոցենտ Գ. Աղուզումցյան |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **6.** | Ընտանիքի դերը երեխաների սոցիալականացման գործընթացում: | Բարեղամյան Լուսինե | Ն. Մարկոսյան | մ.գ.թ., դոցենտ Լ. Նազարյան |
| **7.** | Սոցիալական մանկավարժի դիագնոստիկ գործառույթի իրականացումը տարրական դպրոցում: | Դանիելյան Անի | Գ. Հարությունյան | մ.գ.թ., դասախոս Ն. Մարկոսյան |
| **8.** | Նախադպրոցականի՝ դպրոցին հարմարվելու գործընթացը, որպես սոցիալ-մանկավարժական հիմնախնդիր: | Սահակյան Արևիկ | Գ. Հարությունյան | մ.գ.թ., դոցենտ Զ. Ասատրյան |
| **9.** | Ընտանեկան բռնության ենթարկված երեխաների սոցիալ-մանկավարժական աջակցման ուղիները: | Գևորգյան Աննա | Գ. Հարությունյան | մ.գ.թ., դոցենտ Ս. Ջանիկյան |
| **10.** | ՀՀ-ում բազմազավակ ընտանիքների արդի հիմնախնդիրներն ու դրանց լուծման սոցիալ-մանկավարժական ուղիները: | Մկրտչյան Հասմիկ | Գ. Հարությունյան | մ.գ.թ., դոցենտ Ա. Հովհաննիսյան |
| **11.** | Բուհական միջավայրին 1-ին կուրսեցիների հարմարման մանկավարժական պայմանները | Պետրոսյան Սոնա | Գ. Աղուզումցյան | մ.գ.թ., դոցենտ Մ. Ասատրյան |
| **12.** | Սոցիալական մանկավարժի գործառույթները բազմազավակ ընտանիքների հետ աշխատելու համատեքստում: | Ալոյան Դարիկո | Գ. Աղուզումցյան | մ.գ.թ., դոցենտ Ա. Դալլաքյան |
| **13.** | Երեխաների սոցիալականացման հիմախնդիրը նախադպրոցական հաստատությունում: | Վարդերեսյան Ֆենյա | Գ. Եգանյան | մ.գ.թ., դոցենտ Մ. Ասատրյան |
| **14.** | Սոցիալական մանկավարժի աշխատանքը տարրական դպրոցում: | Թորգոմյան Սիրանուշ | Գ. Եգանյան | մ.գ.թ., դոցենտ Գ. Հարությունյան |
| **15.** | Դպրոց-ընտանիք համագործակցության ձևերը տարրական դպրոցում և դրանց դերը դաստիարակության գործում: | Վարդանյան Էմմա | Ի. Բաբայան | մ.գ.թ., դոցենտ Մ. Ասատրյան |
| **16.** | Սոցիալական մանկավարժի աշխատանքը ավագ դպրոցականների մասնագիտական կողմնորոշման գործընթացում: | Մարգարյան Լիանա | Ա. Հովհաննիսյան | մ.գ.թ., դոցենտ Լ. Նազարյան |
| **17.** | Սոցիալական մանկավարժի աշխատանքը Աջափնյակ համայնքի երեխաների սոցիալական հոգածության | Սևանյան Աննա | Ա. Հովհաննիսյան | մ.գ.թ., դասախոս Ն. Մարկոսյան |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | կենտրոնում: | | | |
| **18.** | Ուսուցչի օգնականի աշխատանքը ներառական կրթության պայմաններում: | Քարամյան Անի | Ա. Հովհաննիսյան | մ.գ.թ., դոցենտ Ի. Բաբայան |
| **19.** | Սոցիալական մանկավարժի աշխատանքը դպրոց-ընտանիք համատեքստում: | Մկրտչյան Արևիկ | Ա. Հովհաննիսյան | մ.գ.թ., դոցենտ Ի. Բաբայան |
| **20.** | Կրտսեր դպրոցականների մասնակցային պասիվության հաղթահարման մանկավարժական ուղիները: | Գրիգորյան Ալինա | Ա. Դալլաքյան | մ.գ.թ., դոցենտ Ն. Կարապետյան |
| **21.** | «Քոուչ ծնողի» մոդելը և առանձնահատկությունները տարրական դպրոցում: | Սահակյան Ազատուհի | Ա. Դալլաքյան | մ.գ.թ., դոցենտ Գ. Հարությունյան |
| **22.** | Դեռահասների վարքային շեղումների կանխարգելումը որպես սոցիալ-մանկավարժական հիմնախնդիր | Հովհաննիսյան Հեղինե | Լ. Նազարյան | մ.գ.թ., դոցենտ Գ. Աղուզումցյան |
| **23.** | Սոցիալական մանկավարժի գործառույթները հիպերակտիվ երեխայի հետ տարվող աշխատանքում | Սաֆարյան Գոռ | Լ. Նազարյան | մ.գ.թ., դոցենտ Ա. Հովհաննիսյան |

| **Առկա բակ. 4-րդ կուրս<br>Տարրական մանկ. և մեթ.** | | | | |
|---|---|---|---|---|
| **Հ/հ** | **Ավարտական աշխատանքի Թեմա** | **Ուսանողի անուն ազգանուն** | **Գիտական ղեկավար** | **Գրախոս** |
| 1 | Կրսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման մեթոդները, տեխնոլոգիաներն ու միջոցները | Վարդանյան Մանե | Լ. Ասատրյան | մ.գ.թ., դոցենտ Ս. Ջանիկյան |
| 2 | Աղետներին դիմակայելու կարողությունների ձևավորումը տարրական դպրոցում: | Ավագյան Թամարա | Ն. Կարապետյան | մ.գ.թ., դոցենտ Մ. Գևորգյան |
| 3 | Բնապահպանական միջոցառումների կազմակերպումը տարրական դպրոցում: | Աղասյան Դիանա | Ն. Կարապետյան | մ.գ.դ., պրոֆեսոր Լ. Ասատրյան |
| 4 | Մանկավարժական պրակտիկայի դերը տարրական դպրոցի ապագա ուսուցչի մասնագիտական պատրաստության | Պողոսյան Սոնա | Գ. Հակոբյան | մ.գ.թ., դոցենտ Գ. Հարությունյա |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | գործընթացում | | | ն |
| 5 | Ինքնագնահատման կարողության զարգացման առանձնահատկությունները կրտսեր դպրոցական տարիքում | Սևոյան Գոհար | Գ. Հակոբյան | մ.գ.թ., դոցենտ Ն. Կարապետյան |

| Առկա մագ. 2-րդ կուրս<br>Սոցիալական մակավարժություն | | | | |
|---|---|---|---|---|
| Հ/Հ | Թեզի թեմա | Ուսանողի անուն ազգանուն | Գիտական ղեկավար | Գրախոս |
| 1. | Մանկությունը որպես մարդկային կյանքի հիմք | Եղիազարյան Ալինա | Ա. Թոփուզյան | մ.գ.թ., դոցենտ Ա. Դալլաքյան |
| 2. | Համակարգչային խաղերի ազդեցությունը երեխաների սոցիալականացման վրա | Գաբրիելյան Անժելա | Ա. Թոփուզյան | ֆ.մ.գ.թ., ասիստենտ Վ. Խառատյան |
| 3. | Կրթությունից դուրս մնացած երեխաների կրթության իրավունքի իրացմանն ուղղված սոցիալ-մանկավարժական գործունեության բովանդակությունը | Հովհաննիսյան Թամարա | Հ. Թադևոսյան | հ.գ.թ., դոցենտ Լ. Արամյան |
| 4. | Սոցիալական մանկավարժի աշխատանքը ԿԱՊԿՈՒ երեխաների հետ | Հակոբյան Աննա | Հ. Թադևոսյան | հ.գ.թ., դոցենտ Լ. Արամյան |
| 5. | ՄՈՒԿ-ով երեխաների ինտեգրումը որպես սոցիալ-մանկավարժական հիմնախնդիր | Ադամյան Անահիտ | Լ. Նազարյան | մ.գ.թ., դասախոս Ս. Մուրադյան |
| 6. | Աշակերտների հոգեբանական անվտանգության ապահովումը դպրոցում սոցիալ – մանկավարժական գործունեության միջոցով | Մովսեսյան Աննա | Լ. Նազարյան | մ.գ.թ., դասախոս Ս. Մուրադյան |
| 7. | Արտադպրոցական ուսումնական հաստատությունների դերը կրտսեր դպրոցականների սոցիալականացման գործում | Հովհաննիսյան Վիկտորիա | Ն. Մարկոսյան | հ.գ.թ., դոցենտ Ս. Մակիչյան |
| 8. | Սոցիալական մանկավարժի | Հայրումյան | Ա. | մ.գ.թ., |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | աշխատանքը ԿԱՊԿՈՒ երեխաների ընտանիքների հետ | Ռոզա | Հովհաննիսյան | պրոֆեսոր Ս. Մարության |
| 9. | Սոցիալական մանկավարժի աշխատանքը սոցիալապես անապահով ընտանիքների հետ | Հարությունյան Վանուհի | Ա. Հովհաննիսյան | մ.գ.թ., պրոֆեսոր Ս. Մարության |
| 10. | Սոցիալ–մանկավարժական գործունեության առանձնահատկությունները Երևանի Աջափնյակ համայնքի սոցիալական հոգածության կենտրոնում | Մելիքյան Արմինե | Գ. Եգանյան | հ.գ.թ., ասիստենտ Լ. Վարդանյան |
| 11. | Սոցիալ-մանկավարժական գործունեությունը 6 տարեկան երեխաների դպրոցին հարմարման գործընթացը կազմակերպելու ուղղությամբ | Մուրադյան Արևիկ | Գ. Աղուզումցյան | մ.գ.թ., դոցենտ Ա. Ղազարյան |

| **Առկա մագ. 2-րդ կուրս<br>Տարրական մանկ. և մեթ.** | | | | |
|---|---|---|---|---|
| **Հ/Հ** | **Թեզի թեմա** | **Ուսանողի անուն ազգանուն** | **Գիտական ղեկավար** | **Գրախոս** |
| 1 | Զգացմունքների դաստիարակության առանձնահատկությունները կրտսեր դպրոցում: | Արսենյան Սեդա | Աիդա Թոփուզյան | հ.գ.թ., դոցենտ Ա. Բեջանյան |
| 2 | Ընտանեկան դաստիարակության առանձնահատկությունները ժամանակակից ընտանիքում: | Մխիթարյան Սուսաննա | Աիդա Թոփուզյան | մ.գ.դ., պրոֆեսոր Ջ. Գյուլամիրյան |
| 3 | Դպրոցական մակարդակում երեխայի կրթության կարիքի գնահատման հիմնախնդիրները | Անանյան Գայանե | Նաիրա Մարտիրոսյան | մ.գ.թ., դասախոս Ս. Մուրադյան |
| 4 | Տարրական դպրոցում էլեկտրոնային միջոցների կիրառման դիդակտիկական պայմանները: | Մուրադյան Արաքսյա | Լուսինե Պողոսյան | մ.գ.թ. դոցենտ Ա. Թադևոսյան |
| 5 | Տարրական դպրոցի աշակերտների սեռադերային առանձնահատկությունների հաշվառման մանկավարժական | Աբրահամյան Մարգարիտա | Լուսինե Պողոսյան | մ.գ.դ., պրոֆեսոր Ջ. |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | պայմանները: | | | Գյուլամիրյան |

| Հեռակա բակ. 5-րդ կուրս<br>Սոցիալական մանկավարժություն | | | | |
|---|---|---|---|---|
| **Հ/հ** | **Ավարտական աշխատանքի Թեմա** | **Ուսանողի անուն ազգանուն** | **Գիտական ղեկավար** | **Գրախոս** |
| **1.** | Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների գործունեությունը ՀՀ-ում և սոցիալական մանկավարժի աշխատանքի բովանդակությունը: | Մկրտչյան Գոհար | Հ. Թադևոսյան | մ.գ.թ., դոցենտ Գ. Հարությունյան |
| **2.** | Մանկավարժական բուհի ուսանողների հանդուրժողականության ձևավորման սոցիալ-մանկավարժական ուղիները: | Ասատրյան Մերրի | Հ. Թադևոսյան | մ.գ.թ., դոցենտ Զ. Ասատրյան |
| **3.** | Ավագ դպրոցականների լիդերային որակների զարգացման սոցիալ-մանկավարժական ուղիները: | Խաչատրյան Արևհատ | Հ. Թադևոսյան | մ.գ.թ., դոցենտ Լ. Նազարյան |
| **4.** | «ՖԲ» սոցիալական ցանցի ազդեցությունը ավագ դպրոցականների սոցիալականացման գործընթացի վրա: | Հովհաննիսյան Անի | Հ. Թադևոսյան | մ.գ.թ., դոցենտ Ա. Մանուկյան |
| **5.** | Սոցիալական մանկավարժի կանխարգելիչ աշխատանքները դպրոցում: | Բարեղամյան Վիկտորյա | Ն. Մարկոսյան | մ.գ.թ., դասախոս Ա. Դալլաքյան |
| **6.** | Սոցիալական մանկավարժի աշխատանքը Օհանավանի դպրոցի դժվար դաստիարակվող դեռահասների շրջանում: | Առաքելյան Աննա | Ա. Հովհաննիսյան | մ.գ.թ., դասախոս Ն. Մարկոսյան |
| **7.** | Սոցիալական մանկավարժի աշխատանքի առանձնահատկությունները օժտված երեխաների շրջանում: | Մարկոսյան Մարիամ | Ա. Հովհաննիսյան | մ.գ.թ., դասախոս Ն. Մարկոսյան |
| **8.** | Սոցիալ-մանկավարժական աշխատանքի առանձնահատկությունները հիպերակտիվ երեխաների հետ: | Եպիսկոպոսյան Անուշ | Ս. Սիսյան | մ.գ.թ., դոցենտ Ա. Հովհաննիսյան |
| **9.** | Սովորողների առողջության պահպանման հիմնախնդիրը հանրակրթական դպրոցում: | Թովմասյան Լիլիթ | Ս. Սիսյան | մ.գ.թ., դոցենտ Ն. Կարապետյան |

| Հեռական բակ. 5-րդ կուրս<br>Տարրական մանկ. և մեթ. | | | | |
|---|---|---|---|---|
| Հ/հ | Ավարտական աշխատանքի<br>Թեմա | Ուսանողի անուն ազգանուն | Գիտական ղեկավար | Գրախոս |
| 1 | Կրտսեր դպրոցականների էկոլոգիական դաստիարակության միջոցներն ու ձևերը | Մելքոնյան Աննա | Լ. Ասատրյան | մ.գ.թ., դոցենտ Ն. Կարապետյան |
| 2 | Կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման մեթոդներն ու միջոցները | Մխիթարյան Արփի | Լ. Ասատրյան | մ.գ.թ., դոցենտ Մ. Ասատրյան |
| 3 | Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը տարրական դպրոցում որպես դասի արդյունավետության բարձրացման միջոց: | Համբարձումյան Գայանե | Լ. Ասատրյան | մ.գ.թ., դոցենտ Ա. Մանուկյան |
| 4 | Խաղի դերը կրտսեր դպրոցականների միջանձնային հարաբերությունների ձևավորման գործում | Մելիքսեթյան Անի | Լ. Ասատրյան | մ.գ.թ., դոցենտ Զ. Ասատրյան |
| 5 | Հեքիաթների և հանելուկների դերը կրտսեր դպրոցականի էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման գործում: | Գրիգորյան Հերմինե | Ն. Կարապետյան | մ.գ.թ., դոցենտ Ս. Ջանիկյան |
| 6 | Կրտսեր դպրոցականների էկոլոգիական գիտելիքների ձևավորումը միջառարկայական կապերի կիրառմամբ: | Մնացականյան Գայանե | Գ. Հակոբյան | մ.գ.դ., պրոֆեսոր Լ. Ասատրյան |
| 7 | Կրտսեր դպրոցականների գեղագիտական դաստիարակության միջոցները: | Հարությունյան Գոհարիկ | Գ. Հակոբյան | մ.գ.թ., դոցենտ Ս. Ջանիկյան |
| 8 | Փոխներգործուն մեթոդների կիրառման արդյունավետությունը տարրական դպրոցի ուսուցման գործընթացում: | Գալոյան Մելինե | Մ. Ասատրյան | մ.գ.թ., դոցենտ Մ. Գևորգյան |
| 9 | Խաղային տեխնոլոգիաների իրականացման մանկավարժական պայմանները տարրական դպրոց: | Շահինյան Վիկտորիա | Ա. Մանուկյան | մ.գ.թ., դոցենտ Ի. Բաբայան |
| 10 | Համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի կիրառումը տարրական դպրոցում: | Աբգարյան Թամարա | Ս. Ջանիկյան | մ.գ.թ., դոցենտ Մ. Գևորգյան |

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հաստատել Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գրախոսների ներկայացված ցանկը:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ

30.04.2020թ.

## Արձանագրություն Նո. 16

## 2019-2020 ՈՒՍ.ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՄԱՅԻՍԻ 4-Ի ՆԻՍՏԻ

Օրակարգ

1. 2019-2020 ուս. տարում ԿՀՍ ֆակուլտետի «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության առկա բակալավր 4-րդ և հեռակա բակալավր 5-րդ կուրսերի Մանկավարժության ամբիոնի գծով ավարտական աշխատանքների նախապաշտպանությունների արդյունքների մասին:

**ԼՍԵՑԻՆ –** Աննա Մուրադյանի ‹‹Սոցիալական մանկավարժի աշխատանքը դևիանտ վարք ունեցող երեխաների հետ›› թեմայով ավարտական աշխատանքի նախապաշտպանության տեսաներկայացումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Լ. Ասատրյան, Ա. Դալլաքյան, Լ. Պողոսյան

**Ա. Դալլաքյան** – Ներկայացված ավարտական աշխատանքն ինքնուրույն և ավարտուն աշխատանք է: Գրականության ցանկում ընդգրկված աղբյուրներն արդիական են, ներառված են թեմային անհրաժեշտ աղբյուրներ: Ավարտական աշխատանքի եզրակացություններն արված են ինքնուրույն և ընդհանուր առմամբ համապատասխանում են առաջադրված նպատակին ու խնդիրներին: Ավարտական աշխատանքն ավելի կշահեր, եթե Ա. Մուրադյանը տեսական և կիրառական բաժնում անդրադարձ կատարեր և վերլուծեր «դեռահասների սկրինինգ տեխնոլոգիան»՝ իբրև դիագնոստիկ, շտկող և կանխարգելող գործընթաց, ինչպես նաև առաջարկություններում ներառվեր նշված տեխնոլոգիայի հետ կապված նորարարական մոտեցումները:

**Լ. Պողոսյան** – Ավարտական աշխատանքը գրելու, հետազոտություն կատարելու ընթացքում ուսանողն աշխատել է ինքնուրույն: Կարողացել է փնտրել և գտնել հիմնախնդրին վերաբերող նյութեր, դրանք վերլուծել և աշխատանքի արդյունքում գալ եզրահանգումների, որոնք օբյեկտիվ են և բխում են հետազոտության տրամաբանությունից: Ա. Մուրադյանի ավարտական աշխատանքը

համապատասխանում է ավարտական աշխատանքներին ներկայացվող պահանջներին: Առաջարկում եմ աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Աննա Մուրադյանի «Սոցիալական մանկավարժի աշխատանքը դևիանտ վարք ունեցող երեխաների հետ» թեմայով ավարտական աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ԼՍԵՑԻՆ –** Շուշանիկ Պետրոսյանի «Դպրոցականների լիդերային օժտվածության բացահայտման և զարգացման սոցիալ-մանկավարժական պայմանները» թեմայով ավարտական աշխատանքի նախապաշտպանության տեսաներկայացումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Լ. Ասատրյան, Ա. Մանուկյան, Լ. Պողոսյան

**Ա. Մանուկյան** – Ներկայացված ավարտական աշխատանքի հիմնական առավելությունները պայմանավորված են դպրոցականների առաջնորդային հատկանիշներով օժտվածության բացահայտման և զարգացման սոցիալ-մանկավարժական պայմանների մշակմամբ, սահմանված նպատակի և առաջադրված խնդիրների տրամաբանական կապով և առաջարկված ընդունելի լուծումներով, ինչը վկայում են հետազոտական մասում իրականացված քանակական ու որակական տվյալների վերլուծությունն ու եզրահանգումները: ՈՒսանողի ինքնուրույնությունն ու տեսական պատրաստվածության աստիճանը, արդյունքները վերլուծելու, գնահատելու և հիմնավորելու հմտությունները բավարար են: Աշխատանքն ամբողջական է, սակայն բովանդակության մեջ նշված չեն էջերը, օգտագործված գրականության ցանկում ներառված աղբյուրներից արդիական են հինգը՝ ներառյալ առցանց կայքերի հղումները, եզրակացությունները չորսն են, որոնցից երրորդը, մեր կարծիքով, եզրակացություն չէ, այն նմանվում է կատարված քայլերի նկարագրության, ուստի եզրակացությունների այս կետը կարելի է հանել: Մնացած երեք կետերը համապատասխանում են հետազոտվող թեմային: Աշխատանքը կարելի է երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**Լ. Պողոսյան** – Ուսանողը աշխատանքը կատարել է բարեխղճորեն, ցուցաբերել է բարձր աշխատունակություն, պատասխանատվություն, աշխատանքները կատարել է նշված

ժամկետներում՝ առանց ուշացումների: Կարողանում է հիմնախնդրի վերաբերյալ կատարված դիտարկումներին պատասխանել փաստարկներով, ինչը խոսում է սովորողի ինքնուրույնության բարձր մակարդակի մասին:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Շուշանիկ Պետրոսյանի «Դպրոցականների լիդերային օժտվածության բացահայտման և զարգացման սոցիալ-մանկավարժական պայմանները» թեմայով ավարտական աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ԼՍԵՑԻՆ** – Աննա Ճիճիլյանի «Ավագ դպրոցականներին զինվորական ծառայությանը պատրաստելու սոցիալ-մանկավարժական ուղիները» թեմայով ավարտական աշխատանքի նախապաշտպանության տեսաներկայացումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Լ. Ասատրյան, Հ. Թադևոսյան

**Լ. Ասատրյան** - Կատարված է յուրօրինակ, հետաքրքիր, նորարարական մոտեցումներով լի ինքնուրույն, բարձր մակարդակի հետազոտական աշխատանք, որի կիրառական նշանակությունը ակնառու է և կարող է օգտագործվել հիմնախնդրի ուսումնասիրման ոլորտում: Աննա Ճիճլյանը ցուցաբերել է հետազոտության թեմայի գործնական տիրույթում նորարարական մոտեցումներ և ստեղծագործական լուծումներ առաջադրելու գերազանց հմտություններ ու կարողություններ, ինչը վկայում է նրա հիմնախնդրի բնագավառում ունեցած լիարժեք գիտելիքների և հետազոտական աշխատանք կատարելու ընդունակությունների մասին:

**Հ. Թադևոսյան** - Ավարտական աշխատանքի կատարման ընթացքում ուսանողը բավական ակտիվ է եղել, անընդհատ փորձել է ձեռք բերել նոր գիտատեղեկատվական նյութ թեմայի վերաբերյալ, դրսևորել է նախաձեռնողականություն, պատասխանատվություն, բարեխղճություն, ամենօրյա աշխատանքում ուսումնասիրել է իր կողմից ատենախոսության շրջանակներում ձևակերպված խնդիրները, առաջադրել հետաքրքիր մոտեցումներ իր կողմից իրականացվող աշխատանքի հիմնախնդրի լուծման վերաբերյալ: Ավարտական աշխատանքը ավարտուն, ինքնուրույն, տեսական և գործնական կարևոր նշանակություն ունեցող ուսումնական հետազոտություն է և կարելի է ներկայացնել հրապարակային պաշտպանության:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Աննա Ճիճիլյանի «Ավագ դպրոցականներին զինվորական ծառայությանը պատրաստելու սոցիալ-մանկավարժական ուղիները» թեմայով ավարտական աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ԼՍԵՑԻՆ** – Աշխեն Ասատրյանի «Հանրակրթական դպրոցում սոցիալական մանկավարժի անհրաժեշտության հիմնավորումը» թեմայով ավարտական աշխատանքի նախապաշտպանության տեսաներկայացումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Լ. Ասատրյան, Լ. Նազարյան, Հ. Թադևոսյան

**Լ. Նազարյան** - Իրականացված աշխատանքը ամբողջական է, ինքնուրույն և ինքնատիպ: Առկա է անհրաժեշտ տրամաբանական կապ և օրգանական շաղկապվածություն՝ սկսած թեմայի հիմնախնդրից մինչև եզրակացություններ: Ուսանողը կարողացել է անհրաժեշտ մեթոդների կիրառությամբ լուծել իր առջև դրված խնդիրները: Ստացված եզրակացությունները վերջավոր են, պատասխանում են խնդիրներին և համարժեք են թեմայի նպատակին: Հատկապես խրախուսելի է, որ ուսանողը մանրամասն ներկայացրել է հանրակրթական դպրոցում սոցիալական մանկավարժի աշխատանքի գործառութային բովանդակությունը: Ուսանողի կողմից իրականացվել է արդի իրավիճակում տվյալ հաստիքի հետ կապված խնդիրների մանրակրկիտ վերլուծություն: Կարծում եմ աշխատանքում ցանկալի է կրճատել արդիականության ծավալը, որը անհարկի երկար է: Աշխատանքի 2-րդ գլխում իրար ուղղակի հաջորդում են դիագրամներ, որոնց հետազոտական բովանդակությունը կարիք կա կարճ մեկնաբանել:

**Հ. Թադևոսյան** - Ուսանողն ինքնուրույն է կատարել նյութերի հավաքագրման աշխատանքները, մշակել, շարադրել, վերլուծել, դասակարգել է դրանք, ընտրել հետազոտության նպատակից և խնդիրներից բխող նպատակահարմար մեթոդներ, մեթոդիկաներ, հետազոտության բազան, իրականացրել հետազոտական աշխատանքներ, կառուցել հետազոտության արդյունքներն արտացոլող դիագրամներ, սխեմաներ, կատարել վերլուծություններ: Ա. Ասատրյանի ներկայացրած ավարտական աշխատանքը կարելի է ներկայացնել հրապարակային պաշտպանության:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Աշխեն Ասատրյանի «Հանրակրթական դպրոցում սոցիալական մանկավարժի անհրաժեշտության հիմնավորումը» թեմայով ավարտական աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ԼՍԵՑԻՆ** – Գոհար Մկրտչյանի «Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների գործունեությունը ՀՀ-ում և սոցիալական մանկավարժի աշխատանքի բովանդակությունը» թեմայով ավարտական աշխատանքի նախապաշտպանության տեսաներկայացումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Գ. Հարությունյան, Հ. Թադևոսյան

**Գ. Հարությունյան -** Ավարտական աշխատանքն ինքնուրույն և ավարտուն աշխատանք է: Գ. Մկրտչյանն ավարտական աշխատանքում առաջադրել է հետազոտության թեմային համապատասխան կիրառական նոր մոտեցումներ: Ավարտական աշխատանքի բովանդակային բաղադրիչները տրամաբանորեն փոխկապակցված են և բացահայտում են ուսումնասիրվող հիմնախնդիրը: Ավարտական աշխատանքի եզրակացություններն արված են ինքնուրույն և ընդհանուր առմամբ համապատասխանում են առաջադրված նպատակին ու խնդիրներին: Գրականության ցանկում ընդգրկված աղբյուրներն արդիական են, ներառված են թեմային անհրաժեշտ աղբյուրներ:

**Հ. Թադևոսյան** – Գ. Մկրտչյանի իրականացրած տեսական և հետազոտական աշխատանքների արդյունքները կարող են արդյունավետ օգտագործել տարածքային մանկավարժահոգեբանական աջակցման կենտրոնում աշխատող սոցիալական մանկավարժները, դրանք կարող են օգտակար լինել սոցիալական մանկավարժություն մասնագիտությամբ ուսանողներին՝ մասնավորապես, մանկավարժահետազոտական պրակտիկաների կազմակերպման գործընթացներում: Ավարտական աշխատանքը կարելի է երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Գոհար Մկրտչյանի «Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների գործունեությունը ՀՀ-ում և սոցիալական մանկավարժի աշխատանքի բովանդակությունը» թեմայով ավարտական աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ԼՍԵՑԻՆ** – Մերրի Ասատրյանի «Մանկավարժական բուհի ուսանողների հանդուրժողականության ձևավորման սոցիալ-մանկավարժական ուղիները» թեմայով ավարտական աշխատանքի նախապաշտպանության տեսաներկայացումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Զ. Ասատրյան, Հ. Թադևոսյան

**Զ. Ասատրյան** – Ներկայացված ավարտական աշխատանքում առկա են հետազոտության թեմային համապատասխան ինքնուրույն կատարված կիրառական նոր մոտեցումներ և առաջադրված են ստեղծագործական լուծումներ: Հետազոտական աշխատանքի ընթացքում կիրառված մեթոդներն արդյունավետ են, մեթոդների տվյալները վերլուծված և ներկայացված են համապատասխան եզրահանգումների տեսքով: Ուսանողը տիրապետում է հետազոտության ընթացքում ստացված տվյալները վերլուծելու և հիմնավորելու կարողությանը: Սակայն ավարտական աշխատանքը կշահեր, եթե հիմնախնդրին վերաբերվող հայալեզու գրականություն ևս ուսումնասիրվեր: Ավարտական աշխատանքի մեջ առկա են տեխնիկական, համակարգչային շարվածքի մի շարք վրիպումներ:

**Հ. Թադևոսյան** – Ավարտական աշխատանքի բովանդակությունն ամբողջությամբ համապատասխանում է առաջադրված նպատակին, խնդիրներին: Այն ավարտուն, ինքնուրույն, տեսական և գործնական կարևոր նշանակություն ունեցող ուսումնական հետազոտություն է և կարելի է ներկայացնել հրապարակային պաշտպանության:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Մերրի Ասատրյանի «Մանկավարժական բուհի ուսանողների հանդուրժողականության ձևավորման սոցիալ-մանկավարժական ուղիները» թեմայով ավարտական աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ԼՍԵՑԻՆ** – Վիկտորյա Հովհաննիսյանի «Սոցիալական մանավարժի դերը զարգացման կենտրոններում» թեմայով ավարտական աշխատանքի նախապաշտպանության տեսաներկայացումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Գ. Աղուզումցյան, Ն. Մարկոսյան

**Գ. Աղուզումցյան** - Ավարտական աշխատանքում հետազոտության արդյունքները հստակ վերլուծված են և հիմնավորված, կատարվել են համապատասխան եզրակացություններ: Ուսանողը դրսևորել է որոշակի ինքնուրույնություն և տեսական պատրաստվածություն: Ուսանողը կարողացել է ապահովել աշխատանքի ամբողջականությունը, օգտագործված գրականության ցանկը արդիական է և առկա են հղումները: Եզրակացությունները համապատասխանում են թեմայի խնդիրներին և հետազոտական աշխատանքի արդյունքներին: Կարծում ենք, աշխատանքը կշահեր, եթե իրականացվեր զրույց զարգացման կենտրոնի երեխաների ծնողների հետ, պարզելու համար, թե ինչ դրական ազդեցություն ունի կենտրոն հաճախելը երեխաների զարգացման գործընթացում: Դրանով էլ ավելի կշեշտադրվեր և ցույց կտրվեր Հայաստանում զարգացման կենտրոնների կարևորությունը և մեծ դերակատարությունը:

**Ն. Մարկոսյան** - Ավարտական աշխատանքի շրջանակներում համապատասխան նյութերի հավաքագրման, տեսական մասի շարադրման և դրա վերլուծության համար Վ.Հովհաննիսյանը ուսումնասիրել է բավականին թվով գրականություն: Կազմել է իր հետազոտությունից առցանց հարցարան՝ նախատեսված զարգացման կենտրոնների համար: Մանրամասն վերլուծել է ստացված տվյալները և առավել պատկերավոր ներկայացրել է տարբեր դիագրամներով:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Վիկտորյա Հովհաննիսյանի «Սոցիալական մանավարժի դերը զարգացման կենտրոններում» թեմայով ավարտական աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ԼՍԵՑԻՆ** – Լուսինե Բարեղամյանի «Ընտանիքի դերը երեխաների սոցիալականացման գործընթացում» թեմայով ավարտական աշխատանքի նախապաշտպանության տեսաներկայացումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Լ. Նազարյան, Ն. Մարկոսյան

**Լ. Նազարյան** - Աշխատանքը իրականացնելիս ուսանողը դրսևորել է բարձր պատրաստակամություն, փորձարարական միջոցների կիրառությամբ մանրամասնորեն

չափել է ստացված արդյունքները, խմբավորել և ստացել լավ նյութ եզրակացությունների կառուցման համար: Իրականացված հետազոտությունը ինքնուրույն է, ինքնատիպ, հավաստի, ինչի մասին վկայում են ներկայացված դիագրամները և նյութի շարադրանքի ինքնատիպ ոճը: Արդյունքում ուսանողը ցուցաբերել է ինքնուրույնության բարձր մակարդակ, որը վառ դրսևորվում է հետազոտական եզրակացություններում: Հատկապես խրախուսելի է, որ ուսանողը մանրամասն ներկայացրել է ընտանիքի դերը անձի սոցիալականացման և համակողմանի դաստիարակության գործում: Կարևորված է ընտանիքի դերը որպես հասարակության առաջնային բջիջ: Կարծում եմ աշխատանքը ավելի կամբողջանա, եթե գրականությունը որոշակիորեն հարստացվի և ավելացվեն հղումները տեքստում: Կարծում եմ կարիք կա կրճատել եզրակացությունները դրանք չափազանց երկար են:

**Ն. Մարկոսյան** - Լ. Բարեղամյանը ավարտական աշխատանքի կատարման ընթացքում ցուցաբերել է հետաքրքրվածություն թեմայի նկատմամբ, ակտիվություն և նախաձեռնողականություն: Ավարտական աշխատանքը տրամաբանական, ավարտուն աշխատանք է և ընդհանուր առմամբ համապատասխանում է ավարտական աշխատանքին ներկայացվող պահանջներին: Կարելի է երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Լուսինե Բարեղամյանի «Ընտանիքի դերը երեխաների սոցիալականացման գործընթացում» թեմայով ավարտական աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ԼՍԵՑԻՆ** – Վիկտորյա Բարեղամյանի «Սոցիալական մանկավարժի կանխարգելիչ աշխատանքները դպրոցում» թեմայով ավարտական աշխատանքի նախապաշտպանության տեսաներկայացումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Ա. Դալլաքյան, Ն. Մարկոսյան

**Ա. Դալլաքյան** - Վ. Բարեղամյանը հետազոտական աշխատանքի ընթացքում կիրառված մեթոդների տվյալները ենթարկել է քանակական և որակական վերլուծության և վերջում

ներկայացրել է համապատասխան եզրահանգումներ: Ուսանողուհին ունի տեսական պատրաստվածության բարձր աստիճան և տիրապետում է հետազոտության ընթացքում ստացված տվյալները գնահատելու, վերլուծելու և հիմնավորելու կարողությանը: Այդ մասին են փաստում նրա կողմից հիմնավորված առաջարկությունները հիմնախնդրի վերաբերյալ:

**Ն. Մարկոսյան** - Ավարտական աշխատանքի նպատակը բխում է աշխատանքի վերնագրից, իսկ խնդիրները բխում են սահմանած նպատակից: Վ. Բարեղամյանը կազմել է իր հետազոտությունից բխող հարցաթերթեր՝ նախատեսված դեռահասների և մանկավարժների համար: Մանրամասն վերլուծել է ստացված տվյալները և ներկայացրել է դրանք դիագրամներով: Ավարտական աշխատանքը ընդհանուր առմամբ համապատասխանում է ավարտական աշխատանքին ներկայացվող պահանջներին:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Վիկտորյա Բարեղամյանի «Սոցիալական մանկավարժի կանխարգելիչ աշխատանքները դպրոցում» թեմայով ավարտական աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ԼՍԵՑԻՆ** – Անի Դանիելյանի «Սոցիալական մանկավարժի դիագնոստիկ գործառույթի իրականացումը տարրական դպրոցում» թեմայով ավարտական աշխատանքի նախապաշտպանության տեսաներկայացումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Ն. Մարկոսյան, Գ. Հարությունյան

**Ն. Մարկոսյան** - Հեղինակը կատարել է հետազոտություն տարրական դպրոցում սոցիալ-մանկավարժական դիագնոստիկայի իրականացման առանձնահատկությունները բացահայտելու, սոցիալական մանկավարժի դիագնոստիկ գործառույթի իրականացման առկա վիճակը պարզելու և իրականացման արդյունավետության պայմաններ առաջադրելու նպատակով: Աշխատանքում ներկայացված են հետազոտության քանակական և որակական տվյալները, կատարված են համապատասխան վերլուծություններ և եզրահանգումներ: Օգտագործված գրականությունը՝ թվով 21, ժամանակակից է: Ավարտական աշխատանքը ամբողջական և տրամաբանական աշխատանք է:

**Գ. Հարությունյան** - Ա. Դանիելյանը ցուցաբերել է ինքնուրույնություն, ունի տեսական պատրաստվածության բարձր աստիճան և տիրապետում է հետազոտության ընթացքում ստացված տվյալները վերլուծելու և հիմնավորելու կարողությանը: Ավարտական աշխատանքի կատարման ընթացքում Ա. Դանիելյանը դրսևորել է նախաձեռնողականություն, բարեխղճորեն կատարել է բոլոր հանձնարարականները: Ներկայացված ավարտական աշխատանքի ոճը հստակ է և պարզ: Այն ավարտուն, տրամաբանական աշխատանք է և համապատասխանում է ավարտական աշխատանքին ներկայացվող պահանջներին: Առաջարկում եմ երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Անի Դանիելյանի «Սոցիալական մանկավարժի դիագնոստիկ գործառույթի իրականացումը տարրական դպրոցում» թեմայով ավարտական աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ԼՍԵՑԻՆ** – Արևիկ Սահակյանի «Նախադպրոցականի՝ դպրոցին հարմարվելու գործընթացը, որպես սոցիալ-մանկավարժական հիմնախնդիր» թեմայով ավարտական աշխատանքի նախապաշտպանության տեսաներկայացումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Զ. Ասատրյան, Գ. Հարությունյան

**Զ. Ասատրյան** - Աշխատանքի շարադրանքը համապատասխանում է նմանատիպ աշխատանքների ոճին ու ներկայացվող պահանջներին: Ավարտական աշխատանքում հիմնավորված է թեմայի արդիականությունը, սահմանված են հետազոտության նպատակը և խնդիրները, ավարտական աշխատանքն ունի կիրառական նշանակություն: Սակայն ավարտական աշխատանքի մեջ առկա են տեխնիկական, համակարգչային շարվածքի վրիպումներ:

**Գ. Հարությունյան** - Ավարտական աշխատանքի բովանդակությունը, գլուխներն ու ենթագլուխները լրիվ համապատասխանում են թեմային: Աշխատանքում ձևակերպած հիմնախնդիրը, հետազոտության սահմանած նպատակը և առաջադրված խնդիրները տրամաբանորեն փոխկապակցված են: Ավարտական աշխատանքի կատարման ընթացքում Ա.Սահակյանը բարեխղճորեն կատարել է բոլոր հանձնարարականները, ցուցաբերել է նախաձեռնողականություն և պատասխանատվություն:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Արևիկ Սահակյանի «Նախադպրոցականի՝ դպրոցին հարմարվելու գործընթացը, որպես սոցիալ-մանկավարժական հիմնախնդիր» թեմայով ավարտական աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ԼՍԵՑԻՆ** – Աննա Գևորգյանի «Ընտանեկան բռնության ենթարկված երեխաների սոցիալ-մանկավարժական աջակցման ուղիները» թեմայով ավարտական աշխատանքի նախապաշտպանության տեսաներկայացումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Ս. Ջանիկյան, Գ. Հարությունյան

**Ս. Ջանիկյան** - Հետազոտության հավաստիությունը և օբյեկտիվությունը հիմնավորված է: Ուսանողը անցկացրել է սոցհարցումներ աշակերտների, ծնողների և սոցիալական մանկավարժների շրջանում, որոնց արդյունքները ամփոփված և ներկայացված են տրամագրերում: Հետազոտական աշխատանքում ուսանողը ցուցաբերել է ինքնուրույնության բարձր մակարդակ, առկա են սեփական դիրքորոշումները, տեսանկյունները: Ավարտական աշխատանքը ավարտուն է, եզրակացությունները հիմնավորված են և բխում են առաջադրված խնդիրներից, պահպանված են աշխատանքի կառուցվածքին, բովանդակությանը և ծավալին ներկայացվող պահանջները: Օգտագործված գրականության ցանկն արտացոլված է աշխատանքում:

**Գ. Հարությունյան** - Ա.Գևորգյանը ավարտական աշխատանքի կատարման ընթացքում կատարել է բոլոր հանձնարարականները, եղել է պարտաճանաչ և աշխատասեր: Ավարտական աշխատանքի արդյունքներն ունեն կիրառելիության հնարավորություն, քանի որ աշխատանքում առաջադրված են ընտանեկան բռնության ենթարկված երեխաների հետ տարվող սոցիալ-մանկավարժական աջակցման ուղիները: Ավարտական աշխատանքն առաջարկում եմ ներկայացնել հրապարակային պաշտպանության:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Աննա Գևորգյանի «Ընտանեկան բռնության ենթարկված երեխաների սոցիալ-մանկավարժական աջակցման ուղիները» թեմայով ավարտական աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ԼՍԵՑԻՆ** – Հասմիկ Մկրտչյանի «ՀՀ-ում բազմազավակ ընտանիքների արդի հիմնախնդիրներն ու դրանց լուծման սոցիալ-մանկավարժական ուղիները» թեմայով ավարտական աշխատանքի նախապաշտպանության տեսաներկայացումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Ա. Հովհաննիսյան, Գ. Հարությունյան

**Ա. Հովհաննիսյան** - Ներկայացված ավարտական աշխատանքն աչքի է ընկնում տեսական և գործնական վերլուծությունների համապատասխանությամբ: Ուսանողին հաջողվել է հենվելով տեսական վերլուծության արդյունքերի վրա՝ կատարել համապատասխան եզրակացություններ և մշակել գործնական հետազոտության հիմնական ուղղությունները: Ներկայացված արդյունքները հիմնականում կուտակվել են հետազոտողի կողմից իրականացված մանկավարժական դիտարկումների, հաստատող փորձերի արդյունքում, որոնց հիման վրա մշակվել են որակական վերլուծության հիմնական մոտեցումները:

**Գ. Հարությունյան** - Հ. Մկրտչյանն ավարտական աշխատանքի կատարման ընթացքում եղել է պարտաճանաչ, ցուցաբերել է պատասխանատվություն և բավարար ինքնուրույնություն: Նա ունի ինքնուրույն ստեղծագործական լուծումներ առաջադրելու հմտություններ: Համապատասխան ուղղորդման արդյունքում իրականացրել է հետազոտական աշխատանք, քանակական ու որակական տվյալների վերլուծություն, կատարել է համապատասխան եզրահանգումներ: Ավարտական աշխատանքն ավարտուն, ինքնուրույն, գրագետ շարադրված աշխատանք է և համապատասխանում է ավարտական աշխատանքին ներկայացվող պահանջներին:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Հասմիկ Մկրտչյանի «ՀՀ-ում բազմազավակ ընտանիքների արդի հիմնախնդիրներն ու դրանց լուծման սոցիալ-մանկավարժական ուղիները» թեմայով ավարտական աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ԼՍԵՑԻՆ** – Արևհատ Խաչատրյանի «Ավագ դպրոցականների լիդերային որակների զարգացման սոցիալ-մանկավարժական ուղիները» թեմայով ավարտական աշխատանքի նախապաշտպանության տեսաներկայացումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Լ. Նազարյան, Հ. Թադևոսյան

**Լ. Նազարյան** - Թեմայի հիմնախնդիրը բխում է աշխատանքի էությունից, որից դուրս է բերված աշխատանքի նպատակը: Աշխատանքի նպատակը ձևակերպված է հստակ, առկա է տրամաբանական շաղկապվածություն նպատակի և դրանից բխող խնդիրների միջև: Տեսանելի կերպով սահմանված է աշխատանքի գործնական նշանակությունը, որը ուսումնասիրության արդիականության գործնական արտացոլումն է: Սակայն աշխատանքում կան տառատեսակների տարբերություններ, ինչպես նաև դիագրամները համարակալված չեն, կարծում եմ անհրաժեշտ է դրանք շտկել: Ներկայացված ավարտական աշխատանքը թույլատրելի է պաշտպանության և արժանի է գերազանց գնահատականի:

**Հ. Թադևոսյան** - Իրականացրած տեսական և հետազոտական աշխատանքների արդյունքները կարող են օգտագործվել ավագ դպրոցում աշխատող մանկավարժ մասնագետների, ուսուցիչների կողմից ավագ դպրոցականների անձնային որակների զարգացմանն ուղղված աշխատանքներում: Մեր աշխատանքի արդյունքները կարող են օգտագործվել նաև ավագ դպրոցներում սոցիալական մանկավարժություն մասնագիտությամբ սովորող ուսանողների ուսումնամեթոդական պրակտիկաների ընթացքում: Ավարտական աշխատանքը ավարտուն, ինքնուրույն, տեսական և գործնական կարևոր նշանակություն ունեցող ուսումնական հետազոտություն է և կարելի է ներկայացնել հրապարակային պաշտպանության:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Արևհատ Խաչատրյանի «Ավագ դպրոցականների լիդերային որակների զարգացման սոցիալ-մանկավարժական ուղիները» թեմայով ավարտական աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ԼՍԵՑԻՆ** – Անի Հովհաննիսյանի ««ՖԲ» սոցիալական ցանցի ազդեցությունը ավագ դպրոցականների սոցիալականացման գործընթացի վրա» թեմայով ավարտական աշխատանքի նախապաշտպանության տեսաներկայացումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Ա. Մանուկյան, Հ. Թադևոսյան

**Ա. Մանուկյան** – Ներկայացված ավարտական աշխատանքի թեման համապատասխանում է ՄԿԾ-ին և ՈԱՇ-ի 6-րդ մակարդակին, հիմնախնդիրները ձևակերպված են գրագետ, հետազոտության սահմանած նպատակը ժամանակի հրամայական պահանջ է հանդիսանում, իսկ խնդիրները բխեցվել են սահմանված նպատակից, արդիականությունը, տեսական և կիրառական նշանակությունը լիովին հիմնավորված են: Ավարտական աշխատանքը ամբողջական է և արժանի է հրապարակային պաշտպանության:

**Հ. Թադևոսյան** – Ավարտական աշխատանքի բովանդակությունն ամբողջությամբ համապատասխանում է առաջադրված նպատակին, խնդիրներին: Ուսանողն ինքնուրույն է կատարել նյութերի հավաքագրման աշխատանքները, մշակել, շարադրել, վերլուծել, դասակարգել է դրանք, ընտրել հետազոտության նպատակից և խնդիրներից բխող նպատակահարմար մեթոդներ, մեթոդիկաներ: Ավարտական աշխատանքը ավարտուն, ինքնուրույն, տեսական և գործնական կարևոր նշանակություն ունեցող ուսումնական հետազոտություն է և կարելի է ներկայացնել հրապարակային պաշտպանության:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Անի Հովհաննիսյանի ««ՖԲ» սոցիալական ցանցի ազդեցությունը ավագ դպրոցականների սոցիալականացման գործընթացի վրա» թեմայով ավարտական աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝** **Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ**

**ՔԱՐՏՈՒՂԱՐ՝** **Է. ՅԱՐԱՋՅԱՆ**

**04.05.2020թ.**

Արձանագրություն Նո. 17

2019-2020 ՈՒՍ.ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՄԱՅԻՍԻ 5-Ի ՆԻՍՏԻ

Օրակարգ

2. 2019-2020 ուս. տարում ԿՀՍ և ՍԿ ֆակուլտետների առկա բակալավր 4-րդ և հեռակա բակալավր 5-րդ կուրսերի Մանկավարժության ամբիոնի գծով ավարտական աշխատանքների նախապաշտպանությունների արդյունքների մասին:

**ԼՍԵՑԻՆ –** Սոնա Պետրոսյանի «Բուհական միջավայրին 1-ին կուրսեցիների հարմարման մանկավարժական պայմանները» թեմայով ավարտական աշխատանքի նախապաշտպանության տեսաներկայացումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Մ. Ասատրյան, Գ. Աղուզումցյան

**Մ. Ասատրյան** - Հետազոտության ընթացքում կիրառված մեթոդների տվյալները վերլուծված և հիմնավորված են համապատասխան եզրահանգումների տեսքով, որոնք արտացոլում են թեմայի հիմնախնդիրը: Ուսանողը դրսևորել է հետազոտության ընթացքում ստացված տվյալները վերլուծելու և հիմնավորելու կարողություն: Ավարտական աշխատանքը ամբողջական, ավարտուն աշխատանք է:

**Գ. Աղուզումցյան** - Ավարտական աշխատանքի տեսական մասի կատարման և հետազոտական աշխատանքի վերլուծության ընթացքում ուսանողը դրսևորել է բավարար չափով ինքնուրույնություն և ստեղծագործական մոտեցում: Ուսումնասիրություններ կատարելու ընթացքում հանդես է բերել ընդհանրացնելու, վերլուծելու և հետևություններ անելու կարողություններ և հմտություններ: Առաջարկում եմ աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Սոնա Պետրոսյանի «Բուհական միջավայրին 1-ին կուրսեցիների հարմարման մանկավարժական պայմանները» թեմայով ավարտական աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ԼՍԵՑԻՆ –** Դարիկո Ալոյանի «Սոցիալական մանկավարժի գործառույթները բազմազավակ ընտանիքների հետ աշխատելու համատեքստում» թեմայով ավարտական աշխատանքի նախապաշտպանության տեսաներկայացումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Ա. Դալլաքյան, Գ. Աղուզումցյան

**Ա. Դալլաքյան** - Ավարտական աշխատանքն ինքնուրույն և ավարտուն աշխատանք է: Դրա շարադրանքը և բովանդակությունը համապատասխանում է այդպիսի աշխատանքներին ներկայացվող չափանիշներին: Գրականության ցանկում ընդգրկված աղբյուրներն արդիական են, ներառված են թեմային անհրաժեշտ աղբյուրներ: Ավարտական աշխատանքի եզրակացություններն արված են ինքնուրույն և ընդհանուր առմամբ համապատասխանում են առաջադրված նպատակին ու խնդիրներին:

**Գ. Աղուզումցյան** – Աշխատանքը կատարելիս Դարիկո Ալոյանը կարողացել է ինքնուրույն օգտվել մասնագիտական գրականությունից, կատարել տեսագործնական ուսումնասիրություններ, ցուցաբերել է հետազոտության արդյունքները ընդհանրացնելու և վերլուծելու հմտություններ: Առաջարկում եմ աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Դարիկո Ալոյանի «Սոցիալական մանկավարժի գործառույթները բազմազավակ ընտանիքների հետ աշխատելու համատեքստում» թեմայով ավարտական աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ԼՍԵՑԻՆ –** Ֆենյա Վարդերեսյանի «Երեխաների սոցիալականացման հիմախնդիրը նախադպրոցական հաստատությունում» թեմայով ավարտական աշխատանքի նախապաշտպանության տեսաներկայացումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Մ. Ասատրյան, Գ. Եգանյան

**Մ. Ասատրյան** - Ավարտական աշխատանքում հիմնավորված է թեմայի արդիականությունը, առաջադրված խնդիրները ձևակերպված են հստակ և համապատասխանում են ուսումնասիրության նպատակին, ավարտական աշխատանքն ունի կիրառական նշանակություն: Աշխատանքում առկա են հետազոտության թեմային

համապատասխան՝ գործնականում ինքնուրույն իրականացրած նորարարական մոտեցումներ։

Սակայն ավարտական աշխատանքը զերծ չէ որոշ թերություններից։ Գրականության ցանկում կան մի քանի աղբյուրներ, որոնց հղումները արտացոլված չեն աշխատանքի բովանդակության մեջ։ Աշխատանքում կան լեզվառճական, շարահյուսական բնույթի անհարթություններ։

**Գ. Եգանյան** - Ավարտական աշխատանքի բովանդակությունը, գլուխներն ու ենթագլուխները լրիվ համապատասխանում են թեմային։ Աշխատանքը ամբողջական է։ Ավարտական աշխատանքի կատարման ընթացքում Ֆենյա Վարդերեսյանը դրսևորել է նախաձեռնողականություն, բարեխղճություն և պատասխանատվություն։ Աշխատանքն առաջարկում եմ ներկայացնել հրապարակային պաշտպանության։

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Ֆենյա Վարդերեսյանի «Երեխաների սոցիալականացման հիմախնդիրը նախադպրոցական հաստատությունում» թեմայով ավարտական աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության՝ թերությունները շտկելու պայմանով։

**ԼՍԵՑԻՆ –** Սիրանուշ Թորգոմյանի «Սոցիալական մանկավարժի աշխատանքը տարրական դպրոցում» թեմայով ավարտական աշխատանքի նախապաշտպանության տեսաներկայացումը։

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Գ. Հարությունյան, Գ. Եգանյան

**Գ. Հարությունյան** - Հետազոտական աշխատանքի ընթացքում կիրառված մեթոդների տվյալները վերլուծված և ներկայացված են համապատասխան եզրահանգումների տեսքով։ Ավարտական աշխատանքի ընթացքում կիրառված մեթոդներն արդյունավետ են և համապատասխանում են առաջ քաշված հիմնախնդրին։ Գրականության ցանկում ընդգրկված աղբյուրներն արդիական են, ներառված են թեմային անհրաժեշտ աղբյուրներ։ Ավարտական աշխատանքի եզրակացություններն արված են ինքնուրույն և ընդհանուր առմամբ համապատասխանում են առաջադրված նպատակին ու խնդիրներին։

Սակայն ավարտական աշխատանքը կշահեր, եթե հետազոտական աշխատանքները ներկայացվեին ըստ հետազոտության փուլերի։ Ավարտական աշխատանքում առկա են տեխնիկական, համակարգչային շարվածքի վրիպումներ։

**Գ. Եգանյան** - Ս. Թորգոմյանը աշխատանքը կատարելիս դրսևորել է ինքնուրույնություն, օգտվել մասնագիտական գրականությունից, կատարել համապատասխան վերլուծահամադրական աշխատանքներ, արդյունքների ընդհանրացում և եզրահանգումներ։ Աշխատանքը համապատասխանում է ավարտական աշխատանքներին ներկայացվող պահանջներին. տեքստային և գրաֆիկական ձևավորումը համապատասխանում է պահանջվող չափանիշներին։ Առաջարկում եմ աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության։

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Սիրանուշ Թորգոմյանի «Սոցիալական մանկավարժի աշխատանքը տարրական դպրոցում» թեմայով ավարտական աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության։

**ԼՍԵՑԻՆ –** Էմմա Վարդանյանի «Դպրոցի և ընտանիքի համագործակցության ձևերը տարրական դպրոցում և դրանց դերը երեխայի դաստիարակության գործում» թեմայով ավարտական աշխատանքի նախապաշտպանության տեսաներկայացումը։

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ –** Մ. Ասատրյան, Ի. Բաբայան

**Մ. Ասատրյան** – Ներկայացված աշխատանքի շարադրանքը համապատասխանում է նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին։ Ավարտական աշխատանքում հիմնավորված է թեմայի արդիականությունը, առաջադրված խնդիրները ձևակերպված են հստակ և համապատասխանում են ուսումնասիրության նպատակին, ավարտական աշխատանքն ունի կիրառական նշանակություն։ Ավարտական աշխատանքը ամբողջական, ավարտուն աշխատանք է։ Սակայն գրականության ցանկի երկու աղբյուրների հղումները արտացոլված չեն աշխատանքի բովանդակության մեջ։ Աշխատանքը ավելի շահեկան կլիներ, եթե հավելվածում ներառված դպրոց-ընտանիք համագործակցության միջոցառումներից որևէ մեկը ուսանողը իրականացներ և վերլուծեր։

**Ի. Բաբայան** - Էմմա Վարդանյանը ավարտական աշխատանքը կատարելու ընթացքում հանդես է եկել որպես բարեխիղճ, աշխատասեր, ստեղծագործական բավարար ընդունակություններով օժտված ուսանողուհի և ցուցաբերել է պատշաճ պատասխանատվություն: Ուսումնասիրելով և վերլուծելով կրտսեր դպրոցականի դաստիարակության գործընթացում դպրոց-ընտանիք համագործակցության ձևերը, Էմմա Վարդանյանը մշակել է միջոցառումների պլան, որի կիրառումը կնպաստի այդ համագործակցության արդյունավետության բարձրացմանը: Առաջարկում եմ աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Էմմա Վարդանյանի «Դպրոցի և ընտանիքի համագործակցության ձևերը տարրական դպրոցում և դրանց դերը երեխայի դաստիարակության գործում» թեմայով ավարտական աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ԼՍԵՑԻՆ –** Լիանա Մարգարյանի «Սոցիալական մանկավարժի աշխատանքը ավագ դպրոցականների մասնագիտական կողմնորոշման գործընթացում» թեմայով ավարտական աշխատանքի նախապաշտպանության տեսաներկայացումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Լ. Նազարյան, Ա. Հովհաննիսյան

**Լ. Նազարյան** - Աշխատանքի բովանդակությունը, գլուխներն ու ենթագլուխները համապատասխանում են թեմային: Թեմայի հիմնախնդիրը բխում է աշխատանքի էությունից, որից դուրս է բերված աշխատանքի նպատակը: Աշխատանքի նպատակը ձևակերպված է հստակ, առկա է տրամաբանական շաղկապվածություն նպատակի և դրանցի բխող խնդիրների միջև: Տեսանելի կերպով սահմանված է աշխատանքի գործնական նշանակությունը, որը ուսումնասիրության արդիականության գործնական արտացոլումն է: Իրականացված աշխատանքը համապատասխանում է ՄԿԾ-ին և ՈԱՇ-ի 6-րդ մակարդակին: Հատկապես խրախուսելի է, որ ուսանողը մանրամասն ներկայացրել է մասնագիտական կողմնորոշման կարևորությունը հանրակրթության բնագավառում: Հատուկ արժևորված է սոցիալական մանկավարժի աշխատանքը մասնագիտական կողմնորոշման գործընթացում:

**Ա. Հովհաննիսյան** - Լիանա Մարգարյանին հաջողվել է ինքնուրույն օգտվել մասնագիտական գրականությունից, կատարել համապատասխան վերլուծություններ, կատարել տեսագործնական ուսումնասիրությունների արդյունքում հավաքագրված արդյունքների ընդհանրացում և եզրահանգումներ: Աշխատանքն ավարտուն, ինքնուրույն աշխատանք է, այն համապատասխանում է ավարտական աշխատանքին ներկայացվող պահանջներին: Առաջարկում եմ երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Լիանա Մարգարյանի «Սոցիալական մանկավարժի աշխատանքը ավագ դպրոցականների մասնագիտական կողմնորոշման գործընթացում» թեմայով ավարտական աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ԼՍԵՑԻՆ –** Աննա Սևանյանի «Սոցիալական մանկավարժի աշխատանքը Աջափնյակ համայնքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոնում» թեմայով ավարտական աշխատանքի նախապաշտպանության տեսաներկայացումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Ն. Մարկոսյան, Ա. Հովհաննիսյան

**Ն. Մարկոսյան** - Ավարտական աշխատանքը ամբողջական և տրամաբանական աշխատանք է: Օգտագործված գրականությունը՝ թվով 9, ժամանակակից է: Եզրակացությունները համապատասխանում են առաջադրված խնդիրներին և հետազոտական աշխատանքի արդյունքներին: Սակայն աշխատանքը առավել կշահեր, եթե հեղինակը ավելի շատ գրականություն վերլուծեր:

**Ա. Հովհաննիսյան** - Աննա Սևանյանը դրսևորվել է որպես ինքնուրույն հետազոտող, ինքնուրույն է փնտրել համապատասխան նյութեր, կատարել վերլուծություններ և ներկայացնել հետաքրքիր առաջարկություններ, մանկավարժական մոտեցումներ: Առաջարկում եմ աշխատանքը ներկայացնել հրապարակային պաշտպանության:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Աննա Սևանյանի «Սոցիալական մանկավարժի աշխատանքը Աջափնյակ համայնքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոնում» թեմայով ավարտական աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ԼՍԵՑԻՆ** – Անի Քարամյանի «Ուսուցչի օգնականի աշխատանքը ներառական կրթության պայմաններում» թեմայով ավարտական աշխատանքի նախապաշտպանության տեսաներկայացումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Ի. Բաբայան, Ա. Հովհաննիսյան

**Ի. Բաբայան** – Ա. Քարամյանը իրականացրել է խորը և ծավալուն հետազոտական աշխատանք, կատարել է ստացված արդյունքների վերլուծություն, գնահատում և հիմնավորել է այդ ամենը համապատասխան եզրահանգումներով: Սակայն աշխատանքի որոշ հատվածներում կան անճշտություններ, տեսական մասը կարելի էր ավելի համապարփակ ներկայացնել:

**Ա. Հովհաննիսյան** - Աշխատանքի բովանդակությունը լիովին համապատասխանում է նպատակին, առաջադրված խնդիրներին: Անի Քարամյանի աշխատանքը կարող է օգտակար լինել հանրակրթական դպրոցի ուսուցիչներին և սոցիալական մանկավարժների համար: Անի Քարամյանի կողմից առաջադրված ուսուցչի օգնականի աշխատանքի նոր մոդելը կարող է նպաստել հանրակրթական դպրոցներում ուսուցչի օգնականի աշխատանքի արդյունավետությանը: Առաջարկում եմ աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Անի Քարամյանի «Ուսուցչի օգնականի աշխատանքը ներառական կրթության պայմաններում» թեմայով ավարտական աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ԼՍԵՑԻՆ** – Արևիկ Մկրտչյանի «Սոցիալական մանկավարժի աշխատանքը դպրոց-ընտանիք համատեքստում» թեմայով ավարտական աշխատանքի նախապաշտպանության տեսաներկայացումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Ի. Բաբայան, Ա. Հովհաննիսյան

**Ի. Բաբայան** - Ուսանողը աշխատանքը կատարելիս ցուցաբերել է ինքնուրույն, գործնական տիրույթներում որոշակի նորարարական մոտեցումներ, ստեղծագործական լուծումներ առաջադրելու հմտություններ, որոնք երևում են հետազոտական աշխատանքում: Սակայն գրականության ցանկում կան աղբյուրներ, որոնք հղում չունեն, առաջարկում եմ դրանք ավելացնել: Ներկայացված ավարտական աշխատանքը

ամբողջական է և համապատասխանում է ավարտական աշխատանքի կատարմանը ներկայացվող պահանջներին:

**Ա. Հովհաննիսյան** - Աշխատանքի բովանդակությունը լիովին համապատասխանում է նպատակին, առաջադրված խնդիրներին: Ուսանողը աշխատանքի ողջ ընթացքում ցուցաբերել է պատասխանատու և բարեխիղճ մոտեցում: Ավարտական աշխատանքը ընդհանուր առմամբ համապատասխանում է նմանատիպ աշխատանքին ներկայացվող պահանջներին: Առաջարկում եմ աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ՈՐՈՇԵՑԻՆ -** Արևիկ Մկրտչյանի «Սոցիալական մանկավարժի աշխատանքը դպրոց-ընտանիք համատեքստում» թեմայով ավարտական աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ԼՍԵՑԻՆ –** Աննա Առաքելյանի «Սոցիալական մանկավարժի աշխատանքը Օհանավանի դպրոցի դժվար դաստիարակվող դեռահասների շրջանում» թեմայով ավարտական աշխատանքի նախապաշտպանության տեսաներկայացումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ –** Ն. Մարկոսյան, Ա. Հովհաննիսյան

**Ն. Մարկոսյան** - Հեղինակը կատարել է հետազոտություն Օհանավանի դպրոցի դժվար դաստիարակվող դեռահասների շրջանում՝ սոցիալ-մանկավարժական աշխատանքները բացահայտելու նպատակով: Աշխատանքում ներկայացված են հետազոտության քանակական և որակական տվյալները, կատարված են համապատասխան վերլուծություններ և եզրահանգումներ: Ավարտական աշխատանքը ամբողջական և տրամաբանական աշխատանք է: Սակայն այն շատ ծավալուն է: Այն առավել կշահեր, եթե տեսական հատվածը փոքր-ինչ բեռնաթափվեր:

**Ա. Հովհաննիսյան** – Ներկայացված ավարտական աշխատանքը կարող է օգտակար լինել ծնողներին, սոցիալական մանկավարժներին, նաև ապահովել դպրոց-ծնող-սոցիալական մանկավարժ համագործակցությունը: Աննա Առաքելյանի կողմից առաջադրված սոցիալական մանկավարժի աշխատանքի ձևերը կարող են նպաստել

դժվար դաստիարակվող դեռահասների հետ սոցիալ-մանկավարժական գործունեության արդյունավետությանը: Աշխատանքը կատարելիս ուսանողուհին աչքի է ընկել բարեխղճությամբ, աշխատասիրությամբ: Առաջարկում եմ աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Աննա Առաքելյանի «Սոցիալական մանկավարժի աշխատանքը Օհանավանի դպրոցի դժվար դաստիարակվող դեռահասների շրջանում» թեմայով ավարտական աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ԼՍԵՑԻՆ –** Մարիամ Մարկոսյանի «Սոցիալական մանկավարժի աշխատանքի առանձնահատկությունները օժտված երեխաների շրջանում» թեմայով ավարտական աշխատանքի նախապաշտպանության տեսաներկայացումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Ն. Մարկոսյան, Ա. Հովհաննիսյան

**Ն. Մարկոսյան** - Ավարտական աշխատանքը ամբողջական և տրամաբանական աշխատանք է: Օգտագործված գրականությունը՝ թվով 23, ժամանակակից է, որից 20-ը գրքեր են, իսկ 3-ը էլ. հոդումներ: Եզրակացությունները համապատասխանում են առաջադրված խնդիրներին և հետազոտական աշխատանքի արդյունքներին: Աշխատանքը առավել կշահեր, եթե աշխատանքում ներկայացված մոդելը ընդգրկեր սոցիալական մանկավարժի՝ օժտված երեխաների հետ աշխատանքի բոլոր ասպեկտները:

**Ա. Հովհաննիսյան** - Մարիամ Մարկոսյանի կողմից առաջադրված սոցիալական մանկավարժի աշխատանքի նոր մոդելը կարող է նպաստել օժտված երեխաների հոգեբանամանկավարժական աջակցությանը: Աշխատանքի տեքստային, գրաֆիկական, ցուցադրական մասի, նկարազարդման, համակարգչային և տեղեկատվական նյութի ձևավորումն ընդհանուր առմամբ համապատասխանում է ավարտական աշխատանքի կատարման պահանջներին: Առաջարկում եմ աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ՈՐՈՇԵՑԻՆ -** Մարիամ Մարկոսյանի «Սոցիալական մանկավարժի աշխատանքի առանձնահատկությունները օժտված երեխաների շրջանում» թեմայով ավարտական աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ԼՍԵՑԻՆ –** Մանե Վարդանյանի «Սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացման մեթոդները, միջոցները և տեխնոլոգիաները տարրական դասարաններում» թեմայով ավարտական աշխատանքի նախապաշտպանության տեսաներկայացումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Ս. Ջանիկյան, Լ. Ասատրյան

**Ս. Ջանիկյան** - Աշխատանքում դիտարկվել են կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման մեթոդները, տեխնոլոգիաներն ու միջոցները, և ուսանողի կողմից հիմնավորված են դրանց արդյունավետությունը ուսուցման գործընթացում: ՈՒսանողն իր մշակած դասանմուշների օրինակով ցույց է տվել տարրական դպրոցում ուսումնասիրվող առարկաների դերը սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացման ու ձևավորման գործում: Ավարտական աշխատանքը ավարտուն է, եզրակացությունները հիմնավորված են և բխում են առաջադրված խնդիրներից:

**Լ. Ասատրյան** - Հետազոտությունը կատարելիս ուսանողը դրսևորել է ինքնուրույնության և հետազոտական աշխատանք կատարելու բարձր ունակություններ, նյութը փնտրելու, ընդհանրացնելու, վերլուծելու և հետևություն կատարելու հմտություններ և կարողություններ: Ավարտական աշխատանքը համապատասխանում է բոլոր պահանջվող չափանիշներին և երաշխավորվում է պաշտպանության:

**ՈՐՈՇԵՑԻՆ -** Մանե Վարդանյանի «Սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացման մեթոդները, միջոցները և տեխնոլոգիաները տարրական դասարաններում» թեմայով ավարտական աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ԼՍԵՑԻՆ –** Գայանե Համբարձումյանի «Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը տարրական դպրոցում որպես դասի արդյունավետության բարձրացման

միջոց» թեմայով ավարտական աշխատանքի նախապաշտպանության տեսաներկայացումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ –** Ա. Մանուկյան, Լ. Ասատրյան

**Ա. Մանուկյան** – Ավարտական աշխատանքի հիմնական առավելությունները պայմանավորված են ընտրված հիմնախնդրի, սահմանված նպատակի և առաջադրված խնդիրների տրամաբանական կապով և առաջարկված ստեղծագործական լուծումներով, հետազոտական աշխատանքի արդյունավետությամբ, դասատեսակների և դրանցում կիրառվող տեխնոլոգիաների բազմազանությամբ: Աշխատանքը ամբողջական և ավարտուն է, սակայն ուսանողը չկարողացավ պատշաճ ներկայացնել այն: Ունեմ մեկ դիտարկում, կարծում եմ եզրակացությունները շատ երկար են և պարունակում են կետեր, որոնք առաջադրված խնդիրների հետ կապ չունեն և կարիք չկա դրանք ընդգրկել եզրակացություններում:

**Լ. Ասատրյան** – Համաձայն եմ դիտարկման հետ, եզրակացությունները իրոք խմբագրման կարիք ունեն:

**Ա. Թոփուզյան** – Ներկայացված ավարտական աշխտանքը իրոք հաջողված և ամբողջական է, սակայն ուսանողը չի կարողանում ներկայացնել այն: Ուստի առաջարկում եմ տալ նրան հնարավորություն բարելավել տեսաներկայացումը և բանավոր խոսքը և մասնակցել կրկնակի նախապաշտպանության:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Հանձնարարել Գայանե Համբարձումյանին շտկել բոլոր թերությունները և բացթողումները և ներկայացնել աշխատանքը 15.05.2020թ.-ին՝ կրկնակի նախապաշտպանության ընթացքում:

**ԼՍԵՑԻՆ –** Արփի Մխիթարյանի «Կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման մեթոդներն ու միջոցները» թեմայով ավարտական աշխատանքի նախապաշտպանության տեսաներկայացումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Մ. Ասատրյան, Լ. Ասատրյան

**Մ. Ասատրյան** - Աշխատանքի շարադրանքը համապատասխանում է նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին: Ավարտական աշխատանքում

հիմնավորված է թեմայի արդիականությունը, առաջադրված խնդիրները ձևակերպված են հստակ և համապատասխանում են ուսումնասիրության նպատակին, ավարտական աշխատանքն ունի կիրառական նշանակություն:_Սակայն կարծում եմ ավարտական աշխատանքի տեսական մասի առաջին գլուխը վերլուծականներով ծանրաբեռնված է, անհրաժեշտ է կրճատել: Գրականության ցանկում կան մի քանի գրական աղբյուրներ, որոնք տեղ չեն գտել աշխատանքի բովանդակության մեջ:

**Լ. Ասատրյան** – Ավարտական աշխատանքի կատարման ժամանակ ուսանողը ցուցաբերել է բարեխղճություն, աշխատասիրություն, պատասխանատվություն, նպատակասլացություն, մանկավարժական, մեթոդական գերազանց գիտելիքներ: Ավարտական աշխատանքը համապատասխանում է բոլոր պահանջվող չափանիշներին և երաշխավորվում է պաշտպանության:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Արփի Մխիթարյանի «Կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման մեթոդներն ու միջոցները» թեմայով ավարտական աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ԼՍԵՑԻՆ** - Անի Մելիքսեթյանի «Խաղի դերը կրտսեր դպրոցականների միջանձնային հարաբերությունների ձևավորման գործում» թեմայով ավարտական աշխատանքի նախապաշտպանության տեսաներկայացումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Զ. Ասատրյան, Լ. Ասատրյան

**Զ. Ասատրյան** - Ավարտական աշխատանքում առկա են հետազոտության թեմային համապատասխան ինքնուրույն կատարված կիրառական նոր մոտեցումներ և առաջադրված են ստեղծագործական լուծումներ: Ինչպես նաև աշխատանքում առկա են ստեղծագործական խաղ-դասերի օրինակներ: Սակայն ավարտական աշխատանքը զերծ չէ որոշ թերություններից ու բացթողումներից.

1. Ավարտական աշխատանքի տեսական մասը շատ ծանրաբեռնված է, անհրաժեշտ է այն բեռնաթափել:
2. Օգտագործված գրականության ցանկում տեղ են գտել թեմային բացարձակապես չվերաբերող գրական աղբյուրներ:

3. Ավարտական աշխատանքի մեջ առկա են տեխնիկական, համակարգչային շարվածքի վրիպումներ:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հանձնարարել Անի Մելիքսեթյանին շտկել բոլոր թերությունները և բացթողումները և ներկայացնել աշխատանքը 15.05.2020թ.-ին՝ կրկնակի նախապաշտպանության ընթացքում:

**ԼՍԵՑԻՆ** – Աննա Մելքոնյանի «Էկոլոգիական դաստիարակությունը տարրական դպրոցում» թեմայով ավարտական աշխատանքի նախապաշտպանության տեսաներկայացումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Ն. Կարապետյան, Լ. Ասատրյան

**Ն. Կարապետյան** - Ավարտական աշխատանքը ավարտուն է, եզրակացությունները ձևակերպված են, պահպանված են աշխատանքին ներկայացվող պահանջները: Օգտագործված գրականության ցանկն արտացոլված է աշխատանքում: Հետազոտության հավաստիությունը և օբյեկտիվությունը հիմնավորված է: Ուսանողը անցկացրել է սոցհարցումներ, որոնց արդյունքները ամփոփված են և ներկայացված տրամագրերում: Ավարտական աշխատանքը ամբողջական հետազոտություն է, արժանի է լավ գնահատականի և երաշխավորվում է հրապարակային պաշտպանության:

**Լ. Ասատրյան** - Ուսանողն ունի ինքնուրույնության և հետազոտական աշխատանք կատարելու ունակություն, նյութը փնտրելու, ընդհանրացնելու, վերլուծելու և հետևություն կատարելու հմտություններ և կարողություններ: Ավարտական աշխատանքը ինքնուրույն, ամբողջական հետազոտություն է և երաշխավորում ենք պաշտպանության:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Աննա Մելքոնյանի «Էկոլոգիական դաստիարակությունը տարրական դպրոցում» թեմայով ավարտական աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝** **Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ**

**ՔԱՐՏՈՒՂԱՐ՝** **Է. ՅԱՐԱՋՅԱՆ**

**05.05.2020թ.**

Արձանագրություն Նո. 18

2019-2020 ՈՒՍ.ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի ՆԻՍՏԻ

Օրակարգ

1. 2019-2020 ուս. տարում ԿՀՍ և ՍԿ ֆակուլտետների առկա բակալավր 4-րդ և հեռակա բակալավր 5-րդ կուրսերի Մանկավարժության ամբիոնի գծով ավարտական աշխատանքների նախապաշտպանությունների արդյունքների մասին:

**ԼՍԵՑԻՆ –** Անուշ Եպիսկոպոսյանի «Սոցիալ-մանկավարժական աշխատանքի առանձնահատկությունները հիպերակտիվ երեխաների հետ» թեմայով ավարտական աշխատանքի նախապաշտպանության տեսաներկայացումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Ա. Հովհաննիսյան, Ս. Սիսյան

**Ա. Հովհաննիսյան** - Ներկայացված ավարտական աշխատանքն աչքի է ընկնում տեսական և գործնական վերլուծությունների համապատասխանությամբ: Ուսանողին հաջողվել է հենվելով տեսական վերլուծության արդյունքերի վրա՝ կատարել համապատասխան եզրակացություններ և մշակել գործնական հետազոտության հիմնական ուղղությունները: Սակայն աշխատանքում որոշ հատվածներ ունեն լեզվառճական խմբագրման կարիք:

**Ս. Սիսյան** - Ա. Եպիսկոպոսյանը կարողացել է գտնել, ընտրել թեմային առնչվող գրական աղբյուրները, դասակարգել անհրաժեշտ նյութերը և դրանք արդյունավետորեն օգտագործել հետազոտական աշխատանքում, մանկավարժական դիտարկումների նկարագրության, արդյունքների վերլուծության, մեկնաբանությունների և ամփոփման ընթացքում ցուցաբերել է հետազոտական աշխատանքի ընդգծված կարողություններ: Հետազոտական աշխատանքի ընթացքում Ա. Եպիսկոպոսյանը դրսևորել է մեծ աշխատասիրություն, պատասխանատվություն, հետաքրքրասիրություն, պրպտուն ու ստեղծագործական կարողություններ և բարեխիղճ գործելաոճ: Առաջարկում եմ աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Անուշ Եպիսկոպոսյանի «Սոցիալ-մանկավարժական աշխատանքի առանձնահատկությունները հիպերակտիվ երեխաների հետ» թեմայով ավարտական աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ԼՍԵՑԻՆ –** Լիլիթ Թովմասյանի «Սովորողների առողջության պահպանման հիմնախնդիրը հանրակրթական դպրոցում» թեմայով ավարտական աշխատանքի նախապաշտպանության տեսաներկայացումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Ն. Կարապետյան, Ս. Սիսյան

**Ն. Կարապետյան** - Աշխատանքում դիտարկվել են հանրակրթական դպրոցում սովորողների առողջության պահպանման մի շարք պայմաններ: Հետազոտողն անդրադարձել է սովորողների ճիշտ կեցվածքի ձևավորման, ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանման հարցերին: Հետազոտությունում որպես պայմաններ ներկայացվել են նաև միջոցառումները, խաղերը: Ցանկալի կլիներ աշխատանքում ներկայացնել որևէ պարապմունքի օրինակ: Ավարտական աշխատանքն ավարտուն, տրամաբանական կառուցվածք ունեցող աշխատանք է, բավարարում է ավարտական աշխատանքին ներկայացվող պահանջներին:

**Ս. Սիսյան** - Հետազոտական աշխատանքի ընթացքում Լ. Թովմասյանը դրսևորել է մեծ աշխատասիրություն, բարեխղճություն, ստեղծագործական և պատասխանատու վարքագիծ: Հետազոտության արդյունքերը կարող են կիրառվել ուսուցիչների մանկավարժական գործունեության ընթացքում, իսկ արված առաջարկը կարող է ապագա ուսուցիչների մեջ ձևավորել երեխաների առողջության պահպանմանն ուղղված առավել համակողմանի մասնագիտական կարողություններ: Առաջարկում եմ աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Լիլիթ Թովմասյանի «Սովորողների առողջության պահպանման հիմնախնդիրը հանրակրթական դպրոցում» թեմայով ավարտական աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ԼՍԵՑԻՆ –** Հեղինե Գևորգյանի «Դեռահասների վարքային շեղումների կանխարգելումը» թեմայով ավարտական աշխատանքի նախապաշտպանության տեսաներկայացումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Գ. Աղուզումցյան, Լ. Ասատրյան, Լ. Նազարյան

**Գ. Աղուզումցյան** - Աշխատանքի որոշ հատվածներում առկա են մտքի անհարթություններ, օգտագործված որոշ մասնագիտական եզրույթներ շտկման կարիք ունեն, եզրակացությունները ներկայացված են ընդհանրական՝ կարելի էր մասնավորեցնել:

**Լ. Ասատրյան** – Կարծում եմ եզրակացությունները չեն պատասխանում առաջադրված խնդիրներին, դրանք վերանայման և շտկման կարիք ունեն: Առաջարկում եմ տալ ուսանողին հնարավորություն ևս մեկ անգամ ներկայացնել աշխատանքը՝ թերությունները վերացնելուց հետո:

**Լ. Նազարյան** – Համաձայն եմ բոլոր դիտարկումների հետ, կաշխատենք տրված ժամանակահատվածում շտկել բոլոր թերությունները:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հանձնարարել Հեղինե Գևորգյանին շտկել բոլոր թերությունները և ներկայացնել աշխատանքը 15.05.2020թ.-ին՝ կրկնակի նախապաշտպանության ընթացքում:

**ԼՍԵՑԻՆ –** Գոռ Սաֆարյանի «Սոցիալական մանկավարժի գործառույթները հիպերակտիվ երեխայի հետ աշխատանքում» թեմայով ավարտական աշխատանքի նախապաշտպանության տեսաներկայացումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ –** Ա. Հովհաննիսյան, Լ. Ասատրյան

**Ա. Հովհաննիսյան** – Ներկայացված ավարտական աշխատանքը ավարտուն և ամբողջական է, սակայն առկա են որոշ թերություններ: Եզրակացության մեջ արդիականությունը բավականին երկար է, առաջարկում ենք վերանայել և խմբագրել: Առաջարկում ենք ներածության մեջ վերանայել, հստակեցնել հետազոտության նպատակը: Հետազոտությունը իրականացվել է ընդամենը տասը հոգու շրջանում,

կարծում ենք աշխատանքը կշահեր, եթե հետազոտվողների քանակը մի փոքր ավել լիներ: Աշխատանքում առկա են որոշ լեզվառճական, կետադրական և տեխնիկական վրիպակներ, որոնք խմբագրման, շտկման կարիք ունեն:

**Լ. Ասատրյան** – Կարծում եմ Գ. Սաֆարյանին ևս պետք է տանք հնարավորություն շտկել թերությունները և նորից ներկայացնել աշխատանքը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հանձնարարել Գոռ Սաֆարյանին շտկել բոլոր թերությունները և ներկայացնել աշխատանքը 15.05.2020թ.-ին՝ կրկնակի նախապաշտպանության ընթացքում:

**ԼՍԵՑԻՆ –** Ալինա Գրիգորյանի «Կրտսեր դպրոցականների մասնակցային պասիվության հաղթահարման մանկավարժական ուղիները» թեմայով ավարտական աշխատանքի նախապաշտպանության տեսաներկայացումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Ն. Կարապետյան, Ա. Դալլաքյան

**Ն. Կարապետյան** - Աշխատանքում դիտարկվել են մի շարք նորարական մոտեցումներ, որոնք ներակայացված են կրտսեր դպրոցականների զարգացման սոցիալական առանձնահատկությունների հաշվառման տեսանկյունից: Հետազոտողը վերլուծել է կրտսեր դպրոցականների մասնակցային պասիվության պատճառները և առաջադրել դրա հաղթահարման մանկավարժական ուղիները ծնողների և ուսուցիչների համար: Մեր կարծիքով իրավամբ նոր հիմնախնդիր է և կատարված աշխատանքի արդյունքները կիրառական նշանակություն կունենան ժամանամակից դասի, ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացման համար: Ավարտական աշխատանքը կուռ տարամաբանությամբ, գիտական և մեթոդաբանական հենքով ինքնուրույն նորարարական հետազոտություն է, արժանի է բարձր գնահատականի

**Ա. Դալլաքյան** - Ա.Գրիգորյանն ավարտական աշխատանքի կատարման ողջ ընթացքում ցուցաբերել է բարձր պատասխանատվություն, բարեխղճություն, կազմակերպվածություն, ստեղծագործականություն և խնդիրների լուծման կառուցողական մոտեցում: Ավարտական աշխատանքն ինքնուրույն և ավարտուն

աշխատանք է: Այն համապատասխանում է ավարտական աշխատանքին ներկայացվող պահանջներին և երաշխավորվում է հրապարակային պաշտպանության:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Ալինա Գրիգորյանի «Կրտսեր դպրոցականների մասնակցային պասիվության հաղթահարման մանկավարժական ուղիները» թեմայով ավարտական աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ԼՍԵՑԻՆ** – Ազատուհի Սահակյանի ««Քոուչ ծնողի» մոդելը և առանձնահատկությունները տարրական դպրոցում» թեմայով ավարտական աշխատանքի նախապաշտպանության տեսաներկայացումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Գ. Հարությունյան, Ա. Դալլաքյան

**Գ. Հարությունյան** - Ավարտական աշխատանքն ինքնուրույն և ավարտուն աշխատանք է: Գրականության ցանկում ընդգրկված աղբյուրներն արդիական են, ներառված են թեմային անհրաժեշտ աղբյուրներ: Ավարտական աշխատանքի եզրակացություններն արված են ինքնուրույն և ընդհանուր առմամբ համապատասխանում են առաջադրված նպատակին ու խնդիրներին: Սակայն ավարտական աշխատանքում առկա են տեխնիկական, համակարգչային շարվածքի վրիպումներ:

**Ա. Դալլաքյան** - Ա. Սահակյանն ունի ինքնուրույն ստեղծագործական լուծումներ առաջադրելու հմտություններ: Ուսանողուհին իր հետազոտության շրջանակներում ինքնուրույն մշակել է հարցաթերթիկներ և իրականացրել անկետավորում, հարցազրույցներ ուսուցիչների, ծնողների շրջանում, կիրառել է ծնողների քոուչինգային քարտեր, մշակել է «Քոուչ ծնողի» տեսական մոդել՝ շեշտադրելով տարրական դպրոցի առանձնահատկությունները և ուսուցիչ-աշակերտ-ծնող եռանկյունու փոխհամագործակցությունը: Ա.Սահակյանը նյութեր հավաքագրելու և համակարգելու ընթացքում ցուցաբերել է ստեղծագործականություն և ինքնուրույն մոտեցումներ՝ պատշաճ մակարդակով ներկայացնելով իր սեփական տեսանկյուններն առաջադրված հիմնախնդրի շուրջ: Առաջարկում եմ աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Ազատուհի Սահակյանի ««Քոուչ ծնողի» մոդելը և առանձնահատկությունները տարրական դպրոցում» թեմայով ավարտական աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ԼՍԵՑԻՆ –** Թամարա Ավագյանի «Աղետներին դիմակայելու կարողությունների ձևավորումը տարրական դպրոցում» թեմայով ավարտական աշխատանքի նախապաշտպանության տեսաներկայացումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Մ. Գևորգյան, Ն. Կարապետյան

**Մ. Գևորգյան** - Բավականին հետաքրքիր և նորովի է ներկայացվել հարցման մասնակիցների ընտրանքը՝ պայմանավորված երկրում գործող արտակարգ իրավիճակով: Հարցումն իրականացվել է առցանց, հատուկ դասվարների համար գործող facebook-յան խմբի միջոցով, ինչը հնարավորություն է ընձեռել ներգրավել ավելի մեծ թվով հարցվողներ տարբեր դպրոցներից և համայնքներից: Ստացված պատասխանները վերլուծվել են ըստ յուրաքանչյուր հարցի՝ տոկոսային հարաբերակցությամբ: Հետաքրքիր կլիներ տեսնել նաև ինտեգրված դասերի օրինակներ, ինչպես նաև դասերի ընթացքում պահպանվեր միջառարկայական կապերը: Աշխաանքը ամբողջությամբ պատրաստ է և կարող է ներկայացվել պաշտպանության:

**Ն. Կարապետյան** - Թամարա Ավագյանը դրսևորել է ինքնուրույնության բարձր մակարդակ, ստեղծագործական մոտեցում: Նա համեմատել, տեսական հիմնավոր վերլուծության է ենթարկել հավաքագրված նյութը: Նա կարողանում է յուրովի մեկնաբանել առաջադրված հարցերը, ընդհանացնել և համակարգել համապատասխան տեղեկատվությունը: Ուսանողը կարողանում էր ներկայացնել և հիմնավորել սեփական տեսակետը: Ավարտական աշխատանքը ավարտուն, ինքնուրույն հետազոտություն է, արժանի է բարձր գնահատականի և երաշխավորվում է հրապարակային պաշտպանության:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Թամարա Ավագյանի «Աղետներին դիմակայելու կարողությունների ձևավորումը տարրական դպրոցում» թեմայով ավարտական աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ԼՍԵՑԻՆ** – Դիանա Աղասյանի «Բնապահպանական միջոցառումների կազմակերպումը տարրական դպրոցում» թեմայով ավարտական աշխատանքի նախապաշտպանության տեսաներկայացումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Լ. Ասատրյան, Ն. Կարապետյան

**Լ. Ասատրյան** - Կատարված աշխատանքը ինքնուրույն է, էկոլոգիական բովանդակությամբ հետաքրքիր միջոցառումներ են մշակված, աշխատանքի կիրառական նշանակությունը ակնառու է և կարող է օգտագործվել հանրակրթական դպրոցներում արտաուսումնական միջոցառումների կազմակերպման համար: Սակայն աշխատանքի տեսական նշանակությունը բացակայում է, անհրաժեշտ է ավելացնել այն:

**Ն. Կարապետյան** - Ուսանողը պատասխանատվությամբ է վերաբերվել գործընթացին, ցուցաբերել ինքնուրույնություն, պատրաստակամություն, ներկայացրել և հիմնավորել է իր դիրքորոշումները: Ուշագրավ է այն փաստը, որ նա մտահոգված էր առկա բնապահպանական հիմնախնդիրներով և փորձում էր ականջալուր դարձնել բոլորին՝ թե մանկավարժներին և թե՛ ծնողներին: Առաջարկում եմ աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Դիանա Աղասյանի «Բնապահպանական միջոցառումների կազմակերպումը տարրական դպրոցում» թեմայով ավարտական աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ԼՍԵՑԻՆ** – Հերմինե Գրիգորյանի «Հեքիաթների և հանելուկների դերը կրտսեր դպրոցականի էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման գործում» թեմայով ավարտական աշխատանքի նախապաշտպանության տեսաներկայացումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Ս. Ջանիկյան, Ն. Կարապետյան

**Ս. Ջանիկյան** - Աշխատանքում դիտարկվել է հեքիաթների և հանելուկների դերը կրտսեր դպրոցականների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման գործում: Ուշագրավ է այն փաստը, որ ուսանողն իր կատարած դիտարկումների, վերլուծությունների արդյունքում, ըստ թեմատիկ ուղղությունների, մշակել է հանելուկների և հեքիաթների փոքրիկ շտեմարան, հեղինակային դասանմուշներ և հետաքրքիր փոքրիկ մեդիաարտադրանք՝ տեսանյութ: Այս աշխատանքները ևս մեկ անգամ շեշտադրում են հետազոտության գործնական նշանակությունը:

**Ն. Կարապետյան** - Հերմինե Գրիգորյանը մշակված ընթացակարգին համապատասխան հավաքագրել, վերլուծել և համակարգել է անհրաժեշտ տեղեկատվությունը, նախագծել գործնական աշխատանքներ, դասերի օրինակներ: Ուսանողը դրսևորելով բարձր հետազոտական կարողություններ՝ իրականացրել է սոցհարցումներ, հավաքագրել և ամփոփել արդյունքները: Ավարտական աշխատանքը ավարտուն, տրամաբանական կառուցվածք ունեցող աշխատանք է, բավարարում է ավարտական աշխատանքին ներկայացվող պահանջներին: Առաջարկում եմ աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Հերմինե Գրիգորյանի «Հեքիաթների և հանելուկների դերը կրտսեր դպրոցականի էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման գործում» թեմայով ավարտական աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ԼՍԵՑԻՆ** – Սոնա Պողոսյանի «Մանկավարժական պրակտիկայի դերը տարրական դպրոցի ապագա ուսուցչի մասնագիտական պատրաստության գործընթացում» թեմայով ավարտական աշխատանքի նախապաշտպանության տեսաներկայացումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Գ. Հարությունյան, Գ. Հակոբյան

**Գ. Հարությունյան** - Ավարտական աշխատանքն ինքնուրույն և ավարտուն աշխատանք է: Ավարտական աշխատանքում առկա են հետազոտության թեմային համապատասխան կիրառական նոր մոտեցումներ և առաջադրված են ստեղծագործական լուծումներ: Ուսանողը տիրապետում է հետազոտության ընթացքում ստացված տվյալները

վերլուծելու, համադրելու և հիմնավորելու կարողությանը: Կարծում եմ ավարտական աշխատանքը կշահեր, եթե եզրակացությունների մեջ նշվեին նաև պրակտիկայի բարելավման առաջարկներ:

**Գ. Հակոբյան** - Աշխատանքի բովանդակությունը համապատասխանում է թեմային, նպատակին, առաջադրված բոլոր խնդիրներին: Նյութերի որոնման, մշակման, վերլուծության, համակարգման, հետազոտական աշխատանքի կատարման, հատկապես գործնական-մեթոդական նյութերի ստեղծման և դրանց կիրառման հնարավորությունների ներկայացման մեջ ուսանողը դրսևորել է ինքնուրույնություն ու ստեղծագործական մոտեցում: Առաջարկում եմ աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Սոնա Պողոսյանի «Մանկավարժական պրակտիկայի դերը տարրական դպրոցի ապագա ուսուցչի մասնագիտական պատրաստության գործընթացում» թեմայով ավարտական աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ԼՍԵՑԻՆ** – Գոհար Սևոյանի «Ինքնագնահատման կարողության զարգացման առանձնահատկությունները կրտսեր դպրոցական տարիքում» թեմայով ավարտական աշխատանքի նախապաշտպանության տեսաներկայացումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Ն. Կարապետյան, Գ. Հակոբյան

**Ն. Կարապետյան** - Աշխատանքում դիտարկվել են մի շարք նորարական մոտեցումներ, որոնք ներակայացված են կրտսեր դպրոցականների զարգացման առանձնահատկությունների հաշվառման տեսանկյունից: Հետազոտողը վերլուծել է սովորողների ինքնագնահատման կարողության զարգացման վրա ազդող մի շարք գործոններ, կրթական չափորոշիչները, որի հիման վրա բացահայտել ուսումնական առարակների, ուսումնական նյութի բովանդակության և ինքնագնահատման կարողության զարգացման պատճառահետևանքային կապերը:

**Գ. Հակոբյան** - Կատարված ուսումնասիրությունը, մեթոդական նյութերն ու հետազոտության արդյունքները կարող են օգտակար լինել կրտսեր դպրոցականների ինքնագնահատման կարողության զարգացմանն ուղղված աշխատանքների իրականացման ընթացքում: Ավարտական աշխատանքն ամբողջական է և երաշխավորվում է պաշտպանության:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Գոհար Սևոյանի «Ինքնագնահատման կարողության զարգացման առանձնահատկությունները կրտսեր դպրոցական տարիքում» թեմայով ավարտական աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ԼՍԵՑԻՆ** – Մելինե Գալոյանի «Փոխներգործուն մեթոդների կիրառման արդյունավետությունը տարրական դպրոցի ուսուցման գործընթացում» թեմայով ավարտական աշխատանքի նախապաշտպանության տեսաներկայացումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Մ. Գևորգյան, Մ. Ասատրյան

**Մ. Գևորգյան** - Աշխատանքը ամբողջական է, համակարգված, եզրակացությունները հիմնավորված են, դրանք համապատասխանում են առաջադրված խնդիրներին, շարադրված են հակիրճ և գրագետ: Գրականության ցանկն արտացոլված է աշխատանքում: Կարծում ենք, որ աշխատանքն ավելի շահեկան կլիներ, եթե ուսանողը ներկայացներ փոխներգործուն մեթոդների կիրառմամբ դասի նմուշ-օրինակներ տարրական դպրոցում դասավանդվող տարբեր առարկաներից:

**Մ. Ասատրյան** - ՈՒսանողը բարեխղճորեն աշխատել է բնագրային նյութերով, վերլուծել, ընդհանրացրել, համակարգել է հետազոտական աշխատանքների ընթացքում ստացված տվյալները, դրսևորել է ստեղծագործական մոտեցում, բավականաչափ ինքնուրույնություն և հետազոտական աշխատանք կատարելու ունակություն: Ավարտական աշխատանքը համապատասխանում է ավարտական աշխատանքի ձևավորմանը ներկայացվող կանոնակարգի պահանջներին և երաշխավորվում է հրապարակային պաշպանության:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Մելինե Գալոյանի «Փոխներգործուն մեթոդների կիրառման արդյունավետությունը տարրական դպրոցի ուսուցման գործընթացում» թեմայով ավարտական աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ԼՍԵՑԻՆ** – Վիկտորիա Շահինյանի «Խաղային տեխնոլոգիաների իրականացման մանկավարժական պայմանները տարրական դպրոցում» թեմայով ավարտական աշխատանքի նախապաշտպանության տեսաներկայացումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Ի. Բաբայան, Ա. Մանուկյան

**Ի. Բաբայան** - Ուսանողը իրականացրել է հետազոտական աշխատանք, կատարել է ստացված արդյունքների վերլուծություն, գնահատում և հիմնավորել է այդ ամենը համապատասխան եզրահանգումներով: Ուսանողը կարողացել է ապահովել աշխատանքի ամբողջականությունը, օգտագործված գրականության ցանկը արդիական է: Եզրակացությունները համապատասխանում են թեմայի խնդիրներին և հետազոտական աշխատանքի արդյունքներին: Սակայն աշխատանքի որոշ հատվածներում կան անճշտություններ, ուղղագրական և տեխնիկական սխալներ:

**Ա. Մանուկյան** - Ավարտական աշխատանքը պատրաստ է պաշտպանության: Այն ինքնուրույն և ավարտուն հետազոտություն է, որն ունի ինչպես տեսական այնպես էլ կիրառական նշանակություն տարրական դպրոցում իրականացվող մանկավարժական գործընթացի արդյունավետության բարձրացման համար:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Վիկտորիա Շահինյանի «Խաղային տեխնոլոգիաների իրականացման մանկավարժական պայմանները տարրական դպրոցում» թեմայով ավարտական աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝** **Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ**

**ՔԱՐՏՈՒՂԱՐ՝** **Է. ՅԱՐԱՋՅԱՆ**

**06.05.2020թ.**

Արձանագրություն Նո. 19

2019-2020 ՈՒՍ.ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՄԱՅԻՍԻ 7-Ի ՆԻՍՏԻ

Օրակարգ

1. 2019-2020 ուս. տարում ԿՀՍ ֆակուլտետի «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության առկա մագիստրատուրա 2-րդ կուրսի Մանկավարժության ամբիոնի գծով մագիստրոսական ատենախոսությունների նախապաշտպանությունների արդյունքների մասին:

**ԼՍԵՑԻՆ –** Անժելա Գաբրիելյանի «Համակարգչային խաղերի ազդեցությունը երեխաների սոցիալականացման վրա» թեմայով մագիստրոսական ատենախոսության նախապաշտպանության տեսաներկայացումը:

**Լ. Պողոսյան** – Թեմայի արդիականությունը հիմնավորված է, նպատակը, խնդիրները և եզրակացությունները բխում են միմյանցից: Մոդելավորվել են կրտսեր դպրոցականի սոցիալականացման առանձնահատկությունները և համակարգչային խաղերի ազդեցության հիմնախնդիրը նրանց սոցիալականացման վրա: Սակայն կարծում եմ, որ եզրակացությունները երկարաշունչ են, անհրաժեշտ է կրճատել: Առաջարկում եմ աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**Ա. Թոփուզյան** - Թեզի բովանդակությունն ու ձևավորումը համապատասխանում է պահանջվող չափանիշներին: Մագիստրոսը աշխատանքը ձևավորելիս հանդես է բերել նախաձեռնողականություն, սակայն նրան պակասում է ստեղծագործականությունը: Տեսաներկայացումը անհրաժեշտ է վերանայել և սահիկները ներկայացնել ճիշտ հերթականությամբ:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Անժելա Գաբրիելյանի «Համակարգչային խաղերի ազդեցությունը երեխաների սոցիալականացման վրա» թեմայով մագիստրոսական ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ԼՍԵՑԻՆ –** Ալինա Եղիազարյանի «Մանկությունը որպես մարդկային կյանքի հիմք» թեմայով մագիստրոսական ատենախոսության նախապաշտպանության տեսաներկայացումը:

**Ա. Թոփուզյան** – Ներկայացված մագիստրոսական թեզի առավելությունն այն է, որ ունի տեսական և գործնական նշանակություն: Թերությունն այն է, որ մագիստրոսի վերլուծելու, ընդհանրացնելու կարողությունները ձևավորվեցին աշխատանքի ընթացքում, որն էլ ազդեց որոշ հարցերի լուսաբանման և հիմնավորման որակի վրա: Աշխատանքը ամբողջական է և արժանի է լավ գնահատականի:

**Լ. Պողոսյան** – Հետաքրքիր և բովանդակալից աշխատանք է ստացվել: Սակայն ունեմ որոշ դիտարկումներ: Եզրակացությունները շատ երկար են, կարծում եմ դրանց մի մասը կարելի է ներկայացնել հետազոտական մասում: Աշխատանքում առկա են տեխնիկական վրիպակներ: Սակայն աշխատանքն ամբողջական և ավարտուն է, ուստի առաջարկում եմ երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Ալինա Եղիազարյանի «Մանկությունը որպես մարդկային կյանքի հիմք» թեմայով մագիստրոսական ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ԼՍԵՑԻՆ –** Աննա Մովսեսյանի «Աշակերտների հոգեբանական անվտանգության ապահովումը դպրոցում սոցիալ – մանկավարժական գործունեության միջոցով» թեմայով մագիստրոսական ատենախոսության նախապաշտպանության տեսաներկայացումը:

**Լ. Նազարյան** - Աշխատանքը հատկապես աչքի է ընկնում հիմնախնդրի ուղղությամբ ունեցած իր տեսական հարուստ մեկնաբանմամբ: Հատկապես կարևորված է հոգեբանական անվտանգության բաղկացուցիչների լուսաբանումը: Աշխատանքի իրականացման ընթացքում ուսանողը դրսևորել է անհրաժեշտ մոտիվացիա: Աշխատանքը կշահեր, եթե լինեին ուսուցչին ուղղված մեթոդական ցուցումներ և խորհուրդներ:

**Հ. Թադևոսյան** – Ներկայացված մագիստրոսական թեզը ամբողջական և ավարտուն աշխատանք է, սակայն այն զերծ չէ թերություններից: Արդիականությունը անհրաժեշտ է խմբագրել և հստակեցնել: Աշխատանքում շատ քիչ են անդրադարձել սոցիալ-մանկավարժական գործունեությանը, որը անհրաժեշտ է ուժեղացնել:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Աննա Մովսեսյանի «Աշակերտների հոգեբանական անվտանգության ապահովումը դպրոցում սոցիալ – մանկավարժական գործունեության միջոցով» թեմայով մագիստրոսական ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության՝ թերությունները շտկելուց հետո:

**ԼՍԵՑԻՆ –** Աննա Հակոբյանի «Սոցիալական մանկավարժի աշխատանքը ԿԱՊԿՈՒ երեխաների հետ» թեմայով մագիստրոսական ատենախոսության նախապաշտպանության տեսաներկայացումը:

**Հ. Թադևոսյան** – Ներկայացված մագիստրոսական թեզն ավարտուն, ինքնուրույն, տեսական և գործնական կարևոր նշանակություն ունեցող ուսումնական հետազոտություն է, կարելի է ներկայացնել հրապարակային պաշտպանության:

**Ս. Միսյան** – Ա. Հակոբյանի ներկայացրած աշխատանքը ամբողջական է: Նպատակը, խնդիրները, ընտրված մեթոդները, հետազոտական աշխատանքը, եզրակացություններն ամբողջությամբ համապատասխանում են միմյանց: Սակայն կարծում եմ եզրակացությունները կարելի է կրճատել և համապատասխանեցնել խնդիրներին:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Աննա Հակոբյանի «Սոցիալական մանկավարժի աշխատանքը ԿԱՊԿՈՒ երեխաների հետ» թեմայով մագիստրոսական ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ԼՍԵՑԻՆ –** Թամարա Հովհաննիսյանի «Կրթությունից դուրս մնացած երեխաների կրթության իրավունքի իրացմանն ուղղված սոցիալ-մանկավարժական գործունեության բովանդակությունը» թեմայով մագիստրոսական ատենախոսության նախապաշտպանության տեսաներկայացումը:

**Հ. Թադևոսյան** - Աշխատանքի բովանդակությունն ամբողջությամբ համապատասխանում է առաջադրված նպատակին, խնդիրներին: Ուսանողն ինքնուրույն է կատարել նյութերի հավաքագրման աշխատանքները, մշակել, շարադրել, վերլուծել, դասակարգել է դրանք, ընտրել հետազոտության նպատակից և խնդիրներից բխող նպատակահարմար մեթոդներ, մեթոդիկաներ: Մագիստրոսական թեզն ավարտուն, ինքնուրույն հետազոտություն է և կարելի է ներկայացնել հրապարակային պաշտպանության:

**Լ. Պողոսյան** – Հետաքրքիր և կիրառական աշխատանք է: Մագիստրոսը հաջողությամբ կառուցել է աշխատաանքի բովանդակությունը, նպատակը, խնդիրները և եզրակացությունները: Միայն առաջարկում եմ եզրակացությունները խմբագրել և համապատասխանեցնել խնդիրներին:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Թամարա Հովհաննիսյանի «Կրթությունից դուրս մնացած երեխաների կրթության իրավունքի իրացմանն ուղղված սոցիալ-մանկավարժական գործունեության բովանդակությունը» թեմայով մագիստրոսական ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ

**07.05.2020թ.**

Արձանագրություն Նո. 20

2019-2020 ՈՒՍ.ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՄԱՅԻՍԻ 8-Ի ՆԻՍՏԻ

Օրակարգ

1. 2019-2020 ուս. տարում ՍԿ ֆակուլտետի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության առկա մագիստրատուրա 2-րդ կուրսի Մանկավարժության ամբիոնի գծով մագիստրոսական ատենախոսությունների նախապաշտպանությունների արդյունքների մասին:

**ԼՍԵՑԻՆ** – Սեդա Արսենյանի «Զգացմունքների դաստիարակության առանձնահատկությունները կրտսեր դպրոցում» թեմայով մագիստրոսական ատենախոսության նախապաշտպանության տեսաներկայացումը:

**Ա. Թոփուզյան** - Թեզի բովանդակությունն ու ձևավորումը համապատասխանում է պահանջվող չափանիշներին: Մագիստրոսը կարողացել է ինքնուրույն ձևավորել աշխատանքը և տեսաներկայացումը: Սակայն տեսաներկայացումը վերանայման և բարելավման կարիք ունի:

**Գ. Հակոբյան** – Ս. Արսենյանի մագիստրոսական թեզը շատ հրաշալի տպավորություն թողեց ինձ վրա՝ նոր մոտեցումներով և հետաքրքիր մեկնաբանություններով ու վերլուծություններով: Այն ավարտուն, ամբողջական աշխատանք է: Առաջարկում եմ աշխատանքի տեսական նշանակությունը խմբագրել և կոնկրետացնել: Ներկայացված տրամագրերի տառատեսակները մեծացրեք, որպեսզի ավելի ընթեռնելի լինի:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Սեդա Արսենյանի «Զգացմունքների դաստիարակության առանձնահատկությունները կրտսեր դպրոցում» թեմայով մագիստրոսական ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության՝ ներկայացված թերությունները շտկելուց հետո:

**ԼՍԵՑԻՆ** – Սուսաննա Մխիթարյանի «Ընտանեկան դաստիարակության առանձնահատկությունները կրտսեր դպրոցում» թեմայով մագիստրոսական ատենախոսության նախապաշտպանության տեսաներկայացումը:

**Ա. Թոփուզյան** - ՈՒսանողը բավականին ինքնուրույնություն հանդես բերեց համապատասխան գրականություն գտնելու, հիմնախնդրի շուրջ ծնողների,

ուսուցիչների, սովորողների շրջանում հարցաթերթիկային հարցումներ, զրույցներ անցկացնելու, հետազոտության գրաֆիկներն ընդհանրացնելու և ներկայացնելու գործում: Սակայն աղքատիկ է մանկավարժական բառապաշարը, թույլ են նրա հետևություններ կատարելու, եզրակացություններ ձևակերպելու կարողությունները:

**Գ. Հակոբյան** - Աշխատանքը և՛ բովանդակային, և՛ կառուցվածքային առումով շատ ներդաշնակ է, վերլուծությունները համոզիչ են: Հատկապես արժևորել եմ ներկայացված ընտանեկան դաստիարակության առանձնահատկությունները հայ ընտանիքի դաստիարակության մարտահրավերների համատեքստում, որտեղ շատ նոր բաներ կան: Սակայն աշխատանքում կան որոշ տեխնիկական թերություններ, որոնք շատ հեշտ հնարավոր է ուղղել: Առաջարկում եմ աշխատանքը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Սուսաննա Մխիթարյանի «Ընտանեկան դաստիարակության առանձնահատկությունները կրտսեր դպրոցում» թեմայով մագիստրոսական ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ԼՍԵՑԻՆ** – Գայանե Անանյանի «Դպրոցական մակարդակում երեխայի կրթության կարիքի գնահատման հիմնախնդիրները» թեմայով մագիստրոսական ատենախոսության նախապաշտպանության տեսաներկայացումը:

**Ն. Մարտիրոսյան** - Գ. Անանյանը դրսևորել է ինքնուրույնություն և հետազոտական աշխատանք կատարելու բավարար ունակություն: Հեղինակն ինքնուրույն փնտրել, ուսումնասիրել է նյութի հետ կապված տեսական գրականությունը, ընդհանրացրել, հանգամանորեն վերլուծել և կատարել հետևություններ: Մագիստրոսական թեզը ավարտուն և ամբողջական աշխատանք է:

**Ս. Սիսյան** - Աշխատանքի բովանդակությունը ամբողջությամբ համապատասխանում է առաջադրված նպատակին և խնդիրներին: Բավականին հետաքրքիր և բովանդակալից աշխատանք է: Սակայն ունեմ որոշ դիտարկումներ: Գործնական նշանակությունը կարծում եմ անհրաժեշտ է խմբագրել և ավելի կոնկրետ ներկայացնել, շատ

ընդհանրական է տրված: Գրականության ցանկում որոշ աղբյուրներ թերի են ներկայացված, անհրաժեշտ է լրացնել:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Գայանե Անանյանի «Դպրոցական մակարդակում երեխայի կրթության կարիքի գնահատման հիմնախնդիրները» թեմայով մագիստրոսական ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության՝ ներկայացված թերությունները շտկելու պայմանով:

**ԼՍԵՑԻՆ** – Արաքսյա Մուրադյանի «Տարրական դպրոցում էլեկտրոնային միջոցների կիրառման դիդակտիկական պայմանները» թեմայով մագիստրոսական ատենախոսության նախապաշտպանության տեսաներկայացումը:

**Լ. Պողոսյան** - Աշխատանքում իրականացվել է կատարված հետազոտության քանակական և որակական վերլուծություն, ստացված տվյալների հիման վրա կատարվել է արդյունքների վերլուծություն, կատարվել են եզրահանգումներ, որոնք տրամաբանական կապի մեջ են հետազոտության արդյունքների հետ: Ներկայացված մագիստրոսական թեզը համապատասխանում է նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին:

**Ս. Միսյան** – Շատ հետաքրքիր և արդիական աշխատանք է: Սակայն աշխատանքի ծավալում բացակայում էր գրաֆիկների թիվը, խնդրում եմ ավելացրեք: Եզրակացությունները անհրաժեշտ է վերանայել և համապատասխանեցնել խնդիրներին: Ընդհանուր առմամբ ամբողջական և ավարտուն աշխատանք է և կարող ենք երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Արաքսյա Մուրադյանի «Տարրական դպրոցում էլեկտրոնային միջոցների կիրառման դիդակտիկական պայմանները» թեմայով մագիստրոսական ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության՝ դիտողությունները շտկելուց հետո:

**ԼՍԵՑԻՆ** – Մարգարիտ Աբրահամյանի «Տարրական դպրոցի աշակերտների սեռադերային առանձնահատկությունների հաշվառման մանկավարժական

պայմանները›› թեմայով մագիստրոսական ատենախոսության նախապաշտպանության տեսաներկայացումը:

**Լ. Պողոսյան** – Աշխատանքի բովանդակությունը լիովին համապատասխանում է հիմնախնդիրն: Ուսանողը ցուցաբերել է բավարար չափով ինքնուրույնություն, հետազոտական աշխատանքները կատարելու ընթացքում ինքնուրույն ընտրել է համապատասխան մեթոդիկաներ, որոնք օգնել են լուծել առաջադրված խնդիրները: Մագիստրոսական թեզը համապատասխանում է նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին:

**Հ. Թադևոսյան** – Ընդհանուր առմամբ աշխատանքը ամբողջական է և հաջողված: Հիմնական նկատառումս կապված է եզրակացության հետ, կարծում եմ անհրաժեշտ է այստեղ ներառել մշակված մանկավարժական պայմանները և առաջարկությունները:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Մարգարիտ Աբրահամյանի ‹‹Տարրական դպրոցի աշակերտների սեռադերային առանձնահատկությունների հաշվառման մանկավարժական պայմանները›› թեմայով մագիստրոսական ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝** **Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ**

**ՔԱՐՏՈՒՂԱՐ՝** **Է. ՅԱՐԱՋՅԱՆ**

**08.05.2020թ.**

Արձանագրություն Նո. 21

2019-2020 ՈՒՍ.ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՄԱՅԻՍԻ 15-Ի ՆԻՍՏԻ

**ԼՍԵՑԻՆ –** Հեղինե Հովհաննիսյանի, Գոռ Սաֆարյանի, Գայանե Համբարձումյանի և Անի Մելիքսեթյանի ավարտական աշխատանքների կրկնակի նախապաշտպանության տեսաներկայացումները:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Ա. Թոփուզյան, Լ. Ասատրյան, Ա. Հովհաննիսյան, Լ. Նազարյան, Գ. Աղուզումցյան, Զ. Ասատրյան, Ա. Մանուկյան

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Ներքոհիշյալ ուսանողների ավարտական աշխատանքների հրապարակային պաշտպանությունը երաշխավորել մեծ վերապահումով:

| Հ/հ | Ավարտական աշխատանքի Թեմա | Ուսանողի անուն ազգանուն | Գիտական ղեկավար |
|---|---|---|---|
| 1. | Դեռահասների վարքային շեղումների կանխարգելումը որպես սոցիալ-մանկավարժական հիմնախնդիր | Հովհաննիսյան Հեղինե | Լ. Նազարյան |
| 2. | Սոցիալական մանկավարժի գործառույթները հիպերակտիվ երեխայի հետ տարվող աշխատանքում | Սաֆարյան Գոռ | Լ. Նազարյան |
| 3. | Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը տարրական դպրոցում որպես դասի արդյունավետության բարձրացման միջոց: | Համբարձումյան Գայանե | Լ. Ասատրյան |
| 4. | Խաղի դերը կրտսեր դպրոցականների միջանձնային հարաբերությունների ձևավորման գործում | Մելիքսեթյան Անի | Լ. Ասատրյան |

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ

15.05.2020թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ նո. 22

2019-2020 ՈՒՍ ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի ՆԻՍՏԻ

Օրակարգ

1. 2019-2020 ուս. տարվա 2-րդ կիսամյակի պրակտիկայի հաշվետվության մասին:
2. «Երեխան մարդ է և ընկեր» թեմայով քարոզների մրցույթի արդյունքների մասին:
3. Ն. Մարկոսյանի ներկայացրած «Մանկավարժի պրակտիկ աշխատանքի ուղեցույց» խորագրով ուսումնամեթոդական ձեռնարկի մասին: /զեկուցողներ՝ Ն. Մարտիրոսյան, Գ. Աղուզումցյան, Ն. Կարապետյան/

1. **ԼՍԵՑԻՆ -** 2019-2020 ուս. տարվա 2-րդ կիսամյակի պրակտիկայի հաշվետվության մասին:

**Գ. Հարությունյան - ԿՀՍ ֆակուլտետի Սոցիալական մանկավարժություն մասնագիտության առկա բակալավր 2-րդ կուրսի** մանկավարժական պրակտիկան /շարունակական/ կազմակերպվել է 20.02.2020թ. մինչև 21.05.2020թ. /շաբաթական մեկ օր՝ հինգշաբթի/

- Պրակտիկայի բազա՝ Երևանի թիվ 104 հիմնական դպրոց
- Ուսանողների թիվ՝ 4
- ԿԾ պրակտիկայի ղեկավար՝ Գ.Հարությունյան, մեթոդիստ՝ Գ.Աղուզումցյան, մանկավարժ՝ Ս.Սիսյան, հոգեբան՝Լ.Քյուրքչյան:
- Պրակտիկաների համար ստեղծված classroom- էլ. հարթակում տեղադրված են պրակտիկայի թղթապանակը, պրակտիկայի աշխատանքային պլանները՝ նշված առաջադրանքներով ըստ օրերի և շաբաթների, պրակտիկայի գնահատման չափանիշները
- 4 շաբաթ իրականացվել է բնականոն ընթացքով, այնուհետև ՀՀ-ում ստեղծված արտակարգ իրավիճակի պայմաններում պրակտիկան իրականացվել է առցանց տարբերակով /աշխատանքներն իրականացվեցին Google Meet տարբերակով, թիվ 104 դպրոցի տնօրինության հետ համապատասխան պայմանավորվածության շնորհիվ ուսանողները հնարավորություն են ունեցել մասնակցելու նաև դպրոցում իրականացվող հեռավար ուսուցման գործընթացին՝ իրականացնել առցանց դասալսումներ, բազմամասնագիտական թիմի հետ աշխատանք, աշխատանքներ երեխաների հետ, online հարցումներ և վերլուծություններ: Իրականացվող առցանց դասալսումների, իրականացրած

աշխատանքների արդյունքների և ստացած տպավորությունների մասին ուսանողներն ամփոփ տեղեկություն են ներկայացրել էլեկտրոնային classroom հարթակում և քննարկել դասախոսների հետ, ստացել ուղղորդումներ/։

- Ուսանողները դրսևորել են ակտիվություն, պարտաճանաչություն, պատասխանատվություն և հետաքրքրվածություն կատարվելիք աշխատանքների նկատմամբ, classroom- էլ. հարթակում անմիջապես արձագանքել են տրված առաջադրանքներին, հանդես եկել մեկնաբանություններով։
- Պրակտիկայի պաշտպանություն՝ 09.06.2020 /Google Meet տարբերակով, տեսաձայնագրմամբ/։ Բոլոր ուսանողները ստացել են դրական գնահատական։

- **ԿՀՍ ֆակուլտետի Սոցիալական մանկավարժություն մասնագիտության առկա բակալավր 3-րդ կուրսի** մանկավարժական պրակտիկան /կիրառական/ կազմակերպվել է 27.04.2020թ. մինչև 05.06.2020թ. /6 շաբաթ/, պրակտիկան իրականացվել է առցանց տարբերակով։
  - Պրակտիկայի բազա՝ Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն /տնօրեն՝ Գևորգյան Հայկուհի/
  - Ուսանողների թիվ՝ 26
  - ԿԾ պրակտիկայի ղեկավար՝ Գ.Հարությունյան, մեթոդիստներ՝ Ի.Բաբայան, Գ.Եգանյան, Լ.Նազարյան
  - Պրակտիկաների համար ստեղծված classroom էլ. հարթակում տեղադրված են պրակտիկայի թղթապանակը, պրակտիկայի աշխատանքային պլանները՝ նշված առաջադրանքներով ըստ շաբաթների, պրակտիկայի գնահատման չափանիշները
  - Աշխատանքներն իրականացվել են Google Meet տարբերակով՝ յուրաքանչյուր օր աշխատանքին տրամադրելով 3-4 ժամ /փաստաթղթերի վերլուծություն, բազմաթիվ մեթոդիկաների ուսումնասիրում և կիրառում, հետազոտական աշխատանքներ, անհատական աշխատանքների ներկայացում և քննարկումներ, ինքնավերլուծություն և այլն/։
  - classroom էլեկտրոնային հարթակում ուսանողները յուրաքանչյուր շաբաթվա վերջում ամփոփ ներկայացրել են կատարված աշխատանքները և ղեկավարներից ստավել ուղղորդումներ
  - Պրակտիկան ներկայացնող PR տեսահոլովակի ստեղծում /մեթոդիստ՝ Գ.Եգանյան/
  - Պրակտիկայի պաշտպանություն՝ 15.06.2020 /Google Meet տարբերակով, տեսաձայնագրմամբ/։ Բոլոր ուսանողները ստացել են դրական գնահատական։

- **ՀՊՄՀ մյուս ֆակուլտետներում Մանկավարժության ամբիոնի դասախոսները ընդգրկված են եղել առկա ուսուցման բակալավրիատի 2-րդ կուրսերի**

**մանկավարժական պրակտիկայի /շարունակական/ շրջանակներում որպես մանկավարժ**

- ՀՀ-ում ստեղծված արտակարգ իրավիճակից ելնելով՝ մանկավարժական պրակտիկաներն իրականացվել են առցանց՝ Google Meet տարբերակով։

- **ԿՀՍ ֆակուլտետի Սոցիալական մանկավարժություն մասնագիտության հեռակա բակալավր 3-րդ կուրսի** մանկավարժական պրակտիկան կազմակերպվել է 10.02.2020թ. մինչև 09.03.2020թ. /4 շաբաթ/
  - Պրակտիկայի բազա՝ Երևանի Սմբատ Բյուրատի անվան թիվ 125 հիմնական դպրոց
  - Ուսանողների թիվ՝ 13
  - ԿԾ պրակտիկայի ղեկավար՝ Գ.Հարությունյան, մեթոդիստ՝ Գ.Աղուզումցյան
  - Պրակտիկայի պաշտպանություն՝ 03.06.2020 /Google Meet տարբերակով, տեսաձայնագրմամբ/
  - 1 ուսանող՝ Ռոստոմյան Մերին պրակտիկային չի ներկայացել։

- **ԿՀՍ ֆակուլտետի Սոցիալական մանկավարժություն մասնագիտության հեռակա բակալավր 4-րդ կուրսի** պրակտիկան չի իրականացվել՝ հետաձգվել է մինչև սեպտեմբեր։

- **Սոցիալական մանկավարժություն առկա մագիստրատուրա 1-ին կուրս**
  /13.04.2020թ.-ից 3 շաբաթ տևողությամբ/
  - ուսանողների քանակը՝ 2 ուսանող,
  - իրականացվել է առցանց՝ ԿՀՍ ֆակուլտետի բակալավրի հենքի վրա՝ Google Meet տարբերակով
  - ղեկավար-մեթոդիստներ՝ Գ.Հարությունյան, Ն.Մարկոսյան

- **Տարրական մանկավարժություն և մեթոդիկա առկա մագիստրատուրա 1-ին կուրս**
  /13.04.2020թ.-ից 3 շաբաթ տևողությամբ/
  - ուսանողների քանակը՝ 8 ուսանող,
  - իրականացվել է առցանց՝ ՍԿ ֆակուլտետի բակալավրի հենքի վրա Google Meet տարբերակով
  - ղեկավար-մեթոդիստներ՝ Հ.Թադևոսյան, Գ.Աղուզումցյան, Ս.Սիսյան, Գ.Հարությունյան

- **Տարրական մանկավարժություն և մեթոդիկա հեռակա մագիստրատուրա 2-րդ կուրս**
  /13.04.2020թ.-ից 2 շաբաթ տևողությամբ/
  - ուսանողների քանակը՝ 23 ուսանող,

- իրականացվել է առցանց՝ ՍԿ ֆակուլտետի բակալավրի հենքի վրա Google Meet տարբերակով
- **մասնագիտությամբ աշխատող** ուսանողների պարագայում՝ անհատական կարգով առցանց տվյալ դպրոցի՝ տարրական դպրոցի հենքի վրա
- ղեկավար-մեթոդիստներ՝ Ն.Մարկոսյան, Ա.Հովհաննիսյան, Լ.Պողոսյան, Գ.Հարությունյան, Հ.Թադևոսյան, Գ.Աղուզումցյան, Ս.Սիսյան, Լ.Նազարյան

- **Մանկավարժահետազոտական պրակտիկա**

○պրակտիկաների համար ստեղծվել են classroom էլեկտրոնային հարթակներ՝ հարթակում ակտիվություն են դրսևորել և՛ ուսանողները, և՛ ղեկավարները

○google meet-ով իրականացվել են առցանց հանդիպումներ՝ ուղղված առկա հարցերի պարզաբանմանն ու հետագա աշխատանքների պլանավորմանը

○classroom էլեկտրոնային հարթակում ուսանողները յուրաքանչյուր շաբաթվա վերջում ամփոփ ներկայացրել են կատարված աշխատանքները և ղեկավարներից ստացել ուղղորդումներ

○Պրակտիկայի ընթացքում մագիստրոսներն իրականացրել են՝

- ✓ **օրագրի** լրացում /պրակտիկայի յուրաքանչյուր օրվա մանրամասն և ***վերլուծական*** ներկայացում/
- ✓ օրենսդրության, կանոնակարգերի ուսումնասիրություն և վերլուծություն / «Կրթության մասին» ՀՀ օրենք, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք/
- ✓ **առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհման** ուսումնասիրություն և վերլուծություն /***նվազագույնը 1 առարկայի նկարագիր և թեմատիկ տրոհում***/
- ✓ **դասալսումների** իրականացում և լսած օնլայն դասերի մանկավարժական վերլուծություն ըստ տրված ձևաչափի ***/նվազագույնը դասախոսի վարած 3 դաս/: Դասի թեմայի շրջանակներում հավելյալ ինֆորմացիայի և առաջարկությունների պարտադիր առկայություն:***
- ✓ **օնլայն դասի /պարապմունքների/** համար համապատասխան դիդակտիկ նյութերի, PP ներկայացումների պատրաստում ***/նվազագույնը 2 դաս/:*** Դասի պլանի կազմում ըստ տրված ձևաչափի: Մասնակցություն առցանց դասավանդման գործընթացին:
- ✓ **օնլայն դասի /պարապմունքների**/ համար **նեթիկետի կանոնների մշակում /բուհի համար կամ դպրոցի համար/**
- ✓ **օնլայն դասի ընթացքում մանկավարժական իրավիճակների վերհանում և լուծման ուղիների առաջադրում /*նվազագույնը 1 իրավիճակ*/**
- ✓ **մագիստրոսական թեզի** հետ կապված գործնական աշխատանքների իրականացում և տվյալների վերլուծություն /օնլայն հարցում, օնլայն զրույց, օնլայն հարցաթերթիկի, անկետայի, թեստի կազմում և այլն/
- ✓ **ինքնավերլուծություն և ինքնագնահատում** /***swot վերլուծություն***/

- ✓ **ամփոփիչ էսսե**

○բոլոր ուսանողները պրակտիկային մասնակցել են, կատարել տրված հանձնարարությունները, ստացել դրական գնահատական:

## Ամփոփում

- **Ամբիոնի կողմից իրականացված աշխատանքները և հաջողված փորձի օրինակներ.**
  - ✓ Պրակտիկայի կազմակերպում, բազաների ընտրություն, ընթացիկ հարցերի կարգավորում, գործընթացի վերահսկողություն:
  - ✓ Պրակտիկայի իրականացման ձևաչափի փոփոխություն՝ անցում պրակտիկայի առցանց կազմակերպման գործընթացին:
  - ✓ Մանկավարժական պրակտիկաների /բակալավրիատ և մագիստրատուրա/ նկարագրերի, թղթապանակի, աշխատանքային պլանների, բաշխման նյութերի ստեղծում և վերանայում՝ ելնելով առցանց կազմակերպման պահանջներից:
  - ✓ Պրակտիկաների համար ստեղծված classroom էլ. հարթակների մշտադիտարկում, Google Meet տարբերակով աշխատանքների իրականացում:
  - ✓ classroom էլեկտրոնային հարթակում յուրաքանչյուր շաբաթվա վերջում ուսանողների կողմից կատարված աշխատանքների ամփոփ ներկայացում և ղեկավարների կողմից համապատասխան ուղղորդումներ:
  - ✓ Մանկավարժահետազոտական պրակտիկայի ընթացքում Google Meet տարբերակով ուսանողների կողմից իրականացրած դասավանդում:
  - ✓ Հետազոտական աշխատանքների իրականացում online հարցաթերթիկների միջոցով:
  - ✓ Մանկավարժության ամբիոնի գրեթե բոլոր դասախոսների ներգրավվածություն պրակտիկայի կազմակերպման գործընթացին:
  - ✓ Կիրառական պրակտիկան ներկայացնող PR տեսահոլովակի ստեղծում:
  - ✓ Բոլոր ուսանողների ակտիվ ներգրավվածություն և մասնակցություն:
  - ✓ Ամբիոնի նիստերում պրակտիկայի ընթացքի, առկա խնդիրների, բարելավման ուղիների մշտական քննարկում:

- **Դժվարություններ, խնդիրներ.**
  - ✓ Ընթացիկ աշխատանքների, պրակտիկայի փաստաթղթերի վերանայում և վերափոխում կարճ ժամանակամիջոցում՝ առցանց ուսուցման պահանջներին համապատասխան:
  - ✓ Հետազոտական աշխատանքների իրականացման ժամանակ միայն online հարցաթերթիկների կիրառության հնարավորություն /զրույցի, դիտման մեթոդների կիրառության դժվարություն և անհնարինություն/:

- ✓ Առերես մարդկային շփման բացակայություն տարաբնույթ աշխատանքների և քննարկումների ժամանակ:
- ✓ Տեխնիկական խնդիրներ կապված համակարգչի գործունեության, համացանցի հասանելիության և կապի ընդհատումների հետ:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Գ. Հարությունյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն:

**2. ԼՍԵՑԻՆ -** «Երեխան մարդ է և ընկեր» թեմայով քարոզների մրցույթի արդյունքների մասին:

**Լ. Պողոսյան** – Արդեն ավանդույթ դարձած «Երեխան մարդ է և ընկեր» թեմայով քարոզների մրցույթն այս տարի անցկացվեց օնլայն ձևաչափով: Չնայած ներկայիս պայմաններին՝ մասնակցության հայտ էր ներկայացրել 25 ուսանող, որոնց քարոզ-ուղերձներն ուղղված էին ծնողներին և ուսուցիչներին: Հանձնաժողովը առանձնացրել էր առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների այն 18 քարոզները, որոնք համապատասխանում էին նախապես տրված չափանիշներին: Մասնակիցների աշխատանքները գնահատող հանձնաժողովի կազմում էին պրոֆեսորներ Սրբուհի Գևորգյանը, Աիդա Թոփուզյանը, դոցենտներ Լուսինե Պողոսյանը, Արմենուհի Մանուկյանը, Լևոն Նազարյանը: Հանձնաժողովի քննարկման և գնահատման արդյունքում առաջին տեղը գրավեցին Սոցիալական մանկավարժության բաժնի մագիստրոս Անահիտ Ադամյանն ու Ռուսաց լեզվի և գրականության բաժնի բակալավրի ուսանողուհի Միլենա Եղոյանը:

Մրցույթի շրջանակներում առաջադրվել էին նաև անվանակարգեր, որտեղ ևս եղան հաղթողներ. «Հավատարմություն մանկության հիմնախնդիրներին» անվանակարգում առաջադրվեցին երկու ուսանողներ՝ Նարինե Ավետիսյանը (Սկզբնական կրթության ֆակուլտետ, Տարրական մանկավարժություն և մեթոդիկա բաժնի մագիստրատուրա 2-րդ կուրս) և Ալինա Եղիազարյանը (Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետ, Սոցիալական մանկավարժություն բաժնի մագիստրատուրա 2-րդ կուրս): «Ամենահուզիչ քարոզ» անվանակարգում առաջադրվեց Գոհար Խաչատրյանը (Տարրական մանկավարժություն և մեթոդիկա բաժնի բակալավրիատի 2-րդ կուրս), «Իրատեսական քարոզ» անվանակարգում՝ Գայանե

Խոեցյանը (Տարրական մանկավարժություն և մեթոդիկա բաժնի բակալավրիատի 4-րդ կուրս), «Հռետորական արվեստ» անվանակարգում՝ Կառլեն Նազարյանը (Բանասիրական ֆակուլտետ, Հայոց լեզու և գրականության բաժնի բակալավրիատի 3-րդ կուրս), իսկ «Ունկնդիրների համակրանք»-ին արժանացավ Պէթի Քիլէրճեանը (Տարրական մանկավարժություն և մեթոդիկա բաժնի հեռակա մագիստրատուրա 2-րդ կուրս):

Մրցույթում հաղթած մասնակիցները հնարավորություն ունեցան իրենց քարոզները ներկայացնել ‹‹Հաջողության բանաձև›› հաղորդաշարում, ինչպես նաև քարոզները տպագրվեցին ‹‹Մանկավարժական համալսարան›› թերթում:

Նշենք, որ մրցույթի բոլոր մասնակիցները կստանան հավաստագրեր:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Լ. Պողոսյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

**3.ԼՍԵՑԻՆ** - Ն. Մարկոսյանի ներկայացրած ‹‹Մանկավարժի պրակտիկ աշխատանքի ուղեցույց›› խորագրով ուսումնամեթոդական ձեռնարկի մասին: /Կարծիքները կցվում են/

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Ա. Թոփուզյան, Ն. Մարտիրոսյան, Գ. Աղուզումցյան, Ն. Կարապետյան, Ն. Մարկոսյան

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հանձնարարել Ն. Մարկոսյանին կատարել համապատասխան փոփոխություններ՝ հաշվի առնելով գրախոսների դիտարկումներն ու առաջարկությունները, որից հետո ձեռնարկը ներկայացնել հաստատման:

**ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ**

**ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ**

**26.06.2020թ.**

**Արձանագրություն Նո. 23**

**2019-2020 ՈՒՍ.ՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՀՈՒԼԻՍԻ 3-Ի ՆԻՍՏԻ**

**Օրակարգ**

1. <<Ընդհանուր Մանկավարժություն>> դասընթացի բակալավրական ծրագրի մշակման սկզբունքների հաստատման մասին:
2. Ընթացիկ հարցեր

   ա/ Նոր ուսումնական տարվա նախապատրաստման մասին:

   բ/ Հաշվետվությունները և ինքնավերլուծությունները ներկայացնելու մասին:

**1. ԼՍԵՑԻՆ -** <<Ընդհանուր Մանկավարժություն>> դասընթացի բակալավրական ծրագրի մշակման սկզբունքների հաստատման մասին:

**Ա. Թոփուզյան** – Առաջարկում եմ հաստատել <<Ընդհանուր Մանկավարժություն>> դասընթացի բակալավրական ծրագրի մշակման սկզբունքները, որոնց հիման վրա ամբիոնում ստեղծված հանձնաժողովը պետք է մշակի մեկ, երկու և երեք կիսամյակների համար նախատեսված <<Ընդհանուր Մանկավարժություն>> դասընթացի բակալավրական ծրագիր:

1. **Մեկ կիսամյակի** դասընթացը պետք է ունենա **32ժամ, որից 16-ը դասախոսություն, 16-ը գործնական:** Այս սկզբունքով պետք է կազմել **երկու և երեք կիսամյակների** ծրագրերը ևս: **Երրորդ կիսամյակը** ցանկալի կլինի հատկացնել մանկավարժական տեխնոլոգիաներին, մանկավարժական ժամանակակից հայեցակարգերին և կրթության ու դաստիարակության ժամանակակից հիմնախնդիրների քննարկմանը:
2. **Ծրագրի բովանդակությունը** պետք է հուշի թե որ ֆակուլտետի **որ մասնագիտացման** համար է տվյալ դասընթացը մշակված: ՈՒստի դրան պետք է նպատակաուղղված լինեն դասընթացի նպատակը, խնդիրները, դասախոսությունների և գործնական աշխատանքների և գնահատման ձևերի բովանդակությունը:

3. Յուրաքանչյուր դասախոսության հիմքում պետք է անդրադառնալ տվյալ թեմայի **պատմական զարգացման ճանապարհին և բնութագրել այն ժամանակակից ընկալման համատեքստում: Յուրաքանչյուր թեմայի մեջ անհրաժեշտ է արժևորել հայ մանկավարժների գաղափարները և բացահայտել դրանց օգտակարությունը այսօրվա դպրոցի և ուսուցչի համար:**
4. **Թեմատիկ տրոհումը** կատարելիս հիշել ,որ ընդհանուր մանկավարժության ծրագիր ենք մշակում և յուրաքանչյուր թեմա պլանավորելիս ելնել **մանկավարժական գործընթացի ամբողջականության և միասնականության սկզբունքից: ՈՒստի դաստիարակության և ուսուցման օրգանական միասնությունը, մանկավարժական և աշակերտական գործունեությունների անքակտելիությունը ապահովելու համար ցանկացած թեմա ներկայացնել երեք կարևոր բաղադրիչների՝ աշակերտ, ուսուցիչ, ուսումնա-դաստիարակչական առարկա միասնության վրա հենվելով, /Էդուկացիա/և՝կրթություն, զարգացում, ձևավորում համատեքստում/ռուբորսացիա/:**
5. **Դասախոսությունները** անհրաժեշտ է զուգակցել քննարկումներով, հարց ու պատասխանով, անհատական կամ խմբային աշխատանքով: Յուրաքանչյուր դասի վերջում տալ **ինքնաստուգման հարցեր, ինքնուրույն աշխատանքի համար հանձնարարություններ և գրականության ցանկ: Այս ամենը պետք է նպաստի վերջնարդյունքների ապահովմանը:**
6. **Գործնական** աշխատանքները մշակելիս օգտագործել բազմազան մեթոդներ և տեխնոլոգիաներ:Դրանք կարող են լինել **սեմինար, բանավեճ, դեբատ, սահիկահանդես, կլոր սեղան, դաս-դատ, դաս-մրցույթ/ քարոզ/, դերային խաղ, էսսե, ինքնավերլուծություն, հոդվածի գրախոսում և քննարկում, դաս-կոնֆերանս, հարցաթերթիկների կազմում – հարցումների անցկացում- վերլուծություն-քննարկում, մանկավարժական իրավիճակների վերլուծություն և այլն:** Դրանց բոլորի բովանդակությունը պետք է համապատասխանեցնել **ուսանողի մասնագիտությանը:** Ավելին, գործնական աշխատանքի յուրաքանչուր ձև պետք է **ապահովի առնվազն մեկ վերջնարդյունք:**

7. Յուրաքանչյուր կիսամյակում անհրաժեշտ է պլանավորել **միջանկյալ ստուգման երկու ձև:** Դրանք պետք է նպաստեն ուսանողների ստեղծագործականության և նախաձեռնողականության զարգացմանը, ընդգրկեն դասընթացում տեղ գտած ուսանողների ինքնուրույն աշխատանքի արդյունքները, ունենան հետազոտական բաղադրիչ և բովանդակությամբ համապատասխանեն ուսանողի մասնագիտությանը: Դրանք կարող են լինել **ռեֆերատ, թղթապանակ, սոցիոլոգիական հարցման արդյունքների վերլուծություն, նախագիծ, մանկավարժական պայմանների մշակում, մոդելի ստեղծում, մանկավարժական իրավիճակների նկարագրություն և լուծման տարբերակների ներկայացում, սահիկահանդեսի պաշտպանություն, թեմատիկ ռոլիկների ստեղծում** և այլն:
8. Մասնագիտությունից ելնելով անհրաժեշտ է պլանավորել մեկ գործնական աշխատանք՝ նվիրված **հանրակրթական դպրոցի որևէ աստիճանի ժամանակակից հիմնախնդիրների քննարկմանը:**
9. ՈՒնենալ հատուկ դասախոսություններ և գործնական աշխատանքներ,որոնք բխում են տվյալ մասնագիտությունից: Օր. Գեղագիտական դաստիարակությունը պետք է առանձին թեմա լինի արվեստի մասնագիտությունների համար, էկոլոգիական դաստիարակության թեման՝ֆիզիկա, բիոլոգիա, աշխարհագրություն և այլ մասնագիտությունների համար,պատմաբանների մոտ անհրաժեշտ է քննարկման հարց դարձնել պատմությամբ դաստիարակելու հիմնախնդիրը և այլն:
10. Հոգեբանների համար անհրաժեշտ է մշակել <<Մանկավարժական Հոգեբանություն>> առարկայի ծրագիր՝ մագիստրատուրայում կարդալու համար:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – 1. Հանձնարարել Լ. Ասատրյանին մշակել «Ընդհանուր մանկավարժություն» դասընթացի ծրագիր մեկ կիսամյակի համար, Լ. Պողոսյանին, Գ. Հարությունյանին և Ա. Թոփուզյանին, Ա. Մանուկյանին, Ա. Հովհաննիսյանին մշակել ծրագիր երկու կիսամյակի համար, Ն. Կարապետյանին և Գ. Հակոբյանին՝ երեք կիսամյակի համար:

2. Կատարված աշխատանքների 1-ին քննարկումը իրականացնել ս/թ սեպտեմբերի 10-ին:

**2. Ընթացիկ հարցեր**

**ա/ ԼՍԵՑԻՆ** - Նոր ուսումնական տարվա նախապատրաստման մասին:

**Ա. Թոփուզյան** – Հաջորդ ուսումնական տարին կազմակերպված սկսելու համար անհրաժեշտ է վերանայել 1-ին կիսամյակում դասավանդվելիք բոլոր դասընթացները՝ դրանց ամբողջականությունը և համապատասխանությունը ապահովելու տեսանկյունից:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Օգոստոսի 26-ին ներկայացնել 1-ին կիսամյակում կարդացվելիք դասընթացների էլեկտրոնային փաթեթները:

**բ/ ԼՍԵՑԻՆ** - Հաշվետվությունները և ինքնավերլուծությունները ներկայացնելու մասին:

**Ա. Թոփուզյան** – Խնդրում եմ պատրաստել 2019-2020 ուսումնական տարվա հաշվետվությունները և մեկ առարկայի ինքնավերլուծություն և դրանք ներկայացնել ամբիոն օգոստոսի 26-ին:

**ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՓՈՒԶՅԱՆ**

**ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՅԱՐԱՋՅԱՆ**

**03.07.2020թ.**